



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3953

281.6
5.25
1870

2001



281.6
5-25

ՀԱՄԱՌՈՑ

431
6

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՈՒԽՏԻ


ՄԵԶՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄԵԱՐԱՆՆԵՐԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

ա շ խ ա տ ա ի ռ ե ա ց

Սպեփանոս Ա-ազ Բահանայ Մանդլինեանց
Ուսուցիչ Կրօնադիտութեան և Եկեղեցական պատմութեան Ներսիսեան
Հոգևոր և Ազգային Գլխոցին Տփլիսայ:



ՈՒՅԻ—1870

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՆՏԻ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:

1007

11007

ՀՐԱՄԱՆՍԻ

Տ. Տ. ԳԻՈՐԳԵԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.



4971-50

1870

2012

Ն Ո Ւ Է Ր

Աշխատասիրելով երեք հասարակական և Կեդեցական պատմութիւն երկրագործական տարածուելու օրէն մինչեւ մեր ժամանակը, գրեցի և նորա համառօտ որպէս դասագիրք միջնակարգ ուսումնարաններէ մեզ Հայ աշակերտաց այս առարկայի ուսումն քեթեացնելու համար:

Յուսով եմ քե այս մեր աշխատութիւնն որպէս առաջնապատճառ քեւ ունենայ տեսութիւն ինչ՝ կընդունեն իմ հայրենակիցներն սիրով, որոց եր նուիրումեմ:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԻԻՆԵԱՆՅ:

2001

Ի 1 տեպտեմբերի 1869 ամի

Է Տ Է Է Է :

181

5015

1815

The following is a list of the names of the persons who have been
 appointed to the various offices of the Board of Directors of the
 Bank of the City of New York, for the term ending on the 31st
 day of December, 1885. The names of the persons who have been
 appointed to the offices of Cashier, Treasurer, and Comptroller
 are also given. The names of the persons who have been appointed
 to the offices of Directors are given in alphabetical order.

THE BOARD OF DIRECTORS OF THE BANK OF THE CITY OF NEW YORK

18054

THE BOARD OF DIRECTORS OF THE BANK OF THE CITY OF NEW YORK

1815

ՀԱՄԱՌՈՑ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ՎԻՃԱԿՆ ԱՌԱՔԵԼՈՅ

ԺԱՄԱՆԱԿ

§ 1. Հիմնադրութիւն քրիստոնէական եկեղեցւոյ:

Նրբոր Հին ուխտի եկեղեցին և նորա հետ ճշմարիտ հաւասան Աստուածապաշտութեան սկսաւ հետզհետէ պակասիլ Աստուծոյ ընտրած ժողովրդի մէջ, որ էր Հրէից ազգն, և Յուդայեան ցեղի իշխանութիւնն վերացաւ, այն ժամանակ ծնաւ խոստացեալ Փրկիչն, հեթանոսաց ակնկալութիւնն, բանն Աստուած, առնելով մեր բնութիւնը սուրբ կոյս Մարիամէն, անշիտութ և անբաժանելի միաւորելով իւր Աստուածութեան հետ, երեսուն տարեկան մկրտեցաւ և ապա յայանեց իւր անձը աշխարհին խոնարհութեան և հեղութեան ճանապարհով: Աստուածային վարդապետութեամբ՝ զանազան հրաշքներ գործելով և փրկարար չարչարանքով, խաչի վերայ մեռնելով, դերեզմանում թաղուելով և Աստուածապէս յարութեամբ աղատեց մարդկային ազգը դատապարտութենէ, դրաւ նոր ուխտի եկեղեցւոյ անշարժ հիմք, և մանելու ճանապարհ բաց արաւ իւր եկեղեցւոյ մէջ ոչ միայն Հրէից՝ այլ և հեթանոսաց համար: Եկեղեցին բովանդակեց իւր մէջ, ինքն լինելով նորա հիմն և զուխ, և անբաժան նորամէն մինչև աշխարհի վերջը: Իսկ Համբարձման ժամանակ յանձնեց Առաքելոց Եկեղեցւոյ շինութիւնը և տարածելը, իւր էակից և փառակից սուրբ Հոգւոյ առաջնորդութեամբ, զոր խոստացաւ ուղարկել ինն օրէն յետոյ, որ Չասակէն կանէ յիսուն օր:

§ 2. Քրիստոնէութեան տարածումն երուսաղէմում:

Վրիստոսի խոստմունքն կատարեցաւ Հոգւոյն սրբոյ իջնելով վերնատան մէջ Առաքեալներու և միւս միաբան հաւատացեալներու վերայ, որք էին 120 հոգի: Սոքա ամենքն լցուեցան շնորհքով զանազան լեզուներ խօսելու և հրաշքներ գործելու: Սոքա էին քրիստոնէութեան առաջին տարածողներն: Վրիստոսի եկեղեցին նախապէս հիմնեցաւ Արուսաղէմում, ապա Հրէաստանի քաղաքներում և զեղերում, և յետոյ Յեթանոսաց աշխարհներում: Պետրոս, առաջին քարոզութեամբ Հոգեգալստեան օրը դարձրեց դէպի Վրիստոս 3000 հոգի, և յետոյ Յովհաննէսի հետ բժշկելով մօրէն ծնած կաղը, միւս քարոզութեամբ դարձրեց 5000 հոգի:

§ 3. Եկեղեցին բաղկացած Հրէաներէն Պաղեստինայի և Սիրիայի մէջ:

Սուրբ Ստեփանոսի նահատակութենէն յետոյ անհաւատ Հրէայքն հալածումն վերկացրին Առաքեալներու և միւս հաւատացեալներու վրայ Արուսաղէմում. այն ժամանակ հաւատացեալներէն շատերն ցրուեցան Հրէաստանի և Սիրիայի կողմերը, որոց մէջ տարածեցին Վրիստոնէութիւնը: Փիլիպպոս սարկաւազ մկրտեց Սամարացիքը: Իսկ զՊետրոս և զՅովհաննէս ուղարկեց Արուսաղէմի Եկեղեցին այն տեղ, որք աղօթք անելով և ձեռք դնելով նոցա վերայ ստացան Հոգւոյն սրբոյ շնորհքը: Եղնպէս և ուրիշներն ևս հաստատեցին եկեղեցի Վամասկոսում:

§ 4. Պօղոսի դարձն:

Վամասկոսի եկեղեցին յառաջացաւ Պօղոսի դարձով, որ էր երկտասարդ ֆարիսեցի, սաստիկ նախանձախնդիր Մովսէսական օրէնքներին, և հալածող Վրիստոսի եկեղեցին: Պրնալով Վամասկոս քաղաքը քրիստոնէութիւնը ջնջելու հա-

մար, յանկարծ ճանապարհին փայլատակեց երկնքէն նորա վերայ այնպիսի անսովոր լոյս, որ ընկաւ զեանի վերայ ու կուրացաւ, և լսեց ահաւոր ձայն՝ «Սաւուղ, Սաւուղ, ընչն ևս հալածում զես», և կրկին լսեց ձայն. «Ես եմ Յիսուս, զոր դու հալածումես», : Յետոյ Տիրոջ հրամանաւ կանգնեցաւ, ու նորա հետ եղած մարդիքը տարան զնա 'ի Վամասկոս. ուր մկրտուելով Ենանիա Առաքեալէն (37 թ.) բացուեցան աչքերը: Վառնարով քրիստոնեայ այսպիսի հրաշքով, եղաւ յոյժ եռանդոտ քարոզիչ Աւետարանի, և մանաւանդ հեթանոսաց մէջ:

§ 5. Աստուծային Յայտնութիւնն հեթանոսները կոչելու համար:

Պետրոս Առաքեալն լինելով Յոսպէ քաղաքում, առանձնակի աղօթելու ժամանակ եղաւ նորան Աստուծային յայտնութիւն հեթանոսները կանչելու համար զէպի Վրիստոսական հաւատը՝ երկնքէն կախուած կտաւէ զամբիւղն օրինակով, որ լեքն էր զանազան դազաններով, անասուններով և թռչուններով, և երկնային ձայնն հրամայեց Պետրոսին մորթել զնոսա և ուտել:

§ 6. Եկեղեցին բաղկացած հեթանոսներէն կեսարիայում:

Հազիւ թէ աւարտեցաւ տեսիլքն, մինչ Առաքեալն տեսաւ իւր մօտ երեք մարդիք ուղարկուած Հռոմայեցի հարիւրապետ Աուռնէլիոսէն, որ էր Աստուծաձավախ և բարեգործ անձն, որ նա հրեշտակի խօսքով՝ խնդրեց Պետրոսէն զալ Աեսարիա, որպէս զն լսէ նորամէն հօգույ փրկութեան բան: Հողին սուրբ հրամայեց նորան զնալ աներկիւղ. և երբ որ Պետրոս սկսաւ քարոզել Աուռնէլիոսին, և նորա հետ եղածներուն Վրիստոսի անօրէնութիւնքը և փրկութիւնը հաւատով 'ի Յիսուս Վրիստոս, ամենքն էլ լցուեցան հօգուով սրբով և ապա մկրտեց:

§ 7. Եկեղեցին հեծանոսներէն Անտիրում:

Ապա Արուսաղէմի եկեղեցին լսեց, թէ Ստեփանոսի նահատակութենէն յետոյ ոմանք հաւատացեալներ ցրուած հաւածանքէն հիմնել են եկեղեցի և Անտիրում, ուստի ուղարկուեցաւ Բառնարաս, որ աւելացրեց այնտեղ հաւատացեալներու թիւը, և յետոյ Պօղոսի հետ միասին մէկ տարի աշխատեցան կարգաւորել այս եկեղեցին (39 Թ.), և Անտիրում ամենքէն առաջ ընկալան Քրիստոնէայ անունը:

§ 8. Պօղոս Առաքելի հաստատած եկեղեցիքն:

Անտիրում եկեղեցին հաստատելէն և բարեկարգելէն յետոյ, Պօղոս սկսաւ երեք ճանապարհորդութիւն քրիստոնէութիւնը տարածելու համար: Առաջին ճանապարհորդութիւնն արաւ Բառնարասի հետ (45 և 46 Թ.) և հաստատեցին եկեղեցիք Ախարոսի և փոքր Ասիայի մի քանի նահանգների մէջ: Արկորդ ճանապարհորդութեան ժամանակ բաժանեցաւ նորամէն Բառնարաս, և Պօղոս նախ այցելութիւն անելով իւր հիմնած եկեղեցեաց, կրկին հիմնեց եկեղեցիք Մակեդոնիայում և Յունաստանում: Արրորդ ճանապարհորդութեան ժամանակ՝ քարոզելով Ափետոսում երկու տարի աւելի, տարածեց Աւետարանը Ասիայի բոլոր խութեան մէջ. և յետոյ այցելութիւն անելով եկեղեցեաց՝ զնաց յԱրուսաղէմ (66 կամ 68 Թ.), և հապիւ թէ ազատեցաւ անհաւատ շրէից սպանուելէն: Հռոմայեցոց հազարապետն ազատելով զնա մահէն՝ ուղարկեց որպէս Հռոմայ քաղաքացի ՚ի Աեսարիա Փելլքս դատաւորի մօտ: Այս տեղ երկու տարի շղթաներով կապած մնաց բանտի մէջ. և յետոյ Փելլքսին յաջորդող Փետոսս դատաւորի առջև՝ Ագրիպաս թագաւորի ներկայութեան, և բողոքեց առ կայսր: Այս պատճառաւ ուղարկեցին զնա պահապաններով ՚ի Հըռոմ. ուր գտաւ շատ քրիստոնէայք, և երկու տարի քարո-

ղումքը նոցա տան մէջ, և զարձրեց մի քանիսը կայսեր տանէն: Պօղոս կոչվումէ Առաքեալ Էֆեսոսաց:

§ 9. Միս Առաքելքն և եօթանասուն աշակերտներն սկսեցին

առնել ճանապարհորդութիւն զէպի զանազան կողմեր քարոզելու Աւետարանը: Պետրոս քարոզեց Հռէաստանի, Պաղատիայի, Պոնտոսի, Փոփուզիայի, Ասպարդուկիայի, Պարսկաստանի և Ատրեստանի կողմերում: Թադէոս Հիմնեց եփեզեցի Ազեսիայում և Հայաստանում: Մարկոս՝ Աղէքսանդրիայում: Թօմաս քարոզեց Պարթևաց, Մարաց, Պարսից և ՚ի Հնդկաստան: Անդրէաս՝ Սկիւթացոց: Բարթուղեմէոս՝ Հայաստանում: Մարիամ Մարգարէնացի՝ Հռոմում: Այսպէս և միւսներն տարածեցին ամենայն տեղ քրիստոնէութիւնը հաստատելով իրանց քարոզութիւնքը արիւնով և չարչարանքով:

§ 10. Երուսաղէմի վերջին կործանումն, Հրէից անկումն:

Վրիստոնէութեան յառաջադիմութեան մեծ օգուտ եղև Արուսաղէմի կործանումն և Հրէից ցրուիլն զանազան աշխարհներում, որ կատարեցաւ համաձայն նախագուշակութեանց, ինչպէս Հին ուխտի մարգարէից, նոյնպէս և Վրիստոսի խօսքին: Հրէից անկմանը, ինչպէս կասէ Յովսէպոս Հրրէայ պատմաբան, նախընթաց եղան զանազան հրաշքներ և նշաններ, որք են, Ա.) Մարգարէութիւնն մէկ Յեսու անունով մարդու, որ չորս տարի առաջ աղաղակումքը, իսկ է Արուսաղէմին, աստարին և խաղախացոց. և վերջապէս, իսկ է և ինչ. և քարկոծ եղաւ Արուսաղէմի պաշարողներէն: Բ.) Պետտոս ասպիւն, որ ողջ տարին երևումքը Արուսաղէմի վրայ սրի նման: Գ.) Լայտն, ցերեկուայ նման՝ տեսնվումքը գիշերով տաճարում: Դ.) Պատանի Ժնոնէլք կովէն՝ որ տարել էին զոհի սեղանը Բաղարջակերաց տօնին: Ե.) Տաճարի արևելեան կող-

մի պղինձէ դռների ինքնիրան քայտեւն կէս դիշերին, որ քսան մարդ հազիւ կարող էին բանալ : Չ.) Երկեւն կառքերի և զօրքի օդի մէջ : Լ.) Սերջապէս Պենսեկոստէի օրը երբ քահանայն մտաւ տաճարը, լցուեցաւ աղաղակ շփոթի՝ քիւր-
 Վեհ սյս փեղէն :

Հրէից անկման երևելի պատճառներն էին մէկ կողմէն Հռոմայեցի դատաւորներն, որք արծաթասիրութեամբ և խստութեամբ չափազանց զրգռեցին ժողովուրդը, և միւս կողմէն ինքեանք Հրէայք, որք դուրս դալով համբերութեանէ դատաւորներու չարագործութեամբ, մանաւանդ վերջին դատաւոր Վրլրիոսի, և զօրով զրգռուած Ջիլօզներէն, ապստամբեցան ընդդէմ Հռոմայեցւոց, և նոյն իսկ ժամանակին թուլացրին զինքեանս ներքին երկպառակութեամբ :

Հրէից անկումն սկսաւ զանազան հարուածներով Հռոմայեցիներէն, բոլոր Պաղեստինիայի, Սիրիայի և Եգիպտոսի մէջ, և վերջացաւ Տիտոսի վախճանական քանդելովն Երուսաղէմը և տաճարը, և ժողովրդեան ցրուելով աշխարհի երեսին (70 թ.) :

Բ. ԹՇՈՒՆՈՒՌԹԻՒՆ ԼՈՒՍՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ .

§ 11. Գրիստոնէական եկեղեցւոյ հարածումն Հրէաներէն :

Հրէայք զրգռուած նախանձով և ստեղծութեամբ դէպի քրիստոնէութիւն, առաջին դարում միայն Պաղեստինայի մէջ երեք հալածումն եղաւ Վրիստոնէից վերայ :

Առաջին հալածումն եղաւ շուտով Հոգեգալստեան յետոյ Առաքեալներու վերայ (34 թ.) : Այս հալածման ժամանակ Առաքեալք երկու անգամ՝ բռնուեցան բանտում և վերաւորեցան՝ յետոյ ենթարկեցան և միւս հաւատացեալք ՚ի քրիստոս, և առաջին սարկաւազն Ստեփանոս քարկոծեցաւ :

Երկրորդ հալածումն հաւատացելոց վերայ արաւ Հերովդէս Եգիպտոս (44 թ.) : Նա զվստաց զՅակոբոս առաքեալ

Չ երեզեայ որդին: Չ Պետրոս առաքելալը բանտարկեց, և մը-տադիր էր սպանել միւս օրը, բայց տիրոջ հրեշտակն ազա-տեց զնա բանտէն:

Երբորդ հալածումն եղաւ Ըննա քահանայապետի օրօ-քը (62 Թ.): Եյս հալածմունքի ժամանակ նահատակեցաւ Երուսաղէմայ առաջին եպիսկոպոսն Յակոբոս Տեառն եղբայր:

§ 12. Հեծանոսաց հալածմունքի պատճառներն:

Հեթանոսներն հալածումէին Վրիստոսի եկեղեցին այն պատճառաւ, որ 1) նորա մէկ էին համարում Վրիստոնեայ-քը և Հրեայքը, զորս շատ էին ատում. 2) Վրիստոնեայք՝ զկայսր չէին կոչում աստուած, և չէին երզվում նորա ա-նունով, նոյնպէս չէին մասնակցում հասարակական զօսանք-ների, և ունէին իւրեանց դաղանի ժողովները. հեթանոսներն համարումէին զնոսա թշնամիք տէրութեան. 3) չնոստովա-նելով հեթանոսաց աստուածները, և ծածկելով իւրեանց Աստուածապաշտութիւնը՝ համարվումէին անաստուածներ. 4) քուրմերը՝ քրիստոնէութեան տարածման պատճառաւ՝ մեծ նեղութիւն էին կրում արդիւնքի և իւրեանց իշխանութիւ-նը պակսելու համար ժողովրդեան մէջ, անբաստանումէին քրիստոնէից վերայ:

§ 13. Հալածումն հեծանոսներէն:

Առաջին դարումը եղան երկու հալածմունք Վրիստոնէից վերայ:

Ներոն կայսր այրելով Հռոմը, որպէս զի աւելի գեղեցիկ շինէ, բայց և այնպէս վախենալով ժողովրդեան խռովութե-նէն՝ հրդեհի պատճառը ձգեց Վրիստոնէից վրայ. ուստի նախ Հռոմի մէջ, յետոյ դաւառներում հալածեց զնոսա ամենա-սաստիկ խտութեամբ՝ շարունակ 4 տարի մինչև իւր մահը:

Գոմեախանոս կայսր՝ անուանողն զինքն աստուած՝ հալա-ծեց քրիստոնեայքը, որք զնա չէին կոչում աստուած, չէին

երդվում նորա անունով, զՅիսուս Քրիստոս քարոզումէին
Թագաւոր Թագաւորաց, և սպասումէին նորա զպատեանը
յաշխարհ:

§ 14. Խնդրութիւն եկեղեցւոյ ազանդաւորներէն:

Արդէս առաքեալներու ժամանակ՝ նոյնպէս և նոցա յե-
տոյ երեւեցան ազանդաւորներ և հերետիկոսներ, որք աշխա-
տումէին հերձուած ձգել նորահաւատ քրիստոնէից մէջ. յո-
րոց զլեւաւորներն սոքա են. առաջին դարում՝ Ալեքսն Տոֆ, որ
համարվումէ նահապետ ազանդաւորներու, ծննդեամբ էր Սա-
մարացի: Սա մկրտեցաւ Փիլիպպոսէն. բայց երբ տեսաւ Թէ
Պետրոս և Յովհաննէս դրոշմելով տալիս են Հոգին սուրբ,
կամեցաւ կաշառքով առնուլ այն իշխանութիւնը. այլ երբ-
որ արհամարհեցին զինքը, ուրացաւ հաւատքը և սկսաւ մո-
լորութիւն քարոզել, Թէ ինքն երեւեցաւ Սամարիայում իր-
րեւ Հայր, Հրէաստանում իրրեւ Արդի, և օտար ազգերի մէջ
իրրեւ Հոգի. մերժումէր հին կտակարանը, ուրացաւ բարե-
գործութիւնը և յարութիւն մեռելոց, ու դրաւ հոգեկոխու-
թիւն: Ասումէր Թէ աշխարհքը հրեշտակներն ստեղծեցին:
Նորա հետեւողները կոչեցան Ալեքսնականք:

Ալեքսնիստ՝ Աշակերտ Սիմոն մոզի՝ բաժանումէր Յիսուսը
Քրիստոսէն, և համարումէր լոկ մարդ, և ասումէր Թէ երբ
Յիսուս չարչարեցաւ խաչ վերայ, Քրիստոս համբարձաւ եր-
կինքը: Սորա դէմ զրեց Յովհաննէս առաքեալ Աւետարա-
նը: Աերինթոս ևս զրեց Յայտնութիւն նորա Յայտնութեան
ընդ դէմ. և եղաւ զլուխ հազարամեայց, չարաչար մեկնելով
Յայտնութեան մթին բանը, Թէ արդարք «Թագաւորեսցեն
ընդ նմա հազար ամ», . զոր սուրբ Ակեղեցին նուրբով ջնն-
ջեց:

Ալեքսն. սա ուրանումէր Քրիստոսի Աստուածութիւնը և
համարումէր լոկ մարդ:

2 Գարում՝ Գնասպիլեանք. սոքա հետեւումէին Սիմոն մո-

զին և Աերինթոսին, և Վրիստոսի մարմինը համարումին առ աչօք և օղային:

Սաստիսանիսո՝ հեռեղ զհաստիկեանց:

Աստիսանիսո՝ Եգիպտոսի ասումէր թէ Վրիստոս անցկացաւ կուսի մարմնով, ինչպէս ջուր խողովակի միջով, և մկրտութեան ժամանակ միացաւ նորա հետ Յիսուս:

Սաստիսանիսո ընդունումէր երկու սկիզբն բարի և չար, և ըզՎրիստոս լոկ մարդ՝ և չարչարանքն առ աչօք:

Նոյեմիսո՝ Օգիստոսի Երրորդութիւնը ընդունումէր մէկ անձնաւորութիւն աստուածութեան միջ՝ շփոթելով անձինքը:

Յ Գարում՝ Սաբէլ Լիբէայի մէկ անձն էր զնում աստուածութեան միջ, և ոչ երեք, և մէկ անձը կոչումէր երեք անունով: Սորա ուսումն նզովեցին երեք ժողովում:

Պօղոս Եպիսկոպոս Սաճոսայի ուրանումէր Վրիստոսի աստուածութիւնը, և նորա հեռեղները կոչեցան Պասլիբէանք: Նորա ուսումն նզովեցաւ երկու ժողովում:

Մանէ Պարսիկ մոզութենէ եղաւ քրիստոնէայ և քահանայ. սա՛ կամեցաւ միացնել մոզութիւնը քրիստոնէութեան հետ, զինքը քարոզումէր մխիթարիչ սուրբ հոգի. Վրիստոսի մարմինը ասումէր առ աչօք, զնումէր երկու սկիզբն բարի և չար, ուրացաւ յարութիւն մեռելոց. նորա հեռեղներն կոչեցան Մանիքեցիք:

Գ. ՆԵՐՔԻՆ ԷՆՆԳԵՄԱՆՔՆԵՐ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ:

§ 15. Բահանապատուծիւն եկեղեցւոյ:

1) Եկեղեցւոյ քահանայութիւնն Առաքելոց ժամանակ բաժանվումէր երեք աստիճան, Եպիսկոպոսոս-Նիւն, Կահանայոս-Նիւն և սարկիսագոս-Նիւն: Ապիսկոպոսի իշխանութիւնն էր՝ ինչպէս և այժմ՝ ձեռնադրել և կարգել քահանայք, և սարկիսագոսներ, խրատել խրատուսել և դատել, և

խշխանութիւնն իւր վիճակը կառավարելու: Վահանայի պաշտօնն էր՝ ինչ որ այժմն է՝ քարոզել ժողովրդեանն և մատակարարել սուրբ խորհուրդները: Սարկա-աֆի պաշտօնն էր՝ առաջ հոգալ ազքատաց խնամարկութեան համար, և յետոյ ծառայել և սուրբ խորհրդի կատարելու ժամանակ:

Արկրորդ դարումը աւելացան ընկերացոյն-նեան կամ անագանոսի աստիճան, իսկ երրորդ դարում՝ կնասարկա-ագան-նեան, րոնասարկա-նեան և երրօնեցո-ցո-նեան:

§ 16. Արբազան խորհուրդներ:

2). Մկրտութիւնն էր առաջին ճանապարհ մտնելու Վրխտոսի եկեղեցւոյ մէջ: Առաքելոց ժամանակ նախապէս ուսուցանուակին հաւատքը մկրտութիւն խնդրողին՝ և կատարվում էր երեք անգամ՝ ընկզմելով երեկայն ջրում՝ տալով ամենասուրբ Արրորդութեան անունը: Յետոյ նոր մկրտուածն հագնուակը սպիտակ հանրէր՝ ճարտ-նեան նշան: Արրորդ դարում տալիս էին մկրտուածի ձեռքին ճեղքածո՞ս 'ի նշան հոգեւոր լուսաւորութեան, և համբարուակին Վրխտոսի հաշտութեան նշան, և զլինին կապուակին պսակ, որ մեք ասումենք նաբօս՝ յաղթութեան նշան:

Վրոշի խորհուրդը տալիս էին Առաքելք նոյն ժամին մկրտութենէն յետոյ, և կատարվում էր ձեռք զնելով: Բայց որովհետեւ եկեղեցին տարածուելով ամեն տեղ, դժուար էր Առաքելաներուն գտանուիլ ամեն տեղ, ուստի սահմանեցին մեռոնը, ինչպէս կ'զրէ առաջին դարու մատենագիրն Վիոնեսիոս Արխպագացի, որ նորամով կատարուի դրոշմի խորհուրդը:

Հարստո-նեան խորհուրդն կատարվում էր, 1) սուրբ զբքեր կարդալով, 2) հոգեւոր երգերով, 3) քարոզութիւնով, 4) աղօթքով, 5) հաց և զինի, զոր բերում էր ժողովուրդն սրբազործելու համար, 6) նուէրքի սրբազործելն էական բանով, 7) նորա բաժանելն ներկայ գտանուողներուն սարկա-

ւագներու ձեռքով, և 8) սորանէն յետոյ լինումէր հասարակաց սեղան՝ անուանեալ աֆապ—սիրոյ հաց:

Ապաշխարութեան խորհուրդն կատարվումէր հրապարակական խոստովանութեամբ, և յետոյ սահմանեցաւ առանձնական մէկ քահանայի մօտ: Ապաշխարութեան արտաքին նըշաններն էին, ծնրադրութիւն, գետնի վըայ ընկնիլ, արտասունք, պահք, աղօթք:

Պատկէ համար պահանջվումէր փեսայի և հարսի փոխադարձ համաձայնութիւնը. և ապա եկեղեցւոյ ներկայութեամբ օրհնումէր նոցա պսակը եպիսկոպոսն կամ քահանայն:

Վահանայութեան կոչման համար շատ սաստիկ էին փորձում քահանայացուի հաւատը, զիտութիւնը և վարքը. զնա ընտրումէր ժողովուրդն, և առաքելաբ կամ եպիսկոպոսք պահքով և աղօթքով՝ և ձեռք զնելով կատարումէին կարգը, յետոյ մտաւ մեռոնի զործածութիւնը, զոր առաքելաբ սահմանեցին՝ ինչպէս գրումէ Վիոնեսիոս Արիսպագային:

Վերջին Օթոման կատարվումէր երբեմն իւղով, երբեմն աղօթքով, և երբեմն իւղով ու աղօթքով հիւանդի վըայ:

3.) Հասարակաց Աստուածապաշտութիւնն սկսվումէր տէրունական աղօթքով. կարդումէին հին կտակարանէն մի քանի գլուխներ, և քիչ ժամանակէն յետոյ՝ առաքելական թըղթերը, և ապա եպիսկոպոսն կամ երէցն մեկնումէր ժողովրդեան կարգացածը. լինումէր երգեր երկու կողմէն, և վերջումը կատարվումէր խորհրդական ընթրիք—հաղորդութիւն:

4.) Աստուածապաշտութեան տեղերն էին, 1) Արուսաղէմայ տաճարն, 2) վերնատունն, ուր հոգին սուրբ իջաւ, 3) առանձին աներ՝ պատրաստուած Աստուածապաշտութեան համար:

5.) Աստուածապաշտութեան ժամերն էին՝ Առաւօտեան ժամերգութիւնն հասարակաց աղօթքի օրհնութեան կոչեցեալ. Արարչի ժամն, որ ժամանակ հոգին սուրբ իջաւ. Վերջերորդն՝ որ Պետրոս աղօթելով վերնատանը յայտնութիւն եղաւ հե-

Թանոսաց եկեղեցւոյ համար. Իններորդն՝ որ Պետրոս և Յովհաննէս զնուովն Նբրուսաղէմայ տաճարը, և կաղը առողջացրին. երեկոյեան և գիշերայն՝ որ ժամին կատարուովն և պատարաղը:

6.) Պահք. Առաքելական եկեղեցին միշտ պահուովք քառասնորդական պահք. Օատկէն առաջ. նոյնպէս չորեքշաբթի և ուրբաթ, ինչպէս այս երևումէ Առաքելական կանոններէն, և 2 կամ 3 դարու սուրբ Հարք խօսումնն նոցա վերայ. բաց յայամանէ առաջին քրիստոնեայք պահուովն երևելի գործ սկսելէն առաջ՝ ինչպէս ձեռնադրութիւն անելու ժամանակ և ըն:

7.) Տօնակատարութիւնք. Առաքելական եկեղեցին ունէր այս տօները. 1) Վրբեֆոսի յարութեան օրը, այն է կիւրակէ, որ բռնեց Հրէից շարաթ աւուր տեղը. 2) Նոր տիպի Օտֆէլ՝ ՚ի յիշատակ չարչարանաց և յարութեան Վրիստոսի. 3) Հոգեդալուստը. 4) Ծննդեան և Մկրտութեան տօնը, և 5) բաց յայտոցիկ՝ մարտիրոսաց վախճանի օրերը հանդիսաւոր կին եկեղեցւոյ մէջ:

8) Թաղման ծէս. Հրէայք և Հեթանոսք ունէին իւրեանց առանձին Թաղման ծէսեր. և միատեսակ կատարելու համար առաջին եկեղեցին սահմանեց կատարել հանդիսաւոր կարգ աղօթքով և պատարագով: Մեռելը լուանումէն ջըրով, պատանումէն սպիտակ կտաւով, երեսը ուղղումէն դէպի արևելք, Թաղումէն մարտիրոսաց գերեզմանների մօտ, և փոխանակ փող փչելու Հրէից և Հեթանոսաց պէս՝ երգումէն հոգևոր երգեր: Ննջեցեալն հանդստեան պաշտօնը սկսումէր արևի մայր մանելէն յետոյ, և շարունակվումէր ողջ զիշերը երգերով՝ ընթերցուածներով և աղօթքով, և վերջանումէր պատարագով՝ և հոգւոյ հացով: Միւս օրը կանայք զնուովն գերեզմանի վերայ, զոր կոչումենք այժ. Հրէական հօթն օր սպի փոխանակ սահմանեցաւ հօթն օր պատարագ, նոյնպէս երեսուն օր տրամութեան և Հեթանոսաց՝

որպէս Եղիպտացւոց, եօթանասուն օրի փոխանակ՝ քառասուն օր պատարագ ամբիժքներով, և տարելից՝ որ այժմ Թիֆլիզում կոչվումէ «ս-բէ սեղան»:

§ 17. Հաւատոյ ուսումն .

Եռաբերոց և նոցա յաջորդներու վարդապետութեամբ Եռաջին Եկեղեցին անխախտ և հաստատ հաւատումը, թէ 1) Եստուած մի է ըստ Եստուածութեան, բայց Երեք անձինք. Հայր, Արդի և Հոգի սուրբ. և սորա ապացուցութիւնն է Արար-Նի-նն, որ Յիսուսի Վրիստոսի պատուելով միբառումէին երեսայն յանուն Հօր և Արդոյ և Հոգոյն «ս-բէ» : 2) Յիսուս Վրիստոս է նախ քան զյաւիտեանս Արդի Եստուծոյ, բան Հօր, համագոյակից Հօր, նորամով ստեղծուեցան երեւելի և աներևոյթ արարածներն, և մեր փրկութեան համար իջաւ երկնքէն և ծնաւ սուրբ կոյս Մարիամէն, Խաչեցաւ Պոնդացի Պիղատոսի ժամանակ, և թաղեցաւ և Յարեաւ երրորդ աւուր, ըստ զրոց, և Համբարձաւ երկինքը, և զալոց է միւսանգամ դատել կենդանիքը և մեռելոցները: 3) Հոգին սուրբ է ճշմարիտ Եստուած, անսկիզբն և հաւասարապատիւ Հօր և Արդոյ, որոց մի թագաւորութիւն, մի բնութիւն, միարարչութիւն, մի պատիւ, մի փառք, մի երկրպագութիւն, անսկիզբն, անեղ, անվախճան, յաւիտեան :

Եռաջին դարու մատենագիրներն նոյնպէս ներկայացնումն վկայութիւնք, Հրեշտակները և սուրբները պատուելու համար, և աղբիւլ ննջեցելոց համար: Յուստինոս Չղ Չատագովութեան միջ ասումէ Հրեշտակները յայտնելու համար. «Մեք յարգեմք զՀայրն Եստուած, զԱրդին Եստուած, զզինուորութիւնս բարի հրեշտակաց, : Իրինէոս հաստատումէ սուրբերու պատուելն կոչելով սուրբ կոյս Մարիամ միջնորդ Եւաջի: Յուստինոս, Իրինէոս և Տերտուղիանոս յիշումն ննջեցելոց համար աղօթելը և նուիրարբերութիւնքը:

§ 18. Առաջին քրիստոնէից վարքն:

Առաջին քրիստոնէայք կրթուած առաքելական քարոզութեամբ և նոցա գործնական օրինակներով էին մէկ անձն որպէս հաւատոյ միութեամբ՝ նոյնպէս և հոգւով: Ազգայրսիրութիւնն էր թագաւորում միայն նոցա վերայ. չկար նոցա մէջ ազնիւ և ռամիկ, հարուստ և աղքատ, իմ ու քո. հաւատացեալք կոչվումէին եղբարք¹⁾ և աշակերտք²⁾, և ամենայն ինչէր հասարակաց³⁾: Սոքա ցուցանումէին բարոյականութեան այնպիսի գերագոյն պատկեր, և առաքինութեանց այնպիսի կատարելութիւնք, զորս հեթանոսներն համարումէին քրիստոնէական հաւատոյ պտուղ, որք են.

1) Հասարակորութիւն: Առաջին քրիստոնէայք հաւատը գերազանց էին համարում քան թէ իւրեանց կեանքը. հալածանքն. նոցա քարոզութեան արգելք չէր լինում՝ տանջանարանքներն՝ հարսանիք էին. նահատակութիւնքն՝ յաղթական հանդէսներ. մահ քրիստոնէութեան համար՝ գերազանց էր քան զկեանքը:

2) Աշխատութիւն աղօթի մէջ: Առաջին քրիստոնէից գլխաւոր պարապումն էր աղօթքն: Հասարակաց Աստուածապաշտութենէ զրկուելն մեծ ապարազողութիւն էր նոցա համար: Ամենայն գործ սկսումէին և վերջացնում աղօթքով. խաչակնքումէին երեսները տանէն զուրս դալէն նստելու, վերկենալու, քնելու, ուտելու, խմելու և ճանապարհ զնալու ժամանակ:

3) Աղջակոհութիւն: Հաւատացեալք ժողովելով իմիասին՝ թէ աղօթքի, թէ հասարակաց սեղանին և թէ միմեանց աները այցելութիւն գնալով՝ Աւետարանի պատուէրը—ծուռ աչքով նայելը մեծ զգուշութեամբ էին պահում: Աղջակո-

1) Գործ. Ա. 15.

2) Անդ. Զ. 2.

3) Անդ. Բ. 42—46:

հաւթիւնն էր միակ թաղաւոր այն ամենայն ժողովների մէջ : Ըստերն պահումէին կուսութիւն մինչև մահ. իւրեանց անձինքը համարումէին շողոյն սրբոյ տաճար, ուստի զոյշէին այն ամենայն պատճառներէն՝ որք կարող էին շարժել նոցա կրքերը :

4) Հնազանդութիւնն եկեղեցոյ հովիւներուն : Վասիկին քրիստոնեայք ամենամեծ յարգանք էին ցուցանում հողերը շովիւներուն, որպէս Առաքելոց փոխանորդներուն : Այր, հաւատարմութիւն, հնազանդութիւն էին նոցա յատկութիւնք : Այ մէկ երեւելի դործ չէին սկսում առանց նոցա խորհրդի և օրհնութեան : շողերականք ունէին իրաւունք վճարելու ամենայն վեճերը. իսկ անհնազանդներն եկեղեցւոյ իրաւունքին՝ մերժումէին եկեղեցական հաղորդութենէ իբրև անղեղջ յանցաւորներ :

5) Խնամարկութիւնն Գրիստոնէական սէրն առաջին դարերում երեւցաւ ոչ միայն հասարակաց սեղանով, որ կոչվումէր «բապ» այսինքն է «կրոյ հաց», ուր ոչինչ որոշումն չկար աղքատի և հարուստի, այլ մանաւանդ առանձին պահպանողութեան մէջ աղքատներու, անանկներու, որբերու, այրի կանանց, օտարականներու, զերեայներու, բանտարկեալներու և հիւանդներու և զանազան աստուածահաճոյ դործերի, որոց համար կար և սահմանած զանձանակ սկսած Առաքելոց ժամանակէն : Բաց ի այն խնամարկելի անձինքներէ, որ Արուսաղէմումն էին, այնպիսի սէր տարածուած էր և օտարասահման բնակիչներու վերայ՝ թէ՛ սովի ժամանակ և թէ՛ ուրիշ հարկաւորութեան պատճառաւ : Աղղղէոս կայսեր ժամանակ սով ընկնելով Հրէաստանում, Աշակերտներն ուղարկեցին իւրեանց ունեցածէն օգնութիւն : Սուրբ Աիպրիանոսի օրօք՝ Աարթաղինու հաւատացեալներն ժողովեցին մինչև հարիւր հազար մանկթ՝ Վուսիլացւոց եկեղեցւոյն օգնելու համար, որ հեթանոսք զերի էին արել շատերը : Այսպիսի աստուածահաճոյ որորմութենէ չէին զրկած և հեթանոսներն, որոց աղքատներն ստանումէին օգնութիւն : Ակեղեցին հանապաղ

խնամարկումը բանտարկեալները հաւատի համար. հաւատացեալքն վառուած քրիստոնէական սիրով շտապումին նոցա կարօտութիւնը լցնելու, տանումին նոցա համար տեղաշոր, հանդերձ ու կերակուր. մխիթարումին և քաջալերումին զնոսա ամենայն նեղութեանց համբերել Վրիստոսի անուան համար. նոքա չէին վախենում բռնաւորներէն, այլ աներկիւղ օգնումին, մարտիրոսներու հետ զնումին նոցա նահատակութեան տեղը, և նոցա թափած արիւնը ժողովումին ըսպունդով և կտաւով. մեծ հոգս ունէին նահատակաց մարմինները թաղելու, և նոցա մոխիրը՝ երբ այրումին՝ հաւաքելու: Այս օրինակ եղբայրութիւնն բղձած քրիստոնէական սուրբ հաւատէն՝ առաւել հանդիսացաւ ժանտախտի ժամանակ, որ օր ու զիշեր պահումին հիւանդները. այսպիսի դէպքերում շողեորականք լինումին աշխարհականաց օրինակ, ինչպէս ցոյց տուին գործով, երբոր Աղէքսանդրիայում սաստիկ կտորած էր անում ժանտախտն Պաղենթս կայսեր ժամանակ:

§ 19. Անպատական կեանք:

Թէպէտ Վրիստոնէութեան հալածանքի ժամանակ շատերն վարումին առանձնակի կեանք, որք կոչվումին Ասկետիք, այսինքն խստակրօններ կամ անձնուրայներ. սակայն անպատական կեանքն սկսաւ շոտմկական տէրութեան մէջ երբորդ դարում, և այն Ազգիպոսի աշխարհում, որի հիմնադիրն է Պօղոս Թերապեցի, որ 16 տարեկան հասակում Պեկոսի հալածանքի սկզբին՝ սիրելով միայնակեցութիւն առանձնացաւ մէկ այրի մէջ 60 տարի, որի կերակուրն էր արմաւ: Ապա Անտօն Թերապեցին՝ վաճառելով և բաժանելով ազքատաց իւր կայքը, առանձնացաւ մէկ անապատի մէջ, հաստատեց կրօնաւորական կեանք և դրեց կանոններ: Սոքա երկոքեան համարվումն սկզբնապատճառ կրօնաւորութեան կամ միայնակեցութեան:

05-1464

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՌԱՋԻՆ

§ 20. Հայաստանի առաջին լուսաորութիւնն և անկումն

52—302 Թ. միջոցն է 270 տարի:

Առաջին հիմնադիր Հայաստանեայց Եկեղեցւոյ է ինքն Տէրն մեր Յիսուս Վրիստոս, որ ստանալով Աբղար թագաւորի նամակը, որով հրաւիրումէր զնա զնալ իւր մօտ և բժշկել նորա հիւանդութիւնը՝ ուղարկեց նամակ և իւր անձեռագործ պատկերը, խոստանալով առաքել աշակերտներէն մէկը նորա ցաւը բժշկելու, և այսպէս զրաւ իւր Եկեղեցւոյ հիմը Հայոց աշխարհի մէջ:

Յիսուսի Համբարձմանէն յետոյ Հայաստան վիճակեցաւ թաղեոս առաքեալին, որ դալով Աբղարի մօտ յԱղեւիա քաղաքը, բերելով և կողամուխ Պեղարզը, քարոզեց Աւետարանը, բժշկեց թագաւորը և ուրիշ հիւանդները ցաւերէն, զարձրեց մեծ բազմութիւն զէպ ՚ի Վրիստոս. հիմնեց եկեղեցիք. և ձեռնադրելով իւր տեղ թագաւորի խոյրարար Աղղէն Ապիսկոպոս, ինքն զնաց Հայաստանի միւս աշխարհները Շաւարշան, Սիւնիք, Աղուանք և Ախտարիա. շինեց եկեղեցիք, ձեռնադրեց եպիսկոպոսներ, և կարգեց քահանայք, և հովուեց հօտը 17 տարի:

Թաղեոսէն յետոյ եկաւ Բարդուղիմէոս առաքեալ 65 թ. բերելով իւր հետ Աստուածածնայ պատկերը, զոր Յովհաննէս աւետարանիչ փորագրել էր փայտի վերայ, և սուրբ կոյսն օրհնել էր մահուան մօտիկ օրերում, և քարոզեց մեծ Հայոց մէջ, շատացրեց հաւատացեալ թիւը. հաստատեց և



կեղեցիք. ձեռնագրեց եպիսկոպոսներ և քահանայք. շինեց կուսանոցի վանք Տիգրիս գետի ափնում Անդուլարի մօտ, սուրբ Աստուածածնայ անունով, ուր դրաւ նորա հրաշագործ պատկերը, և կոչեցաւ Հոգեաց վանք :

Յուդայ թագէտս կամ Ղեբէոս առաքեալ երեք տարի քարոզութիւն անելով բազմացրեց եկեղեցիքը Հայաստանում:

Հայաստան աշխարհում քարոզեցին և Վրիստոսի եօթանասուն աշակերտներէն երկուսն, Աղեշէ առաքեալ Ուտի նահանգում, և նահատակեցաւ Ջարագան դաշտում 70 թ. որի մարմինը ձգեցին մէկ հորի մէջ, որ կոչվումէ այժմ Բոմէն:

Ստաթէոս առաքեալ նահատակեցաւ Սիւնեաց աշխարհում, Բաղք զիւղաքաղաքում, որի վերայ շինեցին վանք, և կոչվումէ նորա անունով Տաթևոս վանք:

§ 21. Թշուառութիւն եկեղեցւոյ Հայոց:

Երգարի մահէն յետոյ թագաւորեց նորա որդին Անանէ: Սա բաց արաւ կուստունները և հալածանք վերկացրեց քրիստոնէից վերայ, և նահատակեց Ղարբէ եպիսկոպոսը:

Սանատրուկ թագաւոր շատերը նահատակեց Աղեսիայում և ուրիշ տեղերում: նոյնպէս զթագէտս առաքեալ և իւր դուստրը Սանդրոպոս կոյս:

Երկրորդ դարում Երտաշէս Բի թագաւորութեան ժամանակ նահատակեցան Ոսկէանք, և ապա Սոսանէանք:

Երրորդ դարում հալածանք վերկացրեց Խոսրով Ա. թագաւորն, և շատերը նահատակեցան: Այս դարում նահատակեցան Սերաստիայի և Բասինի քաղաքներում Ասպարուսիսեան հինգ վկայք:

§ 22. Անապատական կիանք:

Վրիստոնէութեան տարածուելու օրէն զանազան ազգաց մէջ, նախապէս Հայաստանի մէջ հիմնեցաւ անապատական կիանքն:

Ոսկեանէ. որք կին հինգ ողիք Հռոմայեցի զե սպաննեը ուղարկուած Սանատրուկի մօտ, որք Թադէոս առաքեալն քարոզութեամբ ընդունեցին քրիստոնէութիւնը, և նոցա գլխաւորն Խրիստի կոչեցեալ ձեռնադրեցաւ քահանայ և ճգնվումէին Մադկեոյ սարի վերայ, կերակրուելով բանջարեղէնով, և նահատակեցան Արտաշէսի որդի Արտաւազդի ձեռքով 107 թուին :

Սոսիանէանէ, էին Արտաշէս Բ. թագաւորի կին Սաթի-նիկի աղգականներ, ողիք տասնևութն, աղղով Ալանք: Նոքա Սսկեանց քարոզութեամբ դարձան քրիստոնեայ, և ճգնվումէին Սուկաւէտ կամ Վօսսադաղ սասձ սարի վերայ, կերակրվումէին խոտեղէնով, և նահատակեցան Ալանաց Բառլահա զորավարի ձեռքով 130 թուին :

§ 23. Աստուածապաշտութեան տեղեր :

Արդարի մահուանէն յետոյ՝ թէպէտ կռապաշտութիւնն կրկին տարածեցաւ, և քրիստոնէութիւնն ընկնելով հալածանքի տակ, դադարեցաւ հրապարակական Աստուածապաշտութիւնն տաճարների մէջ, բայց ծածուկ կատարվումէր մատուռների, այրերի և խոր ձորերի մէջ. թէպէտև քրիստոնէից թիւըն սակաւ էր, սակայն հետքը չկտրուեցաւ և հասաւ մինչև սուրբն Պարիզոր Առևաւորիչ, ինչպէս ցուցանումէ Տրդատի հրովարտակը քրիստոնէից տանջելու համար :

§ 24. Եպիսկոպոսաց յաջորդութիւն :

Չնայելով հալածանքներին յարուցած քրիստոնէից վերայ՝ Ապիսկոպոսաց յաջորդութիւնն սկսած Թադէոս և Բարդուղիմէոս առաջին լուսաւորիչներէն, հասաւ մինչև սուրբն Պարիզոր երկրորդ Առևաւորիչ. զի Հայաստանի զանազան տեղերում, որպէս Ադեսիայում, Արտազում, Պողոթնում, Սերաստիայում, մանաւանդ Աեսարիայում, շարունակ մնաց եպիսկոպոսաց յաջորդութիւնն, ուրեմն անպակաս էր քահանայից թիւը, որպէս և հաւատացեալներու :

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՐԿՐՈՐԳ.

§ 25. Հայաստանի երկրորդ լուսաւորութիւնն, եկեղեցոյ ածին
եւ ծաղկին 302—428 թ. 126 տարի:

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ էր հեթանոս Անակ նախա-
րարի որդին Սուրեն Պաշլաւի ցեղէն, և Արշակունի թագաւո-
րաց ազգէն ծնաւ Վաղարշապատ քաղաքում 357 թ. և երբ
որ Անակի ցեղը կոտորեցին. նորա դայեակ Սովիա կին փախցը-
րեց զնա ՚ի Աեսարիա, և անդ մկրտել տուաւ ու կոչեց Գրիգոր.
սնաւ առաքինութեամբ և ուսաւ շեղենական դպրութիւն, և
ապա ամուսնացաւ և ունեցաւ երկու որդի Վրթանէս և Ա-
րիստակէս: Յետոյ բաժանեցաւ իւր կին Մարիամէն, ինքն զը-
նաց շում Տրդատի մօտ, որի հայր Խոսրով թագաւորին ըս-
պանել էր իւր նորա Անակ հայրն, որպէս զե հօր սխարտքը լցնէ
ծառայելով որդւոյն: Գրիգոր մնաց Տրդատի մօտ մինչև որ
թագաւոր եղաւ նա, ու շումէն վերադարձաւ նորա հետ շա-
յաստան 286 թ. և հասնելով Ակեղեաց դաւառի Արիզա
քաղաքը՝ իջան Գայլ դետի ավր. Տրդատ հրամայեց Գրիգորին,
որ Անահիտ կուռքի գլխին ծաղկէ պսակ զնէ. Սուրբն չկատա-
րելով թագաւորի հրամանը յայանեց իւր քրիստոնէութիւնը,
համարձակ քարոզելով զՔրիստոս, ուստի Տրդատ տանջել տը-
ւաւ զնա տասներկու տեսակ տանջանքով. երբոր այն սոսկալի
չարչարանքներէն ողջ մնաց սուրբ Գրիգոր, ձգել տուաւ զնա
Խորվիրապի մէջ, որ էր մահապարտներու տեղ՝ Արտաշատ
քաղաքում լի օձերով. որի մէջ մնաց տասնևհինգ տարի, կե-
րակրուելով մէկ պառաւ կնոջէն:

Այս ժամանակում՝ այն է 301 թուին շումայ կայսեր Ղի-
ոկղետիանոսի ձեռքէն փախան շոփախման կուսանքն, որ կայ-
սրբն ուղղումբ շոփախմէ կոյսը կին առնուլ իրան, և եկան բը-
նակուեցան Վաղարշապատ քաղաքում մէկ հնձանի մէջ: Տրդատ
խմանալով Ղիոկղետիանոսի նամակէն շոփախմէ գեղեցկու-

Թիւնը և Հայաստան դալը, գանել աուաւ զնա, ու ինքն էր կամենում պահուել նորա հետ. բայց նա ոչ համաձայնեցաւ. վասն որոյ սպանել աուաւ ինչպէս զՍիւսիմէ, նոյնպէս և Պայիանէ մայրապետը, և նորանց հետ երեսուն ու հինգ կուսանք: Այս պատճառաւ Աստուծոյ պատուհասն հասաւ Թագաւորի և Ղաղարշապատի բնակիչներու վերայ: Տրդատ բոլորովն դիւահարեցաւ և կատաղած բնկաւ շամբերի (զամիշլուղի) մէջ, իսկ ժողովուրդն մոլեղնեցաւ: Յետոյ Թագաւորի քոյր Խոսրովիդուխտի տեսիլքով, որին երազումն հինգ անգամ երևեցաւ հրեշտակ Աստուծոյ, հրամայելով հանել սուրբ Պարիզորը Խոր վերապէն, որ բժշկէ ամենքը, հանեցին սուրբ լուսաւորիչը. և նախ Թաղեց կուսանաց մարմինները, և տեսաւ երազ, որ Յիսուս Վրիստոս ոսկէ ուռը ձեռքին խիեց քաղաքի մէջ տեղը, և լուսաձև նկարեցաւ: Սուրբ Աջմիածին եկեղեցին: Ապա 65 օր քարոզելէն յետոյ բժշկեց Թագաւորը և բոլոր ժողովուրդը, և կրկին նորոգեց Վրիստոնէութիւնը Հայոց աշխարհում 302 թ: Այնուհետև Թագաւորն, սուրբն Պարիզոր և նախարարներն սկսեցին պտրտիլ Հայաստանի քաղաքները և գեղերը, քանդեցին կռատունները և ամեն տեղ կանգնեցրին տէրունական Խաչի նշանը, և այսպէս տարածեցաւ Վրիստոնէութիւնն Հայոց աշխարհում:

§ 26. Սուրբ Պարիզորի ձեռնադրութիւնն, Տրդատի և Հայաստանի մկրտութիւնն եկեղեցոյ բարեկարգութիւնն:

Հայաստան աշխարհն Թէպէտև բնկալել էր Վրիստոնէութիւնն, բայց ոչ մկրտուած էին և ոչ Թէ ունէին առաջնորդ: Տրդատ Թագաւորն Աստուածային յայտնութեամբ ժողովելով նախարարները և իշխանները՝ բնտրեց զսուրբ Պարիզոր Աուսաւորիչը Վահանայապետ և Առաջնորդ Հայոց աշխարհի, և մեծ պատուով ուղարկեց զնա ՚ի Աեսարիա Ապագովկացոյ քաղաք Ղևոնդէս պատրիարքի մօտ, որ թաղէոս առաքեալն յաջորդն էր ձեռնադրել զնա Վահանայապետ Հայոց աշխարհի

Համար: Վ. Լեօնդէս մեծ ուրախութեամբ կատարեց Տրդատի խնդիրը. որով նորոգեցաւ մեծ Հայաստանի մէջ Թադէոս առաքեալի յաջորդութիւնն, ընծայեց սուրբ Գրիգորին Յովհաննէս Արապետի և Եթանազինէս եպիսկոպոսի մատուցները :

Սուրբն Գրիգոր վերագտնալով Աեսարիայէն 'ի Հայաստան՝ քանդեց մնացած կռատունները, շինեց Տարօն գաւառում Մուշ քաղաքի մօտ սուրբ Արապետի վանքը, ուր դրաւ նորա մատուցներէն մէկ մասը, և գալով Վաղարշակերտ (Վլաշկերտ) քաղաքը, մկրտեց այն տեղ Նփրատ գետում զՏրդատ թագաւոր իւր ընտանիքով, և նախարարները և զօրքը, և մկրթութեան ժամանակ Աստուած յայտնի փառաւորեց սուրբ Հաւատի Ճշմարտութիւնը հրաշալի նշանով. վասն զի ջուրը դարիդուս գնաց, և լոյս իջաւ ջրի վերայ, ու կանգնեցաւ փունի պէս, և նորա վերայ տեսնվումէր սուրբ Խաչը, և այնչափ զօրեղ էր լոյսն, որ խաւարեցնումէր արեգակի ճառագայթները. և երբոր սուրբ մեռօնը թափեց ջրի մէջ, կրկին սքանչելիք եղաւ, զի սուրբ իւղն՝ ինչքան որ մարդիկ կային գետի մէջ՝ բոլորեց նոցա չորս կողմը. այս հրաշքի վերայ զարմանալով ամենքն էլ փառք տուին Աստուծոյ: Տրդատի անունը դրեց Յովհաննէս:

Յետոյ սուրբ լուսաւորիչն շրջելով Տրդատի հետ Հայաստանի ամենայն կողմերը մկրտեց զամենքը. բացեց ուսումնարաններ, ժողովեց քուրմերու որդիքը, և կարգեց ուսուցիչներ Յոյն և Ասորի լեզուների, որովհետև դեռ չկար Հայերէն գիր. և նորանցմէն արժանաւորները ձեռնադրեց եպիսկոպոսներ ու կարգեց գաւառների և քաղաքների վերայ տեսուչներ. որոց թիւը հասնումէր մինչի չորս հարիւր, խկ քահանայից և եկեղեցական պաշտօնէից թիւ չկար, որոց համար սահմանեց ապրուստ ժողովրդէն: Ընկնեց շատ եկեղեցիք, վանորայք, կուսանոցներ և հիւրանոցներ. սահմանեց տօներ:

Եւ այսպէս բարեկարգելով եկեղեցին՝ առանձնոցաւ ապա 331 թուին Աեպուհ սարի վերայ Մանեայ այրում, ուր և

վախճանեցաւ: Աորա սուրբ մարմինը գտան հովիւներն, և չլուծանաչելով թաղեցին այն տեղ. ու ժամանակ անցնելէն յետոյ գտաւ Աստուածային յայտնութեամբ մէկ ճղնաւոր Գառնիկ անուն, և թաղեցին Թորդան գեղում. ապա այն տեղէն տարան ՚ի Ալաղարշապատ:

• § 27. Սուրբ Լուսաւորչի յաջորդներն:

Սուրբ Գրիգոր Լուսաւորչին յաջորդեց նորա պատիկ որդին Աբեղայի 332 թ. զոր ինքն էր ձեռնադրել: Սա պայծառացրեց վանքերը և եկեղեցիքը, և սպանուեցաւ չորրորդ Հայոց Արքեպոստ իշխանէն, զոր անաչառ յանդիմանումէր մուրթեան համար: Սա դտանուեցաւ Աիկիոյ ժողովում, ու բերեց հաւատոյ հանդանակը, որի վերայ աւելացրեց սուրբ Լուսաւորչին «Իսկ մէք փառաւորեսցուք», — Սուրբն Աբեղայի Լուսաւորչին մեծ որդին նստաւ Աթոռեկոս 339 թ. և բերել տուաւ Արուսաղէմայ Սակարիոս եպիսկոպոսէն եկեղեցական բարեկարգութիւնը՝ ութն յօդուածով, և նոցա վերայ աւելացնելով իւր կանոնները մացրեց Հայոց Եկեղեցւոյ մէջ: Սա ձեռնադրեց իւր մեծ որդի Գրիգորիսը Աղուանից աշխարհի համար Արքեպիսկոպոս: Սորա միջնորդութեամբ Առտանդ կայսր նստեցրեց Տրգաթի որդի Խոսրովը թագաւոր Հայոց, և նորա մեռնելուց յետոյ նորա որդի Տիրանը: Սորա մահուանէն յետոյ նստաւ նորա որդին Յուսէի 355 թ. որ նահատակեցաւ Տիրանի ձեռքով չար Յուլիանոսի դիւական պատկերը եկեղեցում դնել չթողնելու պատճառաւ: Ապա նրստաւ Փառնէրսէի անունով մէկը հայրապետական աթոռին չորս տարի:

Ներսէս, որ կոչեցաւ մեծ, յաջորդեց Փառնէրսէի. սա էր սուրբ Լուսաւորչի թոռան թոռը, որ հաւանութեամբ Արշակ Թագաւորի և նախարարներու ընտրեցաւ Աթոռեկոս 364 թ.: Սա բարեկարգեց Հայաստան աշխարհը ըստ հոգեորականին և քաղաքականին, և ամենայն անկարգութիւնքը վե-

րացրեց ազգային ժողով գումարելով Աշտիշատ քաղաքում:

1) Արգելեց մերձաւոր խնամութիւնը մինչև հինգերորդ պորտը: 2) Արգելեց մեռելի վերայ հեթանոսաբար սուզը: 3) Շինեց հիւանդանոցներ, անկեղանոցներ, աղքատանոցներ, և որբանոցներ: 4) Շինեց հիւրանոցներ օտարականներու համար: 5) Շինեց վանքեր, և մենաստաններ: Այս ամենայն շինութիւնքը պահպանելու համար կարգեց սնունդ նոցա շրջակայ գաւառներէն: Շինեց նոյնպէս շատ վանօրայք և եկեղեցիք, որոց թիւը հաշիւումն մինչև երկու հազար, և ուսումնարաններ Յոյն և Ատրի դպրութեանց:

Այս ամենայն բարեմասնութիւնքը սուրբ Հայրապետի տեսնելով թագաւորն և նախարարներն՝ տուին նորան պատրիարկական պատիւ, և սահմանեցին՝ որ Հայաստանի պատրիարքն օծուի իւր եպիսկոպոսներէն, և այլ ևս չգնաց Անարիա, այս կարգը պահելու մէջ մինչև այսօր:

Մեծն Ներսէս զնաց Առստանդնուպօլիս և հաշտեցրեց Ալաղնախանոս կայսրը Արշակ թագաւորի հետ. և երբոր երկրորդ անգամ զնաց Արիոսեան Ալաղնա կայսեր մօտ նոյնպիսի դեսպանութեամբ, աքտրեցաւ մէկ անմարդարնակ կղզի. բայց երբ յաջորդեց Ալաղնսին թէոդոս, յետ կանչեց սուրբ հայրապետն, որ և զտաւ Առստանդնուպօլիս երկրորդ փեղերահան ժողովում ընդ դէմ հոգեմարտ Մակեդոնի 391 թ. և ապա կայսրն նորա խնդրանօք թագաւորեցրեց Հայաստանի վերայ Պապր իւր հօր Արշակի տեղ: Պապ յաճախ յանդիմանուելով սուրբ Հայրապետէն, մահադեղով հանդցրեց Հայոց աշխարհի լուսաւոր ճրագը—սուրբ Ներսէսը:

Յետոյ նստաւ Շահակ 384 թ.: Սա առաջինն եղաւ, որ ձեռնադրեցաւ իւր եպիսկոպոսներէն Սուրբ Լջմիածնայ տաճարում: Սորան յաջորդեցին Օլաւն և Եսպրապէս, որք պատմութեան համար չթողին արժանայիշատակ դործեր. բայց միայն առաքինիք էին:

Եսպրապէսին յաջորդեց Սուրբն Սահակ, որ էր մեծին

Ներսիսի որդին և վերջին Աթոռիկոս Առաւորչի ցեղէն: Վաջ զիտէր Հելլենական դպրութիւն, ունէր մէկ դուստր Սահականոյշ անուն, զոր ամուսնացրեց Համազասպ Մամիկոնեանի հետ, և իւր կնոջ մահէն յետոյ ձգնաւորական կեանք էր վարում. ունէր և վաթսուն աշակերտներ: 390 թ., Թաղաւորի և նախարարներու հաւանութեամբ օծաւ Աթոռիկոս, սակայն նախարարներն անմիաբան լինելով Խոսրով թագաւորի հետ, զլեւաւոր պատճառ ամբաստանութեան Շապուհ Պարսից արքայի մօտ էր նորա Աթոռիկոս ընտրելն, որի համար զրկեցաւ Խոսրով թագաւորութենէն, և Աթոռիկոսն մնաց արգելեալ Պարսկաստանում. և արձակեցաւ Շապուհի մահէն յետոյ, և դալով Հայաստան բարեկարգեց աշխարհը. նորոզեց Պարսիկներէն քանդած եկեղեցիքը, և վանօրայքը. շինեց Հռիփսիմեանց տաճարը, որոց մասունքը գտանելով արկեղի մէջ Առաւորչայ մատանիքով՝ չբացեց, և իւր մատանիքով ևս կնքեց:

Սուրբ Սահակի Ժամանակ փայլումէր խմաստութեամբ և առաքինութեամբ սուրբն Մեսրոպ, որ էր Տարօն գաւառի Հացեկաց զեղէն, վարժ յունական դպրութեան մէջ: Սա սուրբ Սահակի ձեռնադրութեամբ ճանապարհորդեց զանազան քաղաքներ երևելի ուսումնականներու մօտ հնարել Հայոց զիրը, բայց հնար չեղաւ. և ապա ապաւինելով յԱստուած, դտաւ հողոյն սրբոյ շնորհքով Հայերէն արիարեաի պակաս նշանագրերը, որ բոս Խորենացւոյն են եօթն ձայնաւոր տառերն, զոր բերելով Հայաստան բաց արին ուսումնարաններ, և տարածեցին Հայկական դպրութիւնը, ապա և արեւմտեան Հայաստանում Յունաց բաժնի մէջ:

Թէպէտ ազգային դպրութեան զիւսն էր մի զլեւաւոր երջանկութիւն, բայց նախարարներու անմիաբանութիւնն ևս էր մի զլեւաւոր ապարդողութիւն ազգի. որովհետեւ նոքա զըզուած լինելով Արտաշէս թագաւորի մղի գործերէն՝ խորհուրդ արին ամբաստան լինել Առամ Պարսից թագաւորի մօտ, վեր-

ցընկելու Հայաստանի Թագաւորութիւնը, և Պարսիկ մարզպաններով կառավարել: Խնդրեցին սուրբ Սահակէն միաբանիլ իւրեանց չար խորհրդին, և ստացան բացասութիւն. Թէպէտ շատ յորդորեց սուրբն Հեռի մնալ այնպիսի ազգակործան մտքերէն, բայց նախարարներն իւրեանց կամքը առաջ տարան, և Հայրապետի վերայ ևս ամբաստանեցին: Առում՝ որ այսպիսի դէպքի էր սպասում, մեծ սիրով կատարեց նախարարներու խնդիրը, զոկեց զԱրտաշէսը Թագաւորութենէ, և սուրբ Սահակը կաթողելոսութենէ, և երկու իշխանութիւնը յափշտակեց ինքը:

§ 28. Եկեղեցական Մատենագիրք:

1. Սուրբն Գրիգոր Առևսաւորիչ է առաջինն մեր եկեղեցական մատենադրաց մէջ. զրեց հոգելից ճառեր նորահաւատ ազգի համար, որք պարունակումեն քսան և երեք զլուս, և կոչվումէ *Յաճախապարտած*. Ճառերի իմաստն է աստուածաբանական, ոճն է պարզ, բայց կարօտի խորհրդածութեան: Այս գիրքն տպագրած է ՚ի Արտանդնուպօլիս և ՚ի Ալէնէտիկ: Բաց ի յաճախապատում գրքէն, գտանումենք Ազատանդեղոսի պատմութեան մէջ նորա միւս վարդապետութիւնքը, որք են աղօթքներ չարչարանքի ժամանակ, խօսակցութիւնք Տրդատ Թագաւորի հետ, և սքանչելի վարդապետութիւնն, զոր խօսեցաւ հնձանի մէջ 65 օրում, որ եթէ առանձին տպուէր՝ բաւական մեծութեամբ մի գիրք կլինէր:

2. Ագաթանգեղոս ինչպէս ինքն գրումէ պատմութեան յառաջաբանութեան մէջ, էր Հռոմայ քաղաքէն, քաջ գիտէր Հռոմէական և Յունական դպրութիւնքը. էր ատենագիրք Տրդատ Թագաւորի, և նորա հրամանաւ զրեց Հայաստանի լուսաւորութեան պատմութիւնը Առևսաւորչի ձեռքով սկսանելով խոսրովի պատերազմէն Սասանեան Արտաշի հետ, համառօտ անցնումէ մինչև սուրբ Գրիգորի խոստովանելը իւր քրիստոնեայ լինելն, և սպա աւելի հանգամանօրէն է գրում, մին-

չև Արխատակէսի ձեռնադրութիւնը որպէս ականատես պատմիչ։ Այս պատմութիւնն տպած է 'ի Աոստանդնուպօլսիս և 'ի Ալէնէտիկ։ Պատմութեան ոճն է հսկայական, պարզ և հանգամանօրէն, այլ թէ ո՞ր լեզուով գրեց՝ յայանի չէ, զի պատմութեան օրինակն Յունարէն ևս կայ :

Աոստանդնուպօլսի տպագրածի վերջում կայ կտած մի կեղծեալ Ղաշանց Խոզնի, որի շարագրութեան ոճն բոլորովին անհամեմատ է պատմութեան ոճին, և է պառաւական զրոյց և առասպելաբանութիւն, և ինչպէս երևում է, այն Պենիթոռներու գրած է տասնևհինգ դար յետոյ, իսկ Պէնէտիկ տպագրածում չկայ դաշանց թուղթ, որի ձեռագիրն գրած է ՉՊ թուականին շայոց և 1359 փրկչական թուին, և համեմատ է Փարիզու գրատան մէջ եղած ձեռագրին գրեալ ՉՊ. թուին շայոց և յամի Տեառն 1254, որք առաջ են քան զՊենիթոռներու գալն 'ի շայաստան :

3. Օւենի Եպիսկոպոս Ասորի մականուանեալ Պալակէ էր աշակերտ սրբոյն Պարիզորի Առսաւորչի, և նորամէն ձեռնագրած, գրեց նորա հրամանաւ պատմութիւն Ասորի լեզուով՝ Առսաւորչի գնալն 'ի Աեսարիա, ձեռնադրութիւնը, մասունքներն բերելը, Տարոնի պատերազմը՝ Ոճն է պարզ, և երեւի թէ թարգմանել է շայերէն Յովհաննէս Եպիսկոպոս Մամիկոնիէց, որի շարունակութեան գրողն է, և ոճն է համեմատ թարգմանութեան ոճին :

4. Բաղանդ կամ Բիւղանդ, կոչի և Փօսպոս Բիւղանդացի, էր ազգաւ Յոյն, և Ապիսկոպոս մեծին Աերսիսի Ժամանակ, տեղեակ շայոց լեզուի. գրեց պատմութիւն շայոց՝ սկսեալ Տրդատի որդի Խոսրովին մինչև Խոսրով Պ. և Ասպուրակէս Աթորիկոս կամ մինչև 390 թ.։ Այս պատմութիւնն Ագաթանգեղոսի գրածէն յետոյ կոչվում է երկրորդ, որ է նորա շարունակութիւն. բայց պատմութեան մէջ կան անհիմն և սուտ գրուածներ, որք չեն համեմատ միւս հարազատ պատմութեանց, վասնորոյ և պատմաբանն կոչվում է մեր մտքենագիրներէն շայ-

բախտ և երազապատրուճ: Խորենացին՝ որ սովոր է յիշել իւր պատմութեան աղբիւրներն, ամենեին չէ յիշում Բուզանդի անունը՝ որպէս երազապատում մարդոյ, և զուգէ սգէտ և թշնամի մարդիկ խանգարեցին հեղինակի բուն զրուածքը, որպէս և ուրիշներունը, ինչպէս զանկատում ֆարբեցին:

Բուզանդի պատմութեան մէջ չկայ ժամանակագրութիւն. բանից դարձուածքն յետ ու առաջ, կրկնութիւնք, կուտակութիւնք նոյնանշան բառից, ոճն անհարթ, այլ պարզ և ստորին՝ և ոչ միակերպ, որ յայտնի ապացոյց է նորա խանգարեալ լինելուն ըստ ֆարբեցւոյն:

§ 29. Վիճակ եկեղեցոյ Հայոց:

Թէպէտ քրիստոնէութիւնն տարածեցաւ Հայաստան աշխարհում սուրբ Վրիդոր Առասաւորչի և Տրդատ Թազաւորի ձեռքով, սակայն հիթանոսական մոլութիւնքն և սովորութիւնքն և սնապաշտութիւնքն դեռ ևս մնացել էին, և արեւապաշտութիւնն՝ սահմանադուխ նահանգներում և զաւառներում: Տրդատ զուելով նախարարներու հիթանոսական կեանք վարելէն, և ոչինչ ներգործելով նոցա մէջ նորա խրատներն և յանդիմանութիւնքն, թողաւ Թազաւորական դահր, և առանձնացաւ ՚ի Սեպուհ լեառն, ուր մահադեղով վախճանեցաւ: Սուրբն Արիստակէս սպանուեցաւ Արքեղայոս իշխանէն՝ զնա յանդիմանելու համար: Սուրբն Արթանէս նոյն պատժին էր ենթարկուած, եթէ՛ Ապիստինամութիւնն չէր պահպանել զնա: Տիրան Թազաւոր, համարեա թէ՛ կուսապաշտութիւն էր մուծանում՝ զնելով Յուլիանոս կայսեր դիւական պատկերը եկեղեցոյ մէջ, որի արդելելուն զոհ եղաւ սուրբն Յուսիկ: Արշակ Բ. հակառակ քրիստոնէական կրօնի իւր Ալիմպիտաշա կնոջ կենդանութեան ժամանակ՝ առաւ կին և զիւր հարս ֆառանձեմբ: Մեծն Աերսէս սպանուեցաւ Պապ Թազաւորէն մահադեղով: Արօնաւորներն էին Թափառական շքոյններ, և աշխարհականաց աներում կեցողներ, իսկ վանքերն ու մենաստան-

ներն դատարկացած: Աստուածպաշտութիւնն էր վերջին ազ-
քատ զրութեան մէջ, որ չունելով ազգային զիր՝ կատարու-
մէին Յոյն և Ասորի լիզուով, և ժողովուրդն մնումէր անգէտ
սուրբ կրօնին՝ չհասկանալու պատճառաւ կարդացածները:

Յիշենք այս տեղ Խորենացի ծերունի պատմաբանի ողբի
հատուածը, որով նկարագրումէ յայնժամեան ապարդղ շա-
յաստանի վիճակը այսպէս:

“Արդապետք տխմարք և ընդ ինքնահաճք անձամբ ա-
ռեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտ-
րեալք և ոչ հոգւով, ոսկեսէրք, նախանձութք, թողեալ զհե-
զութիւն յորում Աստուած բնակէ, և զայլք եղեալ զԼերեանց
հօտս զհշատելով:

“Արօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատ-
ուասէրք քան թէ Աստուածասէրք:

“Վիճակաւորք հպարտք, դատասացք, ղռաբանք, ծոյլք,
ատեցողք արուեստից և վարդապետական բանից, սիրողք վա-
ճառաց և կատակերգութեանց:

“Աշակերտք հեղք առ ուսումն և փոյթ առ ՚ի վարդապե-
տել, որք նախ քան զտեսութիւնն Աստուածարանք:

“Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաս-
տակք, ատեցողք, վնասակարք, փախչողք ՚ի ժառանգութենէ:

“Ջօրականք անիրաւք, ստապարծք, զննատեսցք, պղեր-
ղք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, համարարոյք ա-
ւաղակաց:

“Իշխանք ապստամբք, զողակիցք զողոց, կծլիք, կծծլիք,
ժլատք, ազահք, յափշտակողք, աշխարհաւէրք, աղտեղասէրք,
ծառայիցն համախոհք:

“Վատաւոր ամարդիք, սուտք, խաբողք, կաշառառուք,
անընտրողք իրաւանց, անհաստատք, հակառակողք: Աւ բար-
ձումն առ հասարակ յամենեցունց սիրոյ և ամօթոյ,:

Աւաղ քեզ շայաստան:

§ 30. Ներքին հանդամանք եկեղեցւոյ

1. Վարդապետութիւն հասարոյ:

Հաւատոյ վարդապետութեան ուսուցիչն Հայաստանեայց եկեղեցւոյ համարվումէ սուրբն Պրիզոր Առաւորիչ, որի ուսումն վաթսուն և հինգ աւուր մէջ տպած է Ազատանդեղոսում. իսկ Յաճախապարտ՝ զբքի մէջ զսանուսներ նոյնպիսի վարդապետութիւն :

2. Գլխաւոր դասնութիւնէ:

Նրեք անձնաւորութիւն յԱստուած անբաժանելի և անշփոթելի, Աստուածութիւն Յիսուսի Քրիստոսի և համադոյութիւն ընդ Հօր, Աստուածութիւն Հոգւոյն սրբոյ և բլղխումն 'ի Հօրէ հաստատուած են երկու տիեղերական ժողովներով՝ Նիկիոյ և Կոստանդնուպոլսի :

3. Յաւաքս Ամենաբնիկ երրորդութիւն:

Աստուածութեան երեք անձինք Հայր, Արդի և Հոգի սուրբ է մի բնութիւն, մի Աստուածութիւն, անփոփոխ իսկութիւն, մի արարչութիւն, մի բարերանութիւն, մի տէրութիւն և մի զօրութիւն :

4. Յաւաքս Յիսուսի Քրիստոսի:

Յիսուս Քրիստոս է բան Հօր և միաձին որդի Աստուծոյ՝ ծնեալ յեութենէ Հօր նախ քան զյաւիտեանս, և 'ի ժամանակին առաւ մարդկային բնութիւն սուրբ կուսէն, և միաւորեց իւր Աստուածութեան հետ Աստուածոյին անձին մէջ, և եղաւ Աստուած կատարեալ և մարդ կատարեալ, երկու բնութենէ միաւորեալ մի բնութիւն անշփոթելի և անբաժանելի և անփոփոխելի :

5. Յազատիչ և զոհի պիտի:

Յազատիչ անձնաւորութեան շողոյն Արքայ այսպէս է ուսուցանում սուրբ Առաքելին՝ «Շաւատաւք և ՚ի սուրբ շողին Աստուածեղէն, շողի սուրբ Աստուած կատարեալ, առանց առնելոյ, բղխումն մշանջնեանոր առ ՚ի շօրէ,» . այլուր. «Ոչ է շայր ծնեալ ուստէք, այլ որդի ծնեալ ՚ի շօրէ և ոչ արարեալ, և ոչ շողին սուրբ ստացեալ, այլ բղխեալ. . . որ է շայր միածնի Որդւոյ և բղխօղ շողոյն սրբոյ,» :

6. Յազատիչի մասնաւորութեան:

Այլազատութիւն միւս հաւատալեաց վերայ, որք են, մարդոյ անկումն մեղքի մեղ, յորմէ ինքն ըստ ինքեան ազատուել է կարող. շնորհի ներգործութեան մարդոյ մէջ է խորհրդական և զգալի, արդարացացումն, նախասահմանութեան, զօրութեան օրինաց և Աւարարանի, զօրութեան հասարոյ, յաւերեմական երանութեան և արանլանի, ներգործութեան քարի և զարհրչարակաց. սուրբերը օգնութեան կանգնել փրանումն սուրբ Առաքելի գրուածներէ մէջ:

Իացի վերև յիշատակածներէն շայաստանեայց եկեղեցին ընկալաւ սուրբ Առաքելէն եօթն փրկարար խորհուրդներն, զոր ունէին և միւս քրիստոնեայ եկեղեցիք:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

7. Ժողով ազարչարարոց Ա. յափ Տեառն 523:

Սուրբ Արիստակէս Ապիսկոպոս բերելով Նիկիոյ հանգանակ հաւատոյն ընդ դէմ մոլորութեան Արիստի՝ և քսան յօդուածով կանոններ եկեղեցական բարեկարգութեան՝ ընկալաւ սուրբն Պրիզոր Առաքելիչ, և ժողով գումարելով Ազարչարչատում 325 թ., աւելացրեց հանգանակի վերայ «Իսկ մէք փառաւորեսցուքք,» և կանոններէ վերայ այլ ևս երեսուն

յօղուածով կանոններ իւր նորահաւատ եկեղեցւոյ կարգաւորութեան համար :

8. Ժողով Աշտիշատոս և յոթ Տեառն 565:

Տրգատ թաղաւորի մահէն յետոյ քրիստոնէական բարեկարգութիւնքն սկսաւ սակաւ սակաւ թուլանալ, և հիթանոսական սովորութիւնքն հետզհետէ մտանել. ուստի մեծն Աերսէս Հայրապետ ժողով զումարեց Աշտիշատ քաղաքում 365 թ. և վերացրեց այն ամենայն անկարգութիւնքը, և սահմանեց ժողովի հաւանութեամբ քառասուն և երկու կանոններ ժողովրդեան բարեկարգութեան և առաքինի կենցաղավարութեան համար :

9. Ժողով Վաղարշապատոս և յոթ Տեառն 566:

Արշակ թաղաւոր և նախարարք Հայոց տեսնելով մեծին Աերսիսի ազդասիրական եռանդը եկեղեցւոյ և աշխարհի բարեկարգութեան համար՝ ժողով զումարեցին Վաղարշապատ քաղաքում 366 թուին. և միաբան հաւանութեամբ սահմանեցին, որ Հայոց Պատրիարքն որպէս հաւասարապատիւ միւս պատրիարքայ՝ ձեռնադրեսցի իւր եպիսկոպոսներէն և ոչ Աեսարիա յում: Վրաց և Աղուանից Աթոռիկոսներն լինին նորա ձեռացներբոյ, ինչպէս որ էին. իսկ Աերաստիա, Սելեւսին և Մարտիրոսաց քաղաքներում կարգեցին մետրապօլիտներ :

ԲԱԺԱՆՈՒԹՄՆ ԵՐՐՈՐԻ .

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՐՍԻՑ. ՀԱԳԱՐԱՅԻՈՑ ԵՒ ՅՈՒՆԱՅ
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՑ. 457 ՏԱՐԻ. 428—885 Թ.

Ը. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՐՏԱՔԻՆ ՎԻՃԱԿՆ.

§ 31. Եկեղեցւոյ պաշտպաններ եւ նորա թշուառութիւնը Յ-րդ դարում.

Հայոց նախարարաց անմիաբանութեան գործն իւրեանց հարազատ թագաւորի դէմ վախճան դրաւ Հայաստանի թագաւորութեան Արշակունեաց ցեղէն, եւ որպէս աշխարհն նոյնպէս եւ եկեղեցին ընկաւ կրակապաշտ Պարսից թագաւորի կառավարութեան ներքոյ 428 թ.: Այնուհետեւ եկեղեցին համբերեց զանազան հալածմունքների, զերութեանց, սպանութեանց եւ աւերածութեանց: Աստուած՝ որ խոստացաւ անբաժան լինել իւր եկեղեցիէն մինչև աշխարհի կատարածը, չթողաւ Հայաստանեայց եկեղեցին իսպառ կործանիլ ներքին եւ արտաքին մրրըրիկներէն, այլ յարոյց պաշտպաններ ամենայն ժամանակ հոգևորականներէն եւ աշխարհականներէն, որք դէմ կացան այն բարձրացած փոթորիկներին :

Ը.) Վ ռամ Պարսից թագաւորն ձգելով իւր ձեռքը Հայաստանի թագաւորական եւ հայրապետական իշխանութիւնքը՝ կարծեց զինքը հասած իւր նպատակին, եւ կարգեց Մարզպան աշխարհին Վ Եհմիհր — Շ ապուհ Պարսիկը. եւ որպէս զի թուլացնէ եւ կրօնը, նախ նշանակեց կաթողիկոսութեան պաշտօն կատարող Սուրմակ անօրէն երէցը, որ մէկ տարուայ միջոցում իւր անկարգ վարքով ատելի եղաւ ամենեցուն, մինչև եւ իւր պաշտպան նախարարներուն, եւ ինքն իրան հրաժարեցաւ պաշտօնէն. ապա նշանակեց Վ ռամ այն պաշտօնի մը 429 եւ 432 թ. ոչ թէ Հայ, այլ Ասորիք՝ Բրբելոյ եւ Շ մուշկ, որք պղբ-

Տեղին կաթողիկոսարանի սրբութիւնը լցնելով պոռնիկ կանայք, յախշտակեցին վախճանեալ և կենդանի եպիսկոպոսաց կայքերը և վեճակները. շատ դաւառներ մնացին առանց եպիսկոպոսի. եկեղեցւոյ բարեկարգութեան համար երբէք չէին հոգում. նոցա գործն էր ուտել, խմել և անառակութիւն, և մի և նոյն ժամանակ Շմուշէլ օգնական էր կարգած մարդպանին հարկերը ժողովելու, դատերը վճռելու և ուրիշ աշխարհական գործերի մէջ խառնուելու: Սորա ժամանակ սուրբն Սահակ և Մեսրոպ այցելու էին եկեղեցեաց և ժողովրդեան. բարեկարգութիւնը ամենայն տեղ հաստատուեցին. և երբոր մեռաւ Շմուշէլ 436 թ., նախարարներն զգ ջարով իւրեանց սխալմունքի վերայ՝ խնդրեցին սուրբ Սահակէն յանձն առնուլ կաթողիկոսութիւնը. բայց նա հրաժարեցաւ, և աթոռը մնաց դատարկ մինչև 440 թ., որ ժամանակ վախճանեցաւ կենդանի նահատակը Ռլուր զեղում, և թաղեցաւ իւր սեպհական զիւղումն Աշտիշատ, որի վերայ շինեցաւ հոյակապ եկեղեցի, և կարգեցաւ տօն նաւասարդի 30:

(Բ.) Յազկերտ արքայ Պարսից աստիկ թշնամի քրիստոնէութեան՝ մեծ հալածանք վերկացրեց Հայոց, Վրաց և Աղուանից աշխարհների վերայ: Սորա հրամանաւ նորա հազարապետ Միհրնեբէ, որ էր զլեւուոր բորբոքող նորա այս գործի մէջ, մի խայտառակ նամակ գրեց Հայոց վերայ 450 թ. իւրեանց մոլար դենի համեմատ. բայց Յովսէփ Աթողիկոս ժողով դումարեց Արտաշատ քաղաքում, և մէկ այնպիսի զօրաւոր պատասխան գրեցին, որի մէջ համարձակ խայտառակեցին նոցա դենը, մինչև անգամ Յազկերտի ատեանի մէջ կարդալով զայն, բոլոր Պարսիկ նախարարներն զարմացան այնպիսի համարձակութեան վերայ, և զովեցին պատասխանագրութիւնը: Յազկերտ կանչելով նախարարները՝ ի դուռն, և նոքա առ երեսս երկրպագեցին արեգախան, բայց Սուսեաց իշխան անօրէն Վասակէն՝ որ սրտանց ուրացաւ սուրբ հաւատը, և կարծեց թէ հասաւ իւր նպատակին. ուստի Յազկերտ արձակեց զնոսա և 700 մոգերով

ուղարկեց 'ի Հայաստան՝ դարձնել աշխարհը՝ 'ի կրակապաշտութիւն: Այս բանի մէջ գլխաւոր ներգործող, ծածուկ և յայտնի խորհրդակից մոզպետին էր հաւատուրացն Աստակ, որ էր և մարդպան, և սպասումը հասանել թագաւորութեան: Այնչափ Յազկերտ կարաց իւր ամենայն գործ դրած միջոցներով փնասել Հայաստան աշխարհին և եկեղեցւոյն, որչափ աւօրէն ուրացեալն իւր գործակից՝ թուլասիրտ և հաւատուրաց նախարարներով և երկու ուրացեալ երէցներով և երկու սարկաւազներով կարողացաւ ռամիկներէն շատերը ձգել իւր կողմը: Այնու ամենայնիւ Հայոց աշխարհն պաշտպան կացաւ ուղղափառ հաւատին: Յազկերտ կամեցաւ պատերազմով նուաճել, և նորա դէմ հանդէս եկաւ եկեղեցւոյ ախոյեան Արդան Մամիկոնեան իւր ուխտապահ նախարարներով և վաթսուն ու վեց հազար զօրքով. նոցա հետ միացան Յովսէփ Աթոռեկոս, Մահակ եպիսկոպոս Ռշտունեաց, Ղևոնդ երէց և շատ քահանայք և սարկաւազունք, որք յորդորումէին զօրքը հաւատի պաշտպանութեան համար, մանաւանդ երեւելի էր նոցա մէջ Ղևոնդ երէց:

Բացուեցաւ պատերազմն 451 թ. Յունիսի 2 Աւարայրի դաշտումը Տղմուտ գետի ափը. ուր երկու կողմէն կատաղաբար պատերազմումէին, և քաջ զօրավարն Արդան յայիշտակուած և արիացած սուրբ հաւատի սիրով՝ առիւծի նման յարձակած Պարսից վերայ մեծ քաջութիւնք գործեց, և ընկաւ պատերազմական դաշտում արևի մայր մանելու ժամին. և զօրքն մնալով անզրուխ՝ վախտան ամուր տեղեր: Հայոց կողմէն ընկան 1036 հողի, յորոց ինն նախարարներ էին. իսկ Պարսիկներէն 3544, յորոց ինն շատ երեւելի մեծամեծներէն էին:

3. Պերոզ և Վ. Աւաւա թագաւորք Պարսից մեծ հալածանք յարուցին եկեղեցւոյ վերայ, բայց Ահահան Մամիկոնեան ամենայն զօրութեամբ ընդ դէմ կացաւ՝ և քաջութեամբ պաշտպանեց եկեղեցին ազատելով կրակապաշտութիւնէ:

§ 32. Թշուառութիւն եկեղեցւոյ Երզ դարում :

Ղենշապուհ մարզպան Պարսիկ 548 Թ. սկսաւ շինել զանազան տեղեր ատրուշաններ, և ստիպել քրիստոնեայքը երկրպագանել կրակին, և շատերը նահատակեցան. և այս հալածումն դադարեցաւ նորա փոխուելով՝ Մովսէս Ղաթողիկոսի ինդիր ուղարկելով Խոսրով Թագաւորին :

§ 33. Թշուառութիւն եւ նուազումն եկեղեցւոյ Դրդ դարում :

Հագարացիք տիրելով բոլոր Պարսկաստանին, յարձակեցան 637 Թ. Տարօնի կողմը 18 հազարով . Թէպէտ Վասան Ամասարականի որդի Տիրան պատերազմեցաւ, բայց Սահուն Անձեւացեաց իշխանն անցաւ Թշնամեաց կողմը նոցա օգնութիւն, սակայն Տիրան սպանեց զնա, և ինքն անկաւ, և Հայոց զօրքն գոտորեցան, և հաղել Թէ մի քանինն ապրեցան: Պատերազմի տեղը կոչեցաւ Սորբ Բանակ, որովհետեւ հաւատի համար էր պատերազմն: Եպա զիմեցին Երարատեան աշխարհը, աւերեցին կողոպտեցին և ամէնքը սրի կերակուր տուին :

640 Թ. մեծ բազմութեամբ զօրքի կրկին զիմեցին Ղուին քաղաքի վերայ, և առան կշտացրին սուսերները սպանուածների արինով, որոց Թիւ շկար, և գերի տարան 35,000 հոգի:

Հայաստան աշխարհն, որ փոքր ժամանակ հանդստացել էր, և դեռ սղումէր առաջին հարուածների վերայ, վերստին զիմեցին Հագարացիք 646 Թ. և Թէոդորոս զօրավար Աշտուտի և Սմբատ կիւրապաղատ և միւս նախարարներն զնացին նոցա առաջ ընծաներով, և խոստացան հարկ տալ նոցա և դուրս գալ Յունաց հպատակութիւնէ: Առստանդին կայսր լսելով զայս՝ մեծ զօրքով յարձակեցաւ Հայաստան, բայց միջնորդութեամբ Ներսէս Ղաթողիկոսի անկաւ խաղաղութիւն :

Հագարացիք իմանալով այս լուրը, վառեցան բարկութեամբ՝ և 653 Թ. զիմեցին Հայաստան, սակայն Վասակ պատրիկ ձրկեց խաղաղութիւն, և 1775 հոգի պատանդ առնլով՝ դարձան

Վամասկոս. բայց երբ որ լսեց Ամիրապետն թէ Հայք կրկին մտան Յունաց իշխանութեան ներքոյ, կոտորել տուաւ բոլոր պատանդները, և Հայաստան ազատեցաւ նորա արշաւանքէն նորա մահուամբ :

Յուստինիանոս կայսր լսելով Հայոց մտանելը Հազարացւոց իշխանութեան ներքոյ, անթիւ զօրք ուղարկեց 686 թ. և ինչպէս Ասողիկ պատմումէ, կրակով և գերութեամբ քանդեցին 25 դաւառներ. և 8000 ընտանիք գերեցին ու վաճառեցին, և չբաւականանալով այսպիսի անգթութեամբ քրիստոնեայ թագաւորն՝ յաջորդ տարին ուղարկումէ 40,000 զօրք, որք ոսնակոխ արին անտէր աշխարհը :

Այս հարուածքէն յետոյ 689 թ. եկան տրեւելքէն այլազգիք, և մնացած շէն քաղաքները և գեղերը նոքա քանդեցին և այրեցին: Իսկ յաջորդ տարին 690 թ. ինքն Յուստինիանոս կայսր մեծ զօրքով զիմեց և առաւ պատանդներ, և 30,000 զօրք թողնելով վերադարձաւ :

Ամիրապետն ուղարկեց Ոստիկան Աբդուլայ անուէն իշխանը 693 թ.: Սա բռնեց Հայոց իշխանները՝ և յափշտակեց նոցա կայքերը, շղթայակապ արաւ Սահակ հայրապետը, և Սմբատ Իււրատեան Բաղրատունին և ուղարկեց Վամասկոս, և կողոպտեց Աբարատի եկեղեցիքը :

§ 34. Թշուառութիւն եկեղեցւոյ Հայոց Տրդ դարում:

Աբդուլայ՝ որ և Աբդլ—մէլք ամիրապետ ուղարկեց ոստիկան Ապլմ զօրավարը 704 թ. պատուիրելով կորուսանել Հայոց մեծամեծները: Սա նենգութեամբ զրեց անունները՝ և տարաւ Վախիջեանու եկեղեցին՝ որպէս թէ երգուելու հաւատարիմ հպատակութեան համար, ապա արտաքուստ փակեցին զոսները, և տանիքը քանդելով կրակ տուին եկեղեցին՝ ու այրեցին զամենքը. այնպէս արաւ և Խորամ քաղաքում՝ սպանելով զամենեսեան, և ոմանք մնացեալ նախարարներէն կախեցան վայաէ, և բոլորեցուն ընտանիքները գերի ուղարկեց ՚ի Վամասկոս:

Յետ այսորիկ 758 թ. Զափար Արևանսուր ամիրապետ ուղարկեց Հայաստան իւր եղբայր Արզրայի ծանր չարի ժողովել Ռազդատ քաղաքի շինութեան համար: Վարաւ հարկեր՝ ևս և եկեղեցեաց և եկեղեցականաց և անաստաւորաց վերայ, հըրամայեց վերցնել եկեղեցեաց դուխներէն խաչերը, կերել տըւաւ նոցա դանձարանները, և սուրբ անօթները վաճառեց Հըրէից վերայ: Արզրեից զիշերապաշտօնը և ուսումը: Հայաստանի հալածմունքն և հարստահարութիւնքն անդադար շարունակեցաւ մինչև 798 թ. և այս դառն ժամանակին նախարարներու անմիաբանութիւնն չդադարեց:

§ 35. Թուառութիւն եկեղեցւոյ Հայոց Գրդ դարում:

Խուզմայ ոստիկան կարգեալ 798 թ. սաստիկ ագահութեան պատճառաւ թշնամացաւ Յովսէփ Աթողեկոսի հետ, և յափշտակեց կաթողեկոսարանի գեղեցիկ և մեծ դաստակերտըն Արտաշատ:

Բուղայ Ոստիկան 850 թ. եկաւ անթիւ զօրքով Հայաստան, ցրուեց զօրքը ամենայն տեղ՝ և աւերեցին Հայաստան աշխարհը՝ հինգ տարի կալանաւորեցին երեւելի իշխանները. և ազնուականներու մեծ մասը, կոտորեցին և գերեցին շատերը, գեղեցիկները պահուակին. որոց շատերը նահատակեցան հաւատի համար, և շատերն էլ ուրացան տանջանքների երկիւղէն. իսկ տղեղները առ հասարակ կոտորուակին: Հայաստանը ջրուեցաւ իւր որդւոց արիւնով, և այս ամենայն անգթութեանց առաջնորդն էր Մմբատ սպարապետ, որպէս երբեմն Վասակ սիւնի. և Բուղայ չգտանելով այլ ևս շէն տեղ, տարաւ իւր հետ գերի իշխանները և Մմբատ ՚ի Ռազդատ քաղաք՝ Ամիրապետի մօտ. զորս ստիպեց ընդունել մահամետականութիւն, յորոց շատերն ուրացան, ոմանք արտաքուստ, և միայն երեքը մնացին հաստատուն, Ստեփանոս Աոն կոչեցեալ իշխանն Աղուանից՝ որ և նահատակեցաւ, Վրիդոր Մամիկոնեան՝ որ փախստեամբ պրծաւ, և Մմբատ սպարապետ՝ որ կապանքի մջ ապաշաւու-

մեր իւր առաջնորդ լինելը աշխարհի աւերման, վախճանեցաւ
բանտում, և կոչեցաւ Սփայ խոստովանող :

Բայ ի այն տառապանքներէ, նեղութիւններէ և հարա-
ծանքներէ՝ որոց համբերեց Հայաստանեայց եկեղեցին, կրեց և
քրիստոնեայ Յունաց կայսրներին և աղանդաւորներէն նոյն-
պիսի հալածանք և վիշտ կրօնական մասին :

1) Բայժոռմայ եպիսկոպոս Սճբնայ, աղանդաւոր Աեստո-
րական, սա տեսնելով Պարսից հպատակ քրիստոնէից նեղու-
թիւնը ուղղափառ հաւատոյ համար, մտածեց միջոցներ տա-
րածելու նեստորականութիւնը այն տէրութեան մէջ. ուստի
զնաց Պարսկաստան ներկայացաւ Պերոզ թագաւորին, ցուցեց
զինքը պաշտպան մոզութեան օրէնքին, և խորամանկութեամբ
ձգեց զթագաւորն իւր կողմը, թէ այն ժամանակ կարող է քան-
դել յարաբերութիւնը իւր հպատակ քրիստոնէից Յունաց
հետ՝ և մոզութեան օրէնքը ընդունել տալ, եթէ նախապէս
նեստորականութիւնը ընդունել հրամայէ ամենեցուն: Առաւ
հրովարտակ՝ և վերկայրեց Պարսկաստանի ու Ասորեստանի քը-
րիստոնէից վերայ մեծ հալածանք: Քրիստափոր Աթողիկոս
խմանալով Բարձունայի չարութիւնը՝ շրջաբերական թուղթ
գրեց իւր վեճակի հոգևորականաց և աշխարհականաց վերայ,
զգուշանալ նեստորի աղանդէն. թէպէտ Բարձունայ ձեռք
ձգեց այն թուղթը, և չարախօսեց Պերոզի մօտ, բայց ոչինչ
կարաց առնել: Ապա արքունի հրովարտակով եկաւ Մոկաց
աշխարհը սերմանել իւր աղանդը. և լսելով սուրբ Աղեշէ պատ-
մարան վարդապետի սրբութեան համբաւը, զնաց նորա տե-
սութիւն, և խնդրեց Վարդանանց պատերազմի պատմութիւ-
նը տալ իրան օրինակելու, և ստացաւ: Ապա շրջեցաւ խաբե-
բայութեամբ Վասպուրականի կողմը, քարոզելով իւր աղան-
դը. զոր լսելով Արժրունեաց մեծ իշխանն՝ Աերշապուհ, ու-
ղարկեց մահուան սպառնալիք, եթէ չհեռանայ այն աշխարհէն:
Բարձունայ սաստիկ բարկացաւ՝ և հանեց Աղեշէի պատմու-
թենէն Արժրունեաց տան վերայ գրուածները, երևի թէ զովա-

սանութիւնքը: Այն անօրէն աղանդաւորն գնաց Պարսկաստան, և շատ չարախօսեց Պերողի մօտ. որի պատճառաւ շատ նեղութիւն կրեց Արծրունեաց ազգն, և նորա հետ աշխարհն:

2) **Ալեքիոս** կաթողիկոս Ալքաց, Գուգարաց և Ազերացուոց, էր ազգաւ Ալքացի՝ Տաւաթեթի գաւառէն, գիտէր Հայերէն, Յունարէն և Պարսկերէն, ուսեալ էր Աողոնիա գաւառում Յունաց դպրութիւն, ընդունել էր Վաղկեղոնի ժողովը, և էր կաթողիկէի Արեւոյ, ուր ծածուկ էր պահում քաղկեղոնականութիւնը: Սա ձեռնադրեցաւ ըստ նախկին կարգին կաթողիկոս Ալքաց Մովսէս հայրապետէն. և սիսաւ տարածել իւր վիճակի մէջ քաղկեղոնականութիւնը: Օայս լսելով Արքահայր կաթողիկոս՝ զգուշացրեց գնա հեռի մնալ երկպառակութիւն ձգելուց եկեղեցւոյ մէջ. բայց նա գրեց ընդդէմը. և Արքահայր ժողով զումարեց ի Գուլին 596 թ. ուր նորովեցին Ալեքիոսը և նորա համախոհները, և արգելեցին, որ Հայք չունենան ոչինչ յարակցութիւն Ալքաց հետ թէ՛ խնամութեամբ և թէ՛ վաճառականութեամբ: Այս անցքը Ալեքիոս յայտնեց Մօրիկ կայսեր, որ դրաւ Յունաց բաժնի Հայոց վերայ առանձին կաթողիկոս Յովհաննէս անուն. Բագարան գիւղացի՝ և այսպէս բաժանեցաւ կաթողիկոսութիւնն երկու, որ պատճառեղաւ ազգային երկպառակութեան, և տեւեց մինչև Յովհաննիսի մահը: Իսկ կիւրիոն բաժանեց Ալքացիքը Հայոց եկեղեցւոյ հաղորդութիւնէ, միացաւ Յունաց հետ. և այնուհետև Ալքաց կաթողիկոսը ձեռնադրվումէր իւր եպիսկոպոսներէն:

3) **Ալք** կաթողիկոս սնուած և կրթուած էր կաթողիկոսարանի մէջ: Արք որ Հերակլ կայսր գնաց կարին՝ և դաւառական ժողով զումարեց Հայոց և Յունաց եպիսկոպոսներէն քաղկեղոնականութիւնը տարածելու մեծ Հայաստանում, և կայսեր հրաւիրանօք գնաց և Ալք կաթողիկոս մի քանի թերուսում վարդապետներով, և ընկալաւ Վաղկեղոնի ժողովը. որի համար ստացաւ կայսերէն պարգև Աողը գիւղաքաղաքի երրորդ մասը և բոլոր աղահանքը: Արք որ գարձաւ հայրապետն իւր

աթորը, միաբանութիւնն ըստ սովորութեանն ընկալաւ մեծ հանդիսով : Իսկ Փակակալ Յովհաննէս փիլիսոփոս ոչ միայն չգնաց ընդ առաջ, այլ և անարգեց զՀայրապետը Լևոնի տուժարը ընդունելու համար. վասն որոյ աքսորեցաւ ՚ի Մայրոյ վանք և կոչեցաւ Յօհան Մայրազոմեցի :

Եւ զք Վաթողիկոս եղաւ կրօնական երկպառակութեան պատճառ, մանաւանդ Յունաց բաժնում, ուր ընկալան ոմանք քաղկեդոնականութիւնը՝ և մեծ շփոթ ընկաւ, թէ և կրկին մերժեցին, բայց մեծ Հայաստանցիք չընկալան :

Գ) **Ստորագրեալ** կայսր երբ որ Գուլին քաղաքումն էր 647 թ., հրամայեց քարոզել Վաղկեդոնի ժողովը. և Հայաստանի անտէրութեան պատճառաւ ընկալան Վաթողիկոսն Ներսէս Շիւնօղ՝ և ուրիշ շատերն. և կայսեր գնալուց յետոյ Յունական պահապան զօրքն, և զօրավարք և քահանայք մեծ խռովութիւն ձգեցին, ստիպելով Հայերը յունական ծէսով վարուել. իսկ Վաթողիկոսն փախաւ Տայոց կողմը՝ թէոդորոս Ռշտունի զօրավարի երկիւղէն : Եւ յս կրօնական շփոթութիւնքն մի քանի տարի քաշեց, և թուլամորթ անձինք ոմանք միացան Յունաց հետ : Եւ յսպիսի կրօնական երկպառակութիւնք և հերձուած ընկաւ նոյնպէս Յունական զօրավարներէն, զորս թողել էր Յուստինիանոս կայսր 490 թուին հանդերձ զօրքով :

§ 36. Արժանայիշատակ անձինք Նրդ դարում :

1) Սուրբ Մեսրոպ՝ մականունանեալ Մաշտոց՝ էր Տարօն գաւառի Հացեկաց զիւղէն, աշակերտ մեծին Ներսիսի, և ապա թագաւորաց Ետնադպիր : Եւ լե քաջ զիտելով զնուորական կրթութիւնը՝ սիրելի էր զօրականներուն. այսպիսի ծառայութեանց մէջ անդադար պարսպումէր սուրբ զիրքը կարգալով. և այնպէս վառեցաւ հոգեւոր մասնի մէջ, որ թողաւ աշխարհը, և մտաւ վանք ձեռնադրուելով Երեղայ. ապա վարեց միայնակեաց կեանք Գողթան գաւառում : Յետոյ աստուածային ազդեցութեամբ առաջադրեց՝ որ երթայ և լուսաւորէ ազգը : Ուս-

տի ժողովեց աշակերտներ, կրթեց, և նոցա հետ շրջելով քարոզումէր զանազան տեղեր. ջնջեց մնացած աղանդները և աւերողապաշտութիւնը: Այս քարոզութեան մեջ մեծ ներդրութիւն էր կրում, որովհետեւ ինքն էր Աստուածաշունչ զիրք կարգացողը և թարգմանողը. վասն որոյ մտածեց զտանել Հայոց զիրք. և թէպէտ շատ փորձեր արաւ, բայց անօգուտ եղան: Ապա իմանալով սուրբ Մահակ հայրապետի բարեխառութեան համբաւը՝ եկաւ նորա մօտ, և յայտնեց իւր նպատակը. և զնա զտաւ ցանկացող առաւել քան զինքը, որ և ժողով զումարեց Աղարշապատ քաղաքում 402 թ. ուր մեր Առաջնապետ հ թագաւորն յայտնեց, որ ինքը երբեմն լինելով Միջագետք՝ մէկ Յարեւ երէց ասել է նորան, թէ՛ Վանիէլ եպիսկոպոսի մօտ կան Հայոց նշանագիրներն. զոր և բերել տուին. թէպէտ երկու տարի սկսան ուսուցանել, սակայն զուր անցին աշխատանքներն, որովհետեւ պակաս էին բոլոր ձայնաւոր գրերն: Սուրբն Մեսրոպ յանձն առաւ նոր աշխատութիւն կատարելու սկսածը. և մի քանի աշակերտներով զնաց Միջագետք Վանիէլ եպիսկոպոսի մօտ լրացնելու նշանագրերի պակասութիւնքը. բայց չկարացին, և թողնելով այնտեղ մի քանի աշակերտներ Ասորի և Յունական ուսման համար, ինքն զնաց երկու աշակերտներով Ադեսիայ Պղատոս հռետորի մօտ. այս ևս անօգուտ մնաց. վերջապէս զնաց Սամոսատ Հռոմիանոս Փիլիսոփոսի մօտ, այլ ի զուր: Աւ այսպէս մարդկային հնարքներէն ունայն մնալով, ապաւինեցաւ յԱստուած, և ընկալաւ ցանկութեան կատարումը տեսլեան մեջ: Այս եղաւ 406 թ.:

Արանելի վարդապետն բանում, Սամոսատում ուսումնարան, և ինքն թարգմանումէ Յօհան Ակեղեցացու և Յովսէփ Պաղնացու օգնականութեամբ Սողոմոնի Առակաց զիրքը, և՛ Աոր Ատակարանը. և ապա վերադառնալով ի Աղարշապատ ընկալան զնա թագաւորն, հայրապետն և ամենայն բաղմութիւնն մեծ ուրախութեամբ հանդերձ նորագիւտ նշանագրերով և Հայկական լեզուի թարգմանեալ մատենաներով, և այն օրը

կատարեցին տօն ու բախութեան: Բացուեցան ուսումնարաններ, և ծաղկեցաւ Հայերէն զպրութիւնն զարմանալի յառաջադիմութեամբ: Եպա հնարեց Ալբաց և Եղուանից զրերը: Յետոյ սուրբ Սահակի հետ զնաց Հայաստանի արեւմտեան երկիրը, որ Յունաց բաժնուէմն էր, և սուրբ հայրապետէն ղեսպան ուղարկուեցաւ Թեոդոս կայսեր մօտ. և իւր մեծ դիտութեան համար պատուեցաւ Լէյֆօսպօլիտոս կոչմամբ: Սա սուրբ Սահակի մահէն յետոյ կառավարեց հայրապետական աթոռը վեց ամիս, և վախճանեցաւ 441 թ., որի սուրբ մարմինը Ահասան Եմատունի իշխանն մեծ յուզարկաւորութեամբ հանդատացրեց Օշական զիւղումը, և շինեց նորա վերայ եկեղեցի, և գերեզմանն է Բեմի տակը: Աւ եկեղեցին Հայոց սահմանեց կատարել տօնը:

2) Սուրբ Յովսէփ Աթողեկոս Ալայոց Չորի Հողոցիմ զիւղէն, էր մին երեւելի աշակերաններէն սուրբ Սահակի և Մեսրոպի: Սա զանազան անկարգութեանց համար՝ որ նորոգ մտել էին եկեղեցւոյ մէջ, ժողով արաւ Շահապիկան քաղաքում. դարձեալ արաւ ժողով եպիսկոպոսներէն և նախարարներէն Երտաշատ քաղաքում, ուր զրեց պատասխանին Յազկերտի թրղութին. այս ժողովի մէջ նախնի խորհրդակցութեամբ թուղթ դրեց փոքր Թեոդոս կայսեր վերայ խնդրելով նորա օգնութիւնը Պարսից զէմ: Վարանաւորեցաւ սպա և ուղարկուեցաւ երեք ընկերներով Պարսկաստան, ուր և նահատակեցաւ 354 թ.:

3) Ղևոնդ երեց Անանեղեցի՝ մին յառաջադէմ աշակերաններէն սուրբ Սահակի և Մեսրոպի. սա առաջինն զէմ կացաւ Մողպետին Ընգղ զիւղաքաղաքում Ծաղկոտան գաւառի բոլոր ուխտիւ, և փայտերով հալածեցին Պարսիկները, և ամենայն տեղ ոտքի կանգնեցրեց ժողովուրդը ընդ զէմ՝ կրակապաշաներուն. և ուր ուրեք շինել էին կրակատուններ, ամենքը կործանեցին, և շատ մողեր սպանեցին: Վատանուեցաւ և մեծ պատերազմի մէջ Ալարդան զօրավարի հետ, և իւր քարոզութեամբ քաջալերեց զօրքը պաշտպանել ուղղափառ հաւատը և եկեղեցին.

և յիսոյ Ալասակի չարութեամբ ուղարկուեցաւ Յովսէփ Աթողիկոսի և միւս հոգեւորականաց հետ Պարսկաստան. ուր ըզհաւատացեալ կալանաւորները քաջալերումէր. և ընկալաւ նահատակութեան պսակը իւր ընկերներու հետ: Հայոց եկեղեցին կարգեց տօն հանդերձ նորա ընկերներով Ալեոնդեանց անունով: Նա հոգւոյն սրբոյ ազգեցութեամբ գուշակեց ուրացեալ Ալասակի մահը, ասելով նորան. «Աթէ դու կենդանի քո գլուխը ուսերիդ վերայ տանիս Հայաստան, ապա Տէրը ինձ հետ չէ խօսել»:

Է) Ղալա Աթողիկոս՝ աշակերտ սուրբ Սահակի և Մեւրոպի՝ քաջավարժ շէլենական դպրութեան մէջ: Նորա ժամանակ դեռ ևս կային Հայաստանի մէջ ատրուշաններ, և նախարարներէն ոմանք և ռամիկ բազմութիւնն պաշտումին կրակը: Սուրբ Հայրապետն յորդորումէր զնոսա հեռի մնալ սնտոխ պաշտամունքներէն. և տեսնելով նոցա անդեղ ծութիւնը, ուխտապահ նախարարներու խորհրդով դեսպան ուղարկեց Ալեոն կայսեր մօտ 470 ԹՎ. խնդրելով եկեղեցին ազատել Պարսկական բռնութենէ. սակայն չտացաւ օգնութիւն ինչ. ուստի անձաբողեալ՝ սկսաւ բանիւ և զրով յանդիմանել ուրացեալները, մանաւանդ նոցա մէջ երեւելի ուրացող Ղադիշոյ Խորխոռունին. և այս անօրէնը ամբաստանեց զնա Պերոզ արքայի մօտ, թէ նա է արդելք մոզութեան օրէնքի յառաջ գնալուն. և երանելի Աթողիկոսն աքսորեցաւ ի Պարսկաստան, զրկուելով իշխանութենէն. և թէպէտ վերադարձաւ իւր հայրենիքը, բայց առանց հայրապետական իրաւունքի:

Ծ) Քրիստափոր Աթողիկոս Արծրունի պահեց իւր հօտը նեստորական աղանդէն, որ նորա ժամանակով մտել էին աղանդաւորներն Հայաստան, որոց գլխաւորն էր Քարծումայ եպիսկոպոս Եղեւիտ: Ղրեց թուղթ ամենայն տեղ ոչ միայն իւր վիճակի վերայ, այլ և Պարսկաստանի, Ասորեստանի և Խուժաստանի քրիստոնէից վերայ, զգուշացնելով զամենեսեան. թէպէտ Քարծումայ ձեռք բերելով նորա նամակը, չարախօսեց Պերոզի մօտ, սակայն ոչինչ յաջողութիւն գտաւ:

6) Յովհանն Գանդակունի էր մին երևելի աշակերտներէն մեր սուրբ Թարգմանիչներու, որ այնչափ մեծանուն զովեցաւ իմաստութեամբ և սրբութեամբ, մինչ զի 75 տարեկան օծին զնա Աթոռակոս 480 թ.։ Սա զեղեցիկ բարեկարգելով աթոռ՝ վայելչացուց եկեղեցին և անոնադրութիւններով և ժամերդութեան աղօթքներով, քարոզներով և շարականներով։ Վաջալերեց զմեծն Աւհան Մամիկոնեան և զօրքը Աստուածային օրհնութեամբ, որ քաջութեամբ յաղթեցին Պարսից արքային։ Յետ մեծի յաղթութեան զամենքը ժողովեց յեկեղեցին, ու փառաւոր ատենաբանութիւն խօսեցաւ Աստուածային ըսքանչեւեաց վերայ՝ օրհնելով իշխանները ու բոլոր ազգը։

Վեցերորդ դար

7) Մովսէս Բ. Աթոռակոս Աղիվարդեցի էր իմաստուն և ազգասէր, նորա կաթողիկոսութեան տասներորդ տարին ըացաւ մեծ շրջանն 552 ամաց, և խախտուելոյ պատճառաւ Ջասկի տօնի տուճարական չափն (սորա վերայ չենք խօսում, որ տուճարագէտներու զործն է.) որ ի սմին կախուած են միւս տէրունական և սրբոց տօնակատարութիւնքն, ուստի 552 թ. ժողովեց տուճարագէտ և զխտուն անձինք, և ուղղեցին տուճարի սխալները, և զրին կարգ տարեկան տօների տուճարին. և այնուհետև ոչ ևս կարօտացան հետեւիլ ուրիշ ազգերին տօնակատարութեան միջ։ Այս թուականն կոչվում է Արգայն թուական, և է թուական տօմարի նորոգութեան։ Մովսէս աշխատեց մաքրել Հայաստանը կրակապաշտութենէ, և հանգրեց Պուին քաղաքում կրակը։ Սորա ինդրանքով փոխեց Խոսրով Թագաւորն զՎենչապուհ մարդպանը, և տուաւ կրօնական ազատութիւն։ Հալածեց և Յուլիանիտ երևութական աղանդաւորները։ Չեւնադրեց 580 թ.։ Արաց կաթողիկոս քաղկեդոնիկ Աիւրիոն քոր եպիսկոպոսը, որ եղաւ պատճառ բաժանման Արաց եկեղեցւոյ Հայոց մութենէն, և վախճանեցաւ 594 թ.։

Եօժներորդ դար.

8) Թողիկ ճգնաւոր վանահայր կարգեցաւ 601 Թ. Գլա-
կայ վանքի: Այս վանքն՝ որ կոչվումէ Իննասնեան կամ Մշո-
տարէ Արարայէր, իւր հիմնարկութեան օրէն Լուսաւորչի ձեռ-
քով էր Ասորի կրօնաւորներու ձեռքին, որի առաջին վանա-
հայրն էր Օկնոր Գլակ կարգուած Լուսաւորչէն, ուր աստու-
ածապաշտութիւնն կատարվումէր Ասորի լեզուով: Արբոր վա-
նահայրական իշխանութեան հասաւ Թողիկ, սկսաւ բարեկար-
գել. և լինելով նախանձախնդիր հայրենի լեզուին, արտորեց
վանքէն բոլոր Ասորի կրօնաւորները, և նոցա անդ կարգեց 400
Հայ կրօնաւորներ, և աստուածապաշտութիւնն սկսաւ Հայկա-
կան լեզուով կատարել: Այս բարի համբաւն տարածեցաւ,
և Յունաստանէն եկան չորս ճգնաւորներ, իսկ Սահաստանէն
երեք, որ իմիասին բնակեցան անապատում վանքի մօտ, և կե-
րակրվումէին բանջարեղէնով միայն, որ և կոչեցան Խոտածարակոյ,
և նահատակեցան Խոտրով Թագաւորի քեռորդի Միհրանի
ձեռքով, զորս տօնումէ Հայոց եկեղեցին:

9) Կոմիտաս Աթողիկոս Արագածոտն գաւառէ, էր խո-
հեմ, գիտնական և սրբակեաց անձն: Սա առաջ էր սուրբ Հր-
ոխիսիմէի Փակակալ: Արբոր նստաւ հայրասպետական աթո-
ռին, շինեց այն վանքը հիւքէն տաշած քարով, որ առաջ փոքր
էր և մուժն. և դառաւ սուրբ Հոխիսիմէի գերեզմանը կնքած
Լուսաւորչի և սուրբ Սահակի կնքով, զորս Համարձակեցաւ
քանդել, այլ իւր կնիքն ևս դրեց, և տապանը կանգնեցրեց
բեմի տակը գմբէթայարկ շինուածով, հիւսիսային խորանի որմի
մօտ: Ապա քանդեց սուրբ Լջմիածնայ փայտաշէն գմբէթը, և
շինեց կոփածոյ քարով: Նա և արաւ շատ շինութիւնք և բարե-
կարգութիւնք, և սիրելի եղաւ ազգին, և վախճանեցաւ 625 Թ:

10) Ներսէս Գ. Աթողիկոս՝ մականուանեալ Շնորհ էր
Տայոց գաւառի Իշխան դիւղէն: Սա նորոգեց սուրբ Սարգսի
այրած եկեղեցին Գուին քաղաքում՝ Հաղարացի զօրքէն: Յե-

տոյ Խորվիրապի վերայ շէնեց եկեղեցի Լուսաւորչայ անունով ,
 և Վաղարշապատ քաղաքում մեծ և հոյակապ եկեղեցին սուրբ
 Գրիգորի մերձ յԵջմիածին, և հիմքը ձգելու ժամանակ դրաւ
 չորս սինեբրի հիմունքների մջ Լուսաւորչայ մի քանի մա-
 սունքները անկորուստ պահպանութեան համար. իսկ պատու-
 ւական զլուխը դրաւ տապանակի մջ՝ և զետեղեց սեղանի առ-
 ջիւ։ Եւ յն եկեղեցւոյ չորս կողմը պատեց մեծ և ամուր պարիսպ,
 և նորա մջ շէնեց քարէ սենեակներ միարանից համար, և նո-
 րա մօտ հիւրանոց ուխտաւորներու համար. տնկեց այգիք և
 բուրաստաններ, և հանեց ջուր Վասաղ զետէն նոցա ջրելու
 համար։ Ե ինեց նոյն քաղաքում և ուրիշ եկեղեցի Աստուա-
 ծածնայ անունով . և այսչափ շինութեանը համար կոչեցաւ
 Ե ինոյ։ Սա զիտնական Բարսեղ վարդապետի ձեռքով , որի
 մականունն էր ճ'ն, ընտրեց և որոշեց Եւրականի երգերը, որ
 այն ժամանակ շատացել էին, և երկաքանչէր դասերը զանա-
 զան էին երգում անհամեմատ միմեանց, և շարականը կոչեցաւ
 ճ'նընդիւր. որով և վերացաւ եկեղեցւոյ այս անկարգութիւնը։
 Սա զեջեցրեց Առստանդ կայսեր բարկութիւնը, որ մեծ զօրքով
 պաշարել էր Գուին քաղաքը. ուր կայսեր քահանայքը պատա-
 րագ մատուցին, և Աերսէս իւր եպիսկոպոսներով հաղորդեցաւ
 տերունական մարմնոց և արեան. որով ծագեցրեց ազգի մջ
 խռովութիւն, որպէս քաղկեդոնիկ. և երկիւղ կրելով Թեոդո-
 րոս Ուշտունի նախարարէն այսպիսի դործողութեան համար,
 փախաւ Տայոց աշխարհը, և նորա մահէն յետոյ դարձաւ իւր
 աթոռը՝ և հալածեց քաղկեդոնականները։

Աերսէս Աթողեկոսի միջնորդութեամբ Մաւիէ ամիրա-
 պետն կարգեց զԳրիգոր Մամիկոնեանը Պատրիկ Հայոց աշխար-
 հի, և ինքն փախճանեցաւ 661 թ.։

11) Սահակ Գ. Աթողեկոս Չորափոր զեզէն։ Սորա օ-
 րերն անցան թշուառութեանց մջ Հազարացւոց և Յունաց
 յարձակմունքներէն, և Երազայ ոստիկան բռնեց Աթողեկոսը
 և Սմբատ Բուրառեան սպարապետը՝ և կապանքով ուղարկեց

Մի րապեաի մօտ Գամասկոս : Բայց Սմբատ յեա փախաւ ի
 Հայաստան, և կայսեր օգնութեամբ հալածեց Հայաստանէն
 Հագարացիքը, և այս պատճառաւ Մահմատ Ոգրայ սպարա-
 պետ պատրաստեցաւ յարձակուել Հայաստանի վերայ, իսկ Մա-
 հակ Վաթողիկոս իմանալով զայս՝ հրաման խնդրեց Մահմէտէն
 դնալ նորա մօտ, և հասնելով Խառան քաղաքը հիւանդացաւ :
 Չգալով իւր մերձ վախճանը՝ աղաչանքի թուղթ գրեց նորա վե-
 րայ Արաբերէն, որ չմնաս, Հայոց աշխարհին, և հրամայեց սար-
 կաւագնեերուն՝ որ մեռնելէն յետոյ նամակը դնեն աջ ձեռքի
 մէջ. և մեռաւ 703 թ. : Մահմատ լսելով նորա մահը՝ հրամա-
 յեց չթաղել մինչև իւր դնալը, և մօտեցաւ մեռելէն, և ողջոյն
 տուաւ իւր լեզուով՝ Ալլա՜մալէ+ : Այն ժամանակ մեռելն իւ-
 րև կենդանի բարեն առնլով՝ երկարեց ձեռքը և տուաւ թուղ-
 թը : Այս գէպքի վերայ սարսափած զօրավարը առաւ կնքեալ
 նամակը, կարդաց ու կատարեց նորա խնդիրը, գրեց շուտով նե-
 րողութեան հրովարտակ Հայոց նախարարներու վերայ, և ապա
 հրամայեց՝ որ մեծ պատուով և Հագարացի զօրքով տանեն
 սուրբ Հայրապետի մարմինը Հայաստան թաղելու, նմանապէս
 ազատեց բոլոր գերի ընկած Հայերը : Յովհաննէս Վաթողիկոս
 պատմաբան այսպէս է ասում նորա համար. « զմեռելութիւն նո-
 րա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւն,
 և ի սաղրելոյ աղօթից նորա փրկութիւն մեծ ծաղեաց աշխար-
 հին մերոյ, » :

Ուժերորդ դար :

12) Յովհաննէս Օճնեցի էր աշակերտ փիլիսոփայ Թէո-
 գորոս Քոթինաւորի, և գերագոյն գտանուեցաւ ուսման մէջ
 քան զամենեսեան, որ էին նորա ժամանակակից, և կոչեցաւ
 փիլիսոփայ կամ Էմասպասէր. քաջ տեղեակ Աստուածարանական
 և արտաքին զիտութեանց, յաջողակ քերթողական արհեստի
 մէջ, պերճախօս հռետոր, և առաւելեալ յոյժ փիլիսոփայական
 ուսման մէջ : Սա և անձին կազմուածքով էր գերազանց, ըստ

ներքին մասին՝ մեծահոգի և պատանձն, բաղմահանձար և լայնախորհուրդ, խոնարհամիտ և խողաղասեր, իսկ ըստ արտաքին մասին՝ վայելչահասակ և լայնաթիկունք, շքեղազեմ՝ և փառացի, մարմինը ծածկած ունէր խոշոր խարազնով, և նորա վերայ շքեղ հանդերձ հագած, և խարտոցով փոշիացրած ոսկին խառնելով անուշահոտ իւղի հետ օծումէր ծաղիկալ մօրուսը, որ մինչև զօտին էր իջանում, ու տեսնողներուն յոյժ պատկանելի :

Սա նստելով հայրապետական աթոռին՝ մեծ խնամք տարաւ հօտի վերայ, վերացրեց ամենայն անկարգութիւնքը, որ մտել էին հոգևորականաց և աշխարհականաց մէջ : Ալ լիթ ոստիկանի ձեռնտուութեամբ հալածեց Պաւլիկեան ազանդաւորները, որ բուն դրած էին Հայաստանի մի քանի տեղերում : Ազգային ժողովով բարեկարգեց Աստուածապաշտութեան և արարողութեանց խանդարեալ կարգերը :

Ալ լիթ Ռոսիկանի գովարանութեամբ Օմար ամիրապետն հրաւիրեց իւր մօտ, ուր ներկայացաւ սուրբ Հայրապետն իւր արտաքին սովորական շքեղ զգեստով, և նստաւ աթոռի վերայ : Ամիրապետի հարցմունքին պատուական հանդերձ հագնելու համար՝ որպէս հախառակ Քրիստոսական հրամանին՝ պատասխանեց սուրբ Հայրապետն, թէպէտ Քրիստոսի Աստուածութիւնն ծածկուած է մարմնով, բայց Աստուածային սքանչելիքը չծածկեցան, և այն շնորհօք փառաւորեցան նորա աշակերտներն, իսկ մեր նոցա պէս չենք, այլ շքեղ հանդերձներով զարդարումնք զմեզ, որ պատկառելի երեւանք՝ և մեր հրամանները կատարուին : Ապա առանձնանալով երկոքեան, մերկանումէ վերին հանդերձը՝ և ցուցանումէ խոշոր խարազնը, զոր տեսնելով Ամիրապետն փշաքաղվումէ և սոսկալով ասումէ, թէ կ'նչպէս է կարող մարմինը համբերել այսպիսի զժոխային քուրձ զգեստին : Յետ այսորիկ պատվումէ զնա մեծամեծ պարզեցնելով, և որ զլիսաւորն է՝ քրիստոնէական հաւատքի, եկեղեցւոյ և եկեղեցականաց ազատութեամբ, և ուղևորումէ իւր աշխարհը :

Սուրբ Հայրապետան վերադառնալով իւր աշխարհը՝ հալածեց Յոյները, որք Արստանդին և Յուստիանոս կայսերաց ժամանակ բնակվումէին Հայաստանում, և քաղկեդոնականութեան պատճառաւ մեծ խռովութիւն էին ձգել: Ե ինեց Օձուն գեղում եկեղեցի, և նորա ձորում ևս միւս եկեղեցի, ուր դրբաւ սուրբ Նշանը, և կոչեցաւ Հասոմայրի սուրբ նշան, Հոռոմներու բնակուելու պատճառաւ. և Արզուի գեղումն ևս երրորդ եկեղեցի, ուր և կայ նորա գերեզմանը:

§ 37. Եկեղեցական Մատենագիրք.

Հայկական լեզուի գիրք դանելուց յետոյ սուրբն Վահակ և սուրբն Մեսրոպ հարստացներու համար ավգային գպրութիւնը՝ ուղարկեցին ուշիմամիտ աշակերտներ Յունաստան և Միջագետք, որք գիտէին Յունարէն և Ասորերէն, կատարելագործել նոցա ուսմունքները, և պարապին թարգմանութեամբ զանազան գրքերի. որք վերադառնալով իւրեանց հայրենիք տարածեցին դառն ժամանակի հանգամանքներին համեմատ ուսումը. բայց պիտոյ է՝ գիտենալ, որ ուսումն զլիսաւորապէս տարածեցաւ վանքերի մէջ, ծաղկեցաւ վարդապետաց մէջ. և թէպէտ ամենայն դաւառներում կային ուսումնարաններ, սակայն բարձր գիտութիւնքը վանքերի մէջ էին ուսանում և քահանայք և աշխարհականք, համարեան թէ կարդալ ու գրել էին սովորում, որի պատճառն Հայաստանի աւերածութիւնքն էին:

Պատմութիւնն ցուցանում, ուսումնարանների բացուիլն առաւել վանօրէից մէջ, որի յայտնի ավագոյց են Ղարղապետ Մատենագիրներն. որոց գրաւոր վաստակները որչափ որ ձեռներիս ունինք՝ արձանագրենք որպէս յաւերժական յիշատակներ նոցա անունների, սակայն շատ ցանկալի էր եթէ ունեցել էինք նոցա կենսագրութիւնքը, որպէս ունին ուրիշ ազգեր. բայց ապարադարար չունինք. և եթէ մի քանի անձինքներինը կան, և այն ևս կիսակտոր:

Հինգերորդ դար:

Աշխարհի սուրբ Սահակոյ և Մեսրոպոյ:

1. Եզնիկ Առաքաչե էր քաջ տեղեակ Յոյն և Ասորի դպրութեանց: Սա ուղարկեցաւ Յովսէփ Պաղնացւոյ հետ յԱղեսիա, որպէս զի գրքեր թարգմանեն և տանեն Հայաստան: Այն տեղէն գնացին ի Առաստանդնուպոլիս, և զտան իւրեանց դասընկիրքը, և սկսան միատեղ թարգմանութեամբ պարապել:

Ապա վերադառնալու ժամանակ իւր ընկերներու հետ ի Հայաստան 431 թ. բերին Եփեսոսի սուրբ ժողովի վճիռը և Աստուածաշնչի ընտիր օրինակը Եօթանասնից սուրբ Սահակի և Մեսրոպի մօտ. և նորա թարգմանութեանն Եզնիկ էր օգնական: Չեռնադրեցաւ եպիսկոպոս Բարեւանդայ. բարեկարգեց ժողովուրդը. և դաւաւ 450 թ. Արտաշատու ժողովի մէջ ընդդէմ կրակապաշտ Պարսից: Եզնիկ ունի գրած պիտանի գործեր և ճառեր, զլսաւորն է զիրքն Եզնիկ աղանդոց վերնազրով, գրեալ Պարսից, Մանիքեցւոց և անաստուածից դէմ զօրաւոր պատճառներով: Ո՞՞ն է բուն Հայկական, քաղցր, հարթ, պերճ, յստակ և դիւրիմաց: Այս գիրքը տպած է Աննետիկում և Օմիւռնայում: Այն ճառընտիրների մէջ զանազան հատուածներ նորա ճառերի՝ որպէս Հաղորդութեան վերայ, արարչութեան վերայ և ին :

2, Առիւն էր բազմահանձար և ընդունակ թարգմանիչ և իմաստալի բանախօս, որի համար կոչեցաւ «*Գանձիկ*». քաջ տեղեակ Յոյն և Ասորի դպրութեանց: Սա իւր ընկերներու պէս ունի զանազան գրուածներ և թարգմանութիւնք, զորս կամ ժամանակն է կերել, կամ թէ վանքերի խորշերումն են. այլ մէկ գրուածքն կայ տպած Աննետիկում, որ է իւր վարդապետաց Սահակայ և Մեսրոպայ վարքն, զոր գրեց Յովսէփ Աթողեկոսի խնդրանքով: Աորին ձեռնադրեցաւ եպիսկոպոս և կարգեցաւ սուրբ Մեսրոպէն Արաց պալատի եպիսկոպոս Սամուէլի մահէն յետոյ :

Պատմութեան ոճն է պարզ, և շատ տեղ Ազաթանգեղոսի խօսքերը շայաստանի լուսաւորութեան համար սուրբ Պրիգորի ձեռքով՝ յարմարեցնումէ ազգային դպրութեան պայծառութեան սուրբ Սահակի և Մեսրոպի ձեռքով :

3. Եղեշէ Լարդապետ քաջահմուտ Յոյն և Եսորի դպրութեանց, և արտաքին փիլիսոփայութեան հմուտ: Սա՛ ինչպէս երևումէ՝ էր մին Մովսէս Խորենացոյ ընկերներէն, որք զնացին Պաղեստինայ, և անտի յԱղէքսանդրիա: Եւ ապա վերադառնալով իւր հայրենիքը գտանուեցաւ շայոց զնգի մէջ Յազկերտի մօտ ընդ դէմ Յունաց, և յետոյ Վարդանանց պատերազմում. այլ թէ մի քանի պատմաբաններ որ գրումեն՝ թէ Եղեշէ էր ազգական և ատենադպիր Վարդան Մամիկոնեանի, ո՞ր աղբիւրէն են առնում, յայտնի չէ, և չկայ ևս ապացուցութիւն ինչ: Կա էր եպիսկոպոս Եմատունեաց, ինչպէս երևումէ Երտաշատի ժողովի մէջ զբաժ Միհրնիսեհի նամակի պատասխանի ստորագրութենէն:

Եր Յայսմաւուրքն փետրվարի 27 գրումէ, թէ նա սիրումէր առանձնական կեանք վարել, և առանձնացաւ Մոկաց լեռներում, և ապա Ուշտունեաց գաւառի լեռներում, ուր և վախճանեցաւ :

Եղեշէ վարդապետի գրուածներն շատ են. բայց մեզ հասածներն սոքա են. Պարթաւիւնի Վարդանանց պատերազմի, զոր գրեց Ղաւիթ Մամիկոնեան երեցի ինզրանօք: Չայս զիրքը ստացաւ նորանէն Բարձումայ նեստորական, և հանեց անտի գովասանութիւնքը զբաժ Երծրունեաց տան վերայ: Մեհնութեան Յեռառայ Ղապատարայ: Ըան իրապոս յաղափս միանջանց: Ճառեր ի Մկրտումիւն Վրիպոտի, ի Մարտումիւնն, ի Չարաբանն, ի Խաւէլումիւնն, ի Թաղումն, ի Յարումիւնն, լուսն քաղաքանին և միառանձամ գալապետն, լուսն յիշատակաց մեռելաց, ի սորբ Լուսաբանն, կանոնական ճառեր, և մեհնութեան շայրերէն: Եյս ամենքը տպած են ի Վենետիկ. իսկ պատմութիւնն՝ զանազան ակնբերում. նոյնպէս գտանումենք մեր Շաշոց զբքի մէջ

ճ'աւս Ալարդաւաւի փօնի վերայ: Ունի և Արարածոց Մեկնութիւնն, և Սարգսգրտութիւնն (Թափօրական վերին¹⁾): Ալարդանանց պատմութիւնն թարգմանել է ի Ռուս լեզու Հայ Պետրոսն Շանշեանց՝ և տպագրած է:

4. Մովսէս Քերեսդահայր էր Տարոն զաւառի Խորէն զիւղաքաղաքէն, և կոչվումէ Խորենացի. էր սուրբ Մեսրոպի քնոորդին: Սա իւր ընկերներու հետ զնալու ժամանակ յԱղէտանդրիս ուսման համար 434 թ. ճանապարհորդեց դէպ ի Նդեխիա, որ երևելի էր դպրոցով և զրատունով, որ տեղէն ժողովեց շատ հարկաւոր նիւթեր պատմութեան, ինչպէս ինքն ասումէ՝ «Ըստ հարաւային մասանց պարայածեալ յԱղեսացւոցն հասանէաք քաղաք թեթեակի ընդ խորս զիւանին նաւեալք», և Ապա զնումէ յԱրուսաղէմ՝ սուրբ տեղեաց երկրպագութիւն. ուր փոքր ժամանակ մնալով՝ ուսանումէ Պաղեստինացւոց լեզուն: Յետոյ անցնումէ յԱղէքսանդիա՝ տանելով և իւր փոքրիկ զրատունը: Մ'նաց այս տեղ եօթն տարի, և ուսաւ Յունական ամենայն զիտութիւնքը, թէ՛ Աստուածաբանականը և թէ՛ փիլիսոփայականը, և զիւր ուսուցիչը կոչումէ՝ Նոր Պրոփետ: Ուսումն աւարտելուց յետոյ՝ ճանապարհորդումէ Յունաստանի վրայօք, որ իւր ընկերները ևս իւր հետ առնու. և երբ որ սիւրսաւ նաւել դէպ ի Նըլադայ, պատահեցաւ այլեկոծութիւն՝ և նաւը տարաւ յԱտալիա. սուղ ժամանակ մնալով Հռոմում, անցնումէ Աթէնք. ուր մնալով աշակերտակիցներու հետ ձմեռը անցնումէ ի Բիւզանդիա՝ և անտի յիւր հայրենիքը 441 թ. և դառնումէ սուրբ Սահակը և Մեսրոպը վախճանած, և Հայոց թաղաւորութիւնը ընկած, որոց վերայ մեծ սուգ արաւ. շրջեցաւ երկար ժամանակ թափառական անտէր ազգի մէջ՝ ուսուցանելով զնոսա. որի բարի համբաւն տարածուելով ամենայն տեղ երևելի եղաւ իւր ընկերներու մէջ, և շատերուն նախանձելի: Սա Մարզպան Սահակ Ասպետ Բաղրատունուոյ խնդրա-

1) Տես «Արարատ», ամսագիր 1869 թիւ Թ.

նօք գրեց շայոց ազգի պատմութիւնը (460 ԹՎ.) իւր ծերութեան ժամանակ, թողնելով իւր համար անգին դանձ՝ և իւր անուան անմահ յիշատակ: Մարդպանն այս աշխատանքի համար անուանուեւ զնա երկրորդ Սահակ և Մեսրոպ, ինչպէս կերևայ նորա նամակէն. «Շրեշտակ և սպասաւոր մեծութեանցն Վրիստոսի, յերկրի յերկնայինդ ցուցեալ այր երկնակենցաղ և լուսաւորիչ խաւարելոցս. որ տուար մեզ երկրորդ Սահակ և Մեսրոպ յետ զնայոյ նոցա առ Աստուած,» և ըն:

Մովսէսի գիտութեան լուրը ձգեց տղէտ Աբեղայից մեջ ատելութիւն առ նա: «Նորա ժամանակակից և ամենայն անցքի ակնատես վկայն Ղազար Փարբեցի իւր նամակի մեջ Ղահան Մամիկոնեանի վերայ՝ այսչափ է գրում, թէ այն ժամանակուայ Աբեղայքն տեսնելով նորա աշխատասիրութիւնը փիլիսոփայութեան մեջ՝ կոչեցին զնա անարդ անունով Փախաղիկս, որ վողովեց նորա հանդստութիւնը, յարուցանելով նորա վերայ հալածանք. և ծածկելու համար իւրեանց ատելութիւնը, ձեռնադրել տուին նորա կեանքի վերջին տարիքներումը Ապիստոյոս Բազրեանդայ և Արշարունեաց՝ փոխանակ Ազնիկ Աղբացւոյ. բայց Աբեղայից ատելութիւնն օր ըստ օրէ սաստկանումէր. երանելի վարդապետն երկար չկառավարեց վիճակը և վախճանեցաւ, սակայն չազատեցաւ նոցա մոլեկան կրքերէն՝ վասն զի չթողնն նորա պաշտելի ոսկորները հանդիսա զերեզմանի մեջ, և անչարժ բառով կնքեալ տապանը շարժեցին, հանեցին և ձգեցին ջրի մեջ, որ գոնէ դովացնեն իւրեանց ատելութեան ծարաւը¹⁾: Այսպիսի թշուառութեամբ աւարտեց յաւերժայիշատակ այրն Աստուծոյ երանելին Մովսէս իւր կեանքը դառնութեան մեջ 120 տարի հասակում:

Այս երախտաւոր մարդոյ անձին սրբութիւնը յայտնի ցու-

1) Վարդա Փարբեցւոյ նամակը եր. 63 և 64. տիպ. Մոսկ. Երանելի Փիլիսոփոսն Մովսէս, որ արդարև,, ևն. ՏԵՍ. և ողբ Մովսէսի. «Ո՞վ այստուհետև զմերս յարգեսցէ զուսումն,, ևն:

ցանու մէ նորա մարդարէական հողին, որ Սահակ Մարգարանի նամակի պատասխաննույ մէջ Աստուածածնայ սքանչելագործ պատկերի պատմութիւնը ուղարկելու համար, յետ զանազան բանից, յարգանօք խօսելով Բագրատունեաց և Արծրունեաց իշխանութեանց վերայ, սքանչելի գուշակումէ ասպագայն այսպէս. «Վեղ ասեմ իշխան Արծրունեաց, եցոյց ինձ Տէր, զի յորդուոց քոց երեք եղբարք վասն Վրիստոսի ի մահ մտանեալք արեամբ վիայ լինին Վրիստոսի. և մինն վրիպեալ ի նոցանէ՝ և ոչ յայնմ վայելէ, վասն նոցա Աստուած զԹագն թագաւորին Սենեքերիմայ յորդին քո դարձուցեալ յերկարածդէ յերկրի: Աւ Բագրատունեոյդ ասեմ, յիշէ Տէր զբան իւր առ Արրահամ, եթէ թագաւորք ի քէն ելցեն, և թագաւորք ի Վուին: Աւ այլ ինչ ունիմ ասել ձեզ, յորժամ Տէր տացէ տեսանել, Այս մարգարէութիւնն կատարեցաւ. զի Վաղիկ Արծրունեոյ որդիքն Սահակ և Համադասպ հաւատի համար նահատակեցան 486 թ. և կրասեր եղբայրն Մեհրուժան ուրանալով հաւատքը՝ սպանեցաւ Վաւիթ Մամիկոնեանէ նոյն տարում: Իսկ թագաւորութիւնն Բագրատունեաց ազգէն կանգնեցաւ 885 թ. և Արծրունեանցն 908 թ.:

Խորենացին ունեցել է շատ գրուածներ թէ հեղինակութիւնք, և թէ թարգմանութիւնք, որք անհետացած են ոմանց չարախնդիր Աբելայից ձեռքով. զի թէ նոցա ատելութիւնն ընդդէմ երանելի վարդապետին այն աստիճան էր բորբոքած, մինչև որ նորա անշնչացած ոսկորներէն վոյժ հաննել, որպէս զի ոչինչ յիշատակ չմնայ երկրիս վերայ, ուրեմն զարմանք չէ, որ նորա գրուածներն աշխատել էին ձեռք բերել և ոչընչացնել, որպէս զի կարողանան բոլորովին վերացնել նորա անուան յիշատակները: Մեր ձեռքը հասած նորա գրաւոր աշխատութիւններէն սորա են, 1. Պատմութիւնն Հայոց, սկսեալ իսկզբանէ աշխարհի մինչև Ա. դար, բազկայցած երեք գրքէն. սորա ոճն է բուն Հայկաբանական, գրուածն համառօտ և ամիրոփ. առաջին երկու գրքի ազբիւրներէ վերայ անցնումէ կրիտիքական աչքով,

և անցքերի մեծ մասը պատմումէ հանդերձ դատողութեամբ, և պատմութեան վերջում զրումէ ողջ, որի մէջ նկարագրումէ Հայաստանի թշուառ վիճակը և ամենայն աստիճանի մարդկանց բնաւորութիւնը : 2. Համարօք ընդհանուր Աշխարհագրութիւն : 3. Պարսկութիւն հրաշագործ պատկերէ սուրբ Աստուածաձայնայ, զրեց Սահակ Բագրատունւոյ խնդրանօք : 4. Պարսկութիւն և ներքսկան ի սուրբ կոյան Հախսիէ. սորա ոճն է վսեմ, ազդու, բանքն դիմառնարար, որի մէջ տեսնվումէ մեր Աստուածարան վարդապետի ատենակօսութեան կենդանի ոգին : Բաց ի այս ճառէն կայ և Յիսուսի Վրիստոսի Պայծառակերպութեան տօնի վերայ սքանչելի ատենաբանութիւն, յորոց աներկբայ կարեմք ասել, թէ երանելին խօսել է և զրել է շատ ճառեր, զորս մի քանի տղէտ Արեղայից ժանիքն կերել մաշել են : 5. Գեղեցիկ (Խրիստ), զրեց իւր աշակերտ թէոզորոսի խնդրանօք : Գրուածքի ոճն թէպէտ է Հայկաբանական, բայց խառն Հելլենականի հետ, զի նորա ոճով է դասաւորում բանը : 6. Շարականներ, որք են Ղրազալուցի Ուրախայից, Ծանդեան կարգըն, Տեառնընդառաջի, Յարութեան Հարցերը, Հոգեգալստեան, Վարդավառի, և Վերափոխման առաջին պատկերները, և Սեծացուցէքը, իսկ սուրբ Անտօնի, Թագաւորաց, Առաքելոց, Յովհաննու, սրբոյն Գրիգորի, մարգարէից և Վարդանանց, ոմանք տալիս են Խորենացւոյն և ոմանք Անանիա Շիրակացւոյն :

Խորենացւոյ Հեղինակութիւնքն տպած են Աննետիկում և Աոստանընուպօլսում : Հայոց պատմութեան ընտիր թարգմանութիւնն Ռուս լեզուով գիտնական Մկրտիչ Լամիսի տպեալ է ի Մոսկուայ, կայ և Գաղղիերէն :

5. Մաճիչէ Վերթանոյ՝ Խորենացւոյ փոքր եղբայր՝ ուսաւ Աղէքսանդրիայում իւր մեծ եղբօր հետ Հելլենական գիտութիւնքը : Նորա վարքագրութիւնը չկայ, և նորա գրուածներէն միայն երկու ճառ է պահել ժամանակն, որք և տպած են ի Վննետիկ, Գաղարոսի յարութեան վերայ և Վրիստոսի Ա-

բուսաղէմ մասնելու վերայ, որ Աւետարանի բանը սքանչելի մեկնութեամբ բացատրել է :

Շարադրութեան ոճն է հռետորական, մեկնութիւնն Աստուածաբանական, բանքն ներբողական, որի մէջ փայլում է ճիշդ Հայկաբանութիւն :

6. Գառնի Գլխափայ : Այս երևելի մարդոյ վարքը ոչ որ է գրել, այլ այսչափ միայն եմք գտանում, թէ նա էր Խորենացւոյ քերորդին, ծննդեամբ Հարք գաւառի 'Ներդին զիւղաքաղաքէ, որ է Տարօնի սահմանների մօտ, վասն որոյ և կոչվում է 'Ներգլխայի: Սա իւր քեռի Խորենացւոյ հետ զնաց յԱղէքսանդրիա, և աւելի քան զիւր ընկերները վարժեցաւ փիլիսոփայական զիտութեանց մեջ : Ունի շատ գրուածներ, բայց մեզ հասածներն սոքա են. 'Քերականութիւն, Գլխք սահմանաց և Էպիպո, Մեկնութիւն Գրոյ Արիստոտելի, Թարգմանութիւն 'Ներածութեանց Գլխքի: Այս գրուածների մէջ երևում է երևնական ոճ, և մթին: Գրեց և 'Ներբողեան 'Քրիստոսի Ծննդեան վերայ՝ և Խաչի վերայ. Խաչի ճառն է գերազանժ և վսեմ և խորհրդաւոր շարադրութիւն, Աթենական ուղոյ ցուցակ, որի մեկնութիւնն արաւ 'Ներսէս Շնորհալի: Սորա վաստակները բաց ի 'Քերականութիւնէն և Ծննդեան ճառէն՝ տպեցան Վնեափիլում: Սորա փիլիսոփայական զիտութիւնն այնչափ բարձր էր, որ Յունաց փիլիսոփայքն հակաճառութեան մէջ նորա հետ յաղթեցան, և Գառնի ստացաւ մականունն Աշտարի Փլխափայ:

7. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Սեմեայ, որ կոչեառաջին. սորա վաստակներէն ունիմք միայն Շարականի հոգեկեց երգերը՝ որք են ութն ձայն Աստուծոյ օրհնութիւնք. բայց ոմանք ասում են թէ Վառ ձայն օրհնութիւնը Շնորհալին է երգել. սակայն է անստոյգ. վասն զի Միւնեցիէն մինչև Շնորհալին է 700 տարի, և եկեղեցին չէր կարող մնալ առանց Վառ ձայնի օրհնութեան երգին, որի շարադրութեան ոճն և միտքն համեմատ են միւսներին:

8. Գաղար Գարեբեցի: Սամուէլ անուանում է Գաղարի. սորա լրիւ կենսադրութիւնն չկայ, և մասնաւոր յիշում է ինքն իւր

նամսկի մէջ առ Մարգարան Ալահան Մամիկոնեան: Վազարի հօր անունն թէև չէ յայտ. բայց ինչպէս երևումէ հարուստ տանէն էր, մնաւ Ալբաց Բոյեշե Աշուշայի տանը, որի կիներ էր Ալահանի մօրաքոյր Ենոյշ — Աւամ, և այն տեղ ուսումն առաւ Հմայեակ Մամիկոնեանի որդւոց Ալահանի, Ասասկի և Երտաշէսի հետ: Մեծանալով ի միասին կապեցաւ նոցա հետ ընկերական սիրով, և համարվումէր որպէս ընտանի: Այս ժամանակին անուանի էր ուսումնականութեամբ Ասասկ Երծրունոց որդին Եղան, որ թողնելով նախարարական փառքը՝ ընկալաւ սուրբ Մահակէն կրօնաւորական սքեմ, և մայնակեցութեան կեանք էր վարում Գողթն դաւառում: Վազար աշակերտեցաւ նորան. և ապա սուրբ Մահակ և Մենուպ ուղարկեցին Յունաստան, ուր քաջ վարժեցաւ Հելլենական դիտութեանց մէջ: Գառնալով իւր հայրենիքը մնաց Երշախր Աամ սարականի տանը, որի որդիքն Ներսէս և Հրահատ սերտ սիրով բարեկամացան նորա հետ: Ապա տեսնելով աշխարհի աղէտալի վիճակը՝ առանձնացաւ Սիւնեաց աշխարհում երկու ձմեռն անցուցանելով քարայրի մէջ. և Մուշէ եպիսկոպոսապետն հրաւիրումէր իւր մօտ հովանոց: Երբոր Ալահան Մամիկոնեան կարգեցաւ Մարգարան և շինեց Աթողիկէ եկեղեցին Նոր քաղաքում (Վաղարշապատում), կարգեց զՎազար Հոգարարձու. որ այնպէս բարեկարգեց զայն եկեղեցին, մինչ զն առաւել էր քան զմիւս վանքերը. և նորա բարի համբաւը տարածեցաւ ամենայն տեղ, և գալիս էին լսել նորա քարոզութիւնը: Ալահանի երեք եղբայրներն, երկու Աամնարականներն, Համաղասպ Մամիկոնեան, Մարգարանի եղբօրորդիքն, և Գազիկ Տէր Երեղենից հոգումէին վանքի ծախար:

Այս վանքի վերակացութիւնը մի քանի արեղայք աշխատումէին ձեռք ձգել Յովհան Մանդակունի Աթողիկոսի միջնորդութեամբ, և Ալահանին ևս կաշառք խոստացան. բայց չհասան ցանկութեանցն, ուստի սկսեցին վատահամբաւել Վազարի անունը, և ձգեցին իւրեանց կողմը Մամիկոնեանց տան

ղլխաւոր ծառայն և տան քահանայն բամբասել զնա. իսկ իւրանք տարածեցին ժողովրդեան մէջ անտեղի և սուտ կարծիքներ նորա քարոզութեան և բարոյականութեան վերայ, և զըլխաւորներն սքա են .

Ե. Ղազարն ասուով թէ պոռնկութիւնն թեղք չէ :

Բ. Ղազարն աղանդաւոր է :

Գ. Ղազարն պիղծ և չարագործ է :

Դ. Թէ Ղազարն գիր չէ կարդում, և այնպէս վարժ է ասում, որպէս թէ գրի վերայ :

Ե. Թէ առաջ զիմնարար և շատ համով էր խրատում, բայց այժմ տգիտարար և վատ է խօսում :

Ե. յսպիտի զըպարտութիւնքը իմանալով Ղազար շուարուել էր, վասն որոյ և թողել էր քարոզութիւնքը, եթէ արեղայք լուծվին ժողովրդեան գովասանութիւնը, սկսուովին ծաղրանելով ամաչեցնել, թէ արդ ամենն ին լուել չգիտէ, և զուրտեղ գոռուով և քրքրվում :

Ղազար այլ ևս չկարողանալով տանել արեղայից յիմարութեան, զիմուով Աթողիկոսին (որ պիտոյ է լինէր Բարեկէն կամ Ստույլ) պաշտպանութիւն խնդրելով թշնամեաց հալածանքներէն: Ուղարկուով մէկ իշխան մարդ՝ ասել Աթողիկոսին, թէ « շողոց հիւանդատես, շուտով հասիր օգնելու, թըշնամուց անթիւ նետերէն խոցոտեցայ, սաստիկ վերաւորած եմ մերձ ի մահ. պսուհետե քեզ է հարկ դեղ զնել, և բժշկել, կամ թէ մեռնել, տանել ի գերեզման և թաղել », : Իսկ Աթողիկոսն պատասխանում՝ « ես երկիւղէս տեսնել անգամ չեմ համարձակվում, իսկ նա ասում՝ թէ եկ, բժշկիր կամ թաղիր », :

Եւ յետոյ Ղազար ինքն կամեցաւ ներկայանալ Աթողիկոսին. բայց լսեց այս ձայնը՝ « ո՞ւր ես գալի, չեմ կամենում, չեմ կարող տեսնել զքեզ », :

Արեղայք տեսնելով թէ Ղազար մնաց անպաշտպան, մէկ օր կատաղարար յարձակեցան նորա վերայ՝ և վանքէն դուրս քըշեցին խայտառակ և մերկ. և նա յուսահատ գնաց Ամիդ քա-

ղաքը, որ տեղէն ուղարկեց նամակ Վահանի վերայ Համազասպ Մամիկոնեանի ձեռքով. և Վահան շուտով կանչեց Վազարին իւր մօտ, որ դրեց Հայոց պատմութիւնը նորա հրամանով: Կարճառօտ անցնելով Ազաթանդեղոսի և Փոստոսի պատմութիւնքը մինչև Տրչակունեաց թաղաւորութեան բաժանուիլը, և ապա սկսում է լիովի պատմութիւն Վարդանանց և Ղևոնդեանց նահատակութեանց, և առաւել լրիւ է գրում իւր ժամանակի անցքը, մինչև Վահանի մարդպանութիւնը կամ 485 թ.:

Պատմութեան կարգն է պարզ, շարագրութիւնն քաղցր, ոճն է միօրինակ ղեղեցիկ հանդիսացնող փոքր պարագաների, որի համար գուցէ Տարօնեցին և Աիրակոս կոչումն ճարտասան: Այս պատմութիւնն տպած է Վենետիկում, և նամակն Վահանի վերայ Մոսկուայում:

Բայ ի վերոյիշեալ մատենադիրներէն, որոց մի քանի գրաւոր վաստակները յիշեցինք, կան և ուրիշներ նոյն աշակերտութենէ, որք աշխատած են թարգմանութեամբ և ուսուցչութեամբ. այլ ախոս որ նոցա աշխատասիրութիւնքն չեն երեւում. այլ միայն անուններն, որք են:

9) Յովսէփ Կաթողիկոս Վայոյ — յորեցի: 10) Յովսէփ Պաղնայի, որ գնաց սուրբ Մեսրոպի հետ ի Սամուսատ, և օգնական եղև Սողոմոնի Առակաց գրքի և Աոր Կտակարանի թարգմանութեանց մէջ:

11) Յովհան Եկեղեցացի աշխատակից սուրբ Մեսրոպի:

12) Ղևոնդ երեց Վանանդեցի. սա գնաց Կոստանդնուպօլիս թարգմանութեան համար. և շատ անուանի էր իմաստութեամբ և հանձարեղ վարդապետութեամբ: 13) Եֆրահամ կամ Եֆէլ: 14) Ենանիա Եպիսկոպոս Սեմեաց: 15) Թաւրիկ Եպիսկոպոս Բասենի: 16) Տերայր կամ Տէր Խորենացի ուսուցիչ նախ ի Հայաստան և ապա ի Վրաստան: 17) Մուշէ Տարօնեցի ընկեր Տերայրի: 18) Ենուք, նախ ուսուցիչ Աղուանից աշխարհում, և ապա Յունաց բաժնում Ղևոնդի հետ: 19) Ղանան, նորա ընկեր: 20) Յովհանն, դրան երէց Աղուանից

Թագաւորի 21) Երեմիա սարկաւազապետ սուրբ Սահակի : 22) Երան Երթրոնի, ընկեր Եկեղեցացու : 23) Բնիկ, 24) Խոսրով, 25) Խալիկ, 26) Ենդրեաս, 27) Թափուլ և 28) նորա երէց եղբայրն Վարս :

29) Գեորգ Սափորիկոս էր Տայոց աշխարհէն : Սորա համար գովութեամբ է խօսում Փարբեցին. «Ն.Յր լե գիտութեամբ շայովն և առաւելալ Յունիւն. յորդառատ բանիւ և առատարուղի վարդապետութեամբ, և լին : Բայց սորա վաստակներն ժամանակի որկորը կուլ է տուել :

30) Յովնան Սահրակոնի Սափորիկոս առաւել հարատացրեց իւր ուսուցիչներէն յօրինած եկեղեցական զրեանքը. Ժամագրքի մէջ աւելացրեց Չարթոյեալ քարոզը, և նորա աղօթքը, մեծի պահոց ճաշու մեծ քարոզները և աղօթքները, ինչպէս զրումէ Յովհաննէս պատմարան թերևս և Թագաւորէքը. լրացրեց Մաշտոցը, նոյնպէս Պատարագամտոյցը, և սուրբ խորհրդի վերաբերելուց յետոյ աղօթքը տալիս են սորան : Սա ասաց շուխիսիմեանց շամբարձին Անկիլի բանն Աստուած. զրեց երեսուն և երեք մանր ճառեր, որոց ոճն է հրեւտորական և ազդու, և երկրորդ անգամ տպած է Վենետիկ :

Եւ այսպէս հինգերորդ դարու մէջ բաց ի սուրբ Սահակէն և Մեսրոպէն գտանումենք նոցա աշակերտ մատենագիրներու մէջ միայն երեսուն անձինքների անունները, զորս պատմութիւնն պահել է և նոցա մէջ տասն Վարդապետաց վաստակները : Բայց պիտոյ է ասել՝ թէ շայաստանի այս ոսկեղէն դարում աշակերտաց թիւն էր յոյժ բազում, որոց երանելի ուսուցիչներն այնպէս էին վառուած ազգասիրութեամբ, մինչ զի ողջ շայաստանի մանուկները աշխատումէն լուսաւորել շայկական դպրութեամբ և ընդ նմին Յունականով, ուրեմն այս դարու մատենագիրներն էին բազմաթիւ. բայց աշխարհի շարունակ թշուառ վիճակն՝ ոչ միայն աշխատութիւնքը կորցրեց, այլ և անունները :

Ղեցիրորդ և եօթներորդ դար:

Աղեցիրորդ դարն իւր պէկոծութեան պատճառաւ բռնաւորներու ձեռքէն բոլորովին թողնումէ անյիշատակ մատենագիրներու անուները. վասն զի հինգերորդ դարու ուսումնական վարդապետներն տարածուած Հայաստանի ամենայն կողմերը, անշուշտ պիտի պարծենար վեցերորդ դարն առաւելութիւն գիտնական անձինքներով. և ապարազդարար պատմութիւնն յիշումէ ստուերանման Խորենացւոյ աշակերտ Ազրաս Անգեղային, և այն վարժապետական պաշտօնով, և զՊեպրոս Ապիսիոսոսը Սինեայ Բերլիոյ կոչեցեալ. իսկ եօթներորդ դարու մէջ դասնումենք հետեւեալները:

1) Պեպրոս Պաթուկիոս, որի գրուածներէն միայն կայ Անյին և նորեալ սուրբ Հովսիսիմեանց շարականը, որի մէջ փայլումէ նորա քաջ Հայկաշանութիւնը:

2) Յովնանէս եպիսկոպոս Մամիկոնեանց զրեց Մամիկոնեանց տան պատերազմը, և Մուշեղի և Գայլ Աշահանի ընդդէմ Պարսից մինչև 640 թ: Հարադրութեան ոճն է պարզ: Արևի թէ սա է թարգմանել Օկնոջի պատմութիւնն Ասորի լեզուէն, և շարունակութիւնն ինքը գրել, որ երկուսի ոճն ևս միանման են:

3) Բարսեղ Լարրասպետ Ղոն կոչեցեալ Վարեվանքի Առաջնորդ, էր երևելի գիտութեամբ. որոշեց ընտիր շարականները Աբրեսս Հինոյ Պաթողիկոսի հրամանաւ, որի անուտով կոչեցաւ Ղոնընայի: Սա զրեց Մարիոսի Աւետարանի մեկնութիւնը, որի ոճն է պարզ:

4) Անանիա Ալարրասպետ Հիրակոյի, որ և Անեցի: Սա աւարտելուց յետոյ վարդապետական ուսմունքը՝ փափագումք ուսանել և արտաքին գիտութիւնք. և չգտանելով այն կողմերում իւր կամեցած ուսուցիչ, զնաց Յունաց աշխարհը. և լըսելով թէ Տրապիզոն քաղաքում կայ մէկ բազմահմուտ խնաստասէր Տիւքիկոս անուն Բիւզանդացի, աշակերտեցաւ նորան

ութն տարի. ուսաւ ամենայն արտաքին զիտութիւնքը. և դառնալով ի Հայաստան՝ ցանկանումէր տարածել իւր ուսումը, բայց անկատար մնաց նորա ցանկութիւնն Հայաստանի անյաջող բաղդի պատճառաւ: Ընաստաս Աթոռիկոսի հրամանաւ նորոգեց շարժական Տումարը և շինեց անշարժ. և այն ինչ Հայրապետն մտադիր էր ժողով զումարել զործածութեան մէջ, վախճանեցաւ և մնաց անգործածելի: Սորա զիտութիւնն երեւումէ իւր զրուածներէն՝ որք են. Մալխանապիգական, Վերականուհան, Ղարաբաղական և Փլէխոֆայական Վաղդէականէն և Յուսիսականէն: Յօրինեց և Եսպառաշիական և Արլրաշափական զիրք. շարադրեց զանազան ճառեր. զրեց և խրատականներ միայնակեաց Գրիգորի խնդրանօք: Գրիգոր Մաղխաբոս զովարանելով Ընանիայի աշխատասիրութիւնքը իւր նամակի մէջ Գետադարձ Պետրոս Աթոռիկոսի վերայ՝ խնդրումէ ուղարկել առ ինքն կարդալու համար:

5) Թեոփորոս Ա խորասպետ կոչեցեալն Վալխանաբոս, այր մեծիմաստ, վարժուած Հելլենական զիտութեանց մէջ, քաջ տեղեակ սուրբ գրքին, և համբաւաւոր առաքինութեամբ, կարգեցաւ Անասայր սուրբ Եստուածածնայ վանքի Երազած լեռան ստորոտում. ունեցաւ շատ աշակերտներ, որոց մէջ երևելի են Սահակ Աթոռիկոս և Յովհաննէս Օձնեցի: Նորա զրուածներէն մեզ հասել են Գեորգ Ենդրեժ Պաւլիկեան և Յոսիանիս աղանդաւորներոս. ոճն է վսեմ, և ըստ մտայն Եստուածաբանական: Գրեց և շատ ճառեր նոյն ոճով, որպիսի են և ճառն ի սուրբ Խաչն Եսպոսածընիալ և Գովեսոս ի սուրբ Կոյան Մարիամ. որք տպագրած են ի Ալեկտիկ Յովհաննու Օձնեցւոյ մատենագրութեան հետ:

6) Մովսէս Եպիսկոպոս Սեմեայ վարժ Հելլենական դպրութեան մէջ, և առաւել Հայկական հետտրութեան մէջ, մինչև կոչել զնա Վերլոյ կամ Վերլոյահայր: Յօրինեց Վերականութիւն և Ղարաբաղականութիւն. զրեց և հետտրական ճառեր, մինչև որ ոմանք այժմեան անձինք կարծիքի մէջ են, թէ Պիտոյից

զիրքը սա է շինել Թեոդորոս Վաթենաւորի խնդրանօք. կան տմանք՝ որք Խորենացոյ մի քանի շարականները սորան են տալիս: Աս ունեցաւ շատ աշակերաներ, որոց մէջ յայտնի է Սահփանոս Բ. Սիւնեցի:

7) Գլխաւորն է պիսիոպոս Արշարունեաց, այր բանիրուն զիտու թեամբ՝ և հմուտ սուրբ զլքին: Սա Վահան Ամնարականի զրեց Լիւզեցական պաշտամանաւորն յիւնոսթանը, պահէր և արտունական փոներէ կարգէրը: Թեպէտ զրուածները չկան, բայց նորա նամակի հատուածէն Ամնարականի վերայ, որի հետ ուղարկուած զիրքը, երևում է նորա քաջ Հայկաբանութիւնը:

8) Փելոն Վարդապետ Շիրակացի՝ հմուտ Հելլենական լեզուին. Թարգմանեց Վերսէհ Ամնարականի խնդրանօք Յունականէն ի Հայ Սոկրատի եկեղեցական պատմութիւնը:

9) Բահայ Ասիոյիկոս Ծարախորցի զրեց ճառեր, յորոց մին Ծաղկազարդի վերայ տպած է Օճնեցոյ մատենադրութեան հետ, որի մէջ փայլում է ճիշդ Հայկաբանութիւն: Երգեց և շարականներ Խաչի, Լիւզեցոյ, Օլիւնդաւորի անարարն և զՏէր երկնիցն Որ զարդարեաց:

Ունիրորդ զար:

1) Յովհաննէս Ասիոյիկոս Օյնեցի՝ Մականունեալն Իմաստաւոր, զրեց զանազան ճառեր. բայց տպագրածներն սորա են. Ղաա տասցեալ Վրանայ ժողովոմ 719 Թ. որի մէջ պատմում է ամենայն անկարգութիւնը մտած եկեղեցեաց մեջ: Ամոններ եկեղեցական քարէլարդոսթան. ճառեր ընդրելմ Պատկիւնեաց և Երևոսթանեաց: Միւնոսթան ժամաւարդոսթանեաց և արարողոսթանեաց եկեղեցոյ, և ճառ յեկեղեցի: Երգեց և շարականներն Ասափ փոների: Նորա զրուածներն տպագրեալ են Վկնետիկում:

2) Սարգիստոս Լալիսիոպոս Սիւնեցի նախ աւարտեց Մովսէս քերթողի մօտ Վերականութիւն և Ղարտասանութիւն, ապա ուսաւ Աոստանդնուպոլում Հելլենական դպրութիւն. ուր

Թարգմանեց Վիտնեսիոսի Արիսպագացւոյ և Գարեգորի Աիւսացւոյ զբերբը : Գրեց Յորայ, Գանիէլի և Ազելիէլի մարգարեութեանց և Վիտնեսիոսի զբքի մեկնութիւնքը. ասաց Խաչի շարականը Սրբո-ւնի-ն Սրբոյ : Աւ ապա վախճանեցաւ թունաւորեալ մէկ կնոջէ, զոր յանդիմանուովը նորա անպարկեշտութեան համար :

3) Գլխոնք երէց պատմադիր զրեց Հայաստանի անցքը. «Արշաւանդ Արաբացոց», վերնադրով, Մահմետի երեւալու օրէն մինչև 788 թ. : Գլխոնք է պարզ Հայաստան և ոչ Հայկաբան : Այս պատմութիւնն տպագրեցաւ ի Փարիզ : Աիրակոսիւր պատմութեան մէջ յիշատակումէ և մի քանի ուսումնական Վարդապետներ. Աբրեճ, Անաստաս, Խաչիկ և Գառնի Հարոմայրեցի : Բայց սոցա զբուածներն չեն երեւում :

Իններորդ դար :

1) Չատարիս Աստուղիտ էր բանիրուն դպիր, զոր Սմբատ Բագրատունին ձեռնադրել տուաւ 854 թ. մէկ օրումը Սարկաւազ, Վահանայ, Ապիսկոպոս և Աթողիկոս : Սա զրեց մեկնողական ձառեր վանս Ծանրեան, Սիրբո-ւնի-ան և Գալստայեան Յիստոսի Վրեայոսի Արտասաղէճ. նաև վանս հարարածի աշխարհի. ի Չարաբանս, ի Թաղա-մն, ի սորբ Խաչն, ի սորբ Ազիլեցի և ի ննջո-մն օրբոյ Առանն :

2) Համաճ վարդապետ Արեւելցի կոչեցեալ. զրեց Բիւնո-ւնի-ն Սողմանի Առակայ, և Յորայ Ո՛վէ դալին և ունի օրհնո-ւնի-անց և ՇժԻՒ Սաղմոսին, և ինչ ինչ Վերականական ուսմանս, որպէս և զՊարսո-ւնի-ն Հայոց. բայց ոչինչ մնաց նորա զբուածներէն, միայն մեկնութիւն Ո՛վէ դալին :

3) Գառնի վարդապետ Վանահայր ուխտի սրբոյն Արտէմայ, և սարկաւազ նորա Գրեգոր արարին սրբոց վարքի հաւարունս, և վանքի անունով կոչեցաւ Արտեմալիք, որ և եղաւ իբրև սկիզբ Հայոց Յայսմասարքի :

4) Յովհաննէս Բժիշկի, այր իմաստուն և լեզուագէտ, թարգմա-

նեց սրբոց պատմութիւնքը, ևս և Ղիոնն սիոսի Արխապագացւոյ վարքադրութիւնը, ինչպէս կան հին ճառընտիրների մէջ :

Ն Ե Ր Բ Ի Ն Վ Ի Ճ Ա Կ Ե Կ Ե Գ Ե Ց Ի Ո Յ .

§ 38 վարդապետութիւն Հաւատոյ :

Հաւատոյ վարդապետութեան մէջ ոչինչ փոփոխութիւն չմտաւ. թէպէտ Ազգ Աթողիկոս ընդունեց Վաղկեդոնի օրհնութեան ժողովի սահմանադրութիւնը, բայց ոչինչ ներգործութիւն չունեցաւ Մեծ Հայաստան աշխարհում. և Յոյնք ևս՝ որք կային Գուին քաղաքում Աոստանդին և Յուստինիանոս կայսերներու ժամանակ, բռնադատումին ազգը ընդունել այն ժողովը. սակայն բաց ի խռովութենէ ոչինչ յառաջացաւ, միայն Արեւմտեան Հայաստանում Յունաց բաժնի մէջ մի քանի տեղեր ընդունեցին զայն :

§ 39. Հերձուած :

Այլայն եկեղեցին, որ միացած էր Հայոց եկեղեցւոյ հետ իւր քրիստոնէութիւն ընդունելու օրէն, և նոցա Աթողիկոսներն օծվումէին և կարգվում Հայոց Աթողիկոսներէն, և գտանվումէին նոցա իշխանութեան ներքոյ. իսկ 596 թ. բաժանեցաւ և միացաւ Յունաց եկեղեցւոյ հետ Աիւրիոնի ձեռքով, որ ընդունել էր քաղկեդոնականութիւնը, և Մովսէս Աթողիկոս Հայոց անդիտութեամբ ձեռնադրեց զնա Աթողիկոս Այլայ 580 թուին :

Ա Ջ Գ Ա Ց Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ Ն Ե Ր .

§ 40. Ժողով վաղարշապատու Ե. յամի Տեառն 426 :

Հայոց գիրը գտնելէն յետոյ սուրբն Սահակ սկսաւ բարեկարգել եկեղեցին, և արար ժողով Ա Վաղարշապատ քաղաքում 426 թ. և միարան հաւանութեամբ եպիսկոպոսաց և քահա-

նախից գրեց ընդհանրական թուղթ, որի մէջ վեց զլուխ ճառերով սահմանեց կանոններ եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից զզուշութեան համար: Այս կանոնների մէջ կան և Առևտարէ ինչ ինչ կանոններ սահմանած Աշաղբաշապատու առաջին ժողովում:

§ 41. Ժողով Աշտիշատու Բ. յամի Տեառն 432:

Սուրբն Սահակ շայրապետ երբոր յետ եկաւ Պարսկաստանէն, այն ժամանակ եկան Ղոստանդնուպօլէն և մեր երանաշնորհ թարգմանիչներն Վեոնդ երեց՝ և նորա ընկերներն, բերելով իւրեանց հետ և Ափեսոսի Ա. տիեզերական ժողովի դաւանութեան վճիռը ընդգէմ՝ Վեստորի, զոր տուել էր նոցա Մաքսիմիանոս Յունաց պատրիարքն՝ տանել ի շայաստան: Սուրբն Սահակ ստանալով զայն՝ ժողով գումարեց Աշտիշատ քաղաքում 432 թ. և միաբան հաւանութեամբ ընկալան տիեզերական ժողովի սահմանը, նզովելով զՎեստոր և նորա համախոհները:

§ 42. Ժողով Աշտիշատու Գ. յամի Տեառն 433:

Ափեսոսի տիեզերական ժողովէն յետոյ կայսերական հրովարտակ գնաց ամենայն տեղ ջնջել Վեստորի մոլորութիւնը և ոչնչացնել զրերը: Վորա հեռեւորներն աշխատելով տարածել այն աղանդը, ուրիշ հնարք գտան. թարգմանեցին Վեստորի վարժապետ Թէոդորոսի Մոպսուեստացւոյ՝ Թէոդորոսի Տարսոնեցւոյ զրերը շայ երէն, Պարսկերէն և Ասորերէն՝ և սփռեցին Արևելքում: Սուրբն Սահակ իմանալով զայն՝ ժողով գումարեց Աշտիշատում, և նզովքով հերքեց զրքերը. «Օհ մի կորիւնի խօսքով, ի լուսաւոր վարդապետութիւն ծուխ ինչ սատանայական յարիցէ,»:

§ 43. Ժողով Շահապիվանու Ս. յամի Տեառն 447.

Սուրբ Սահակի մահուանէն յետոյ մտել էին եկեղեցակա-
նաց և աշխարհականաց մէջ մեծամեծ անկարգութիւնք: Օչոյս
ամենայն վերցնելու համար՝ Վասակ Սիւնի Մարզպան և Վար-
դան Մամիկոնեան Սպարապետ և միւս նախարարներ խնդրե-
ցին սուրբ Յովսէփ Հայրապետէն բարեկարգել աշխարհք: Աւնա
ժողով գումարեց Շահապիվան, ուր միտարան հաւանութեամբ
հաստատեցին նախնեաց կարգեալ կանոնները, և աւելացրին
քսան յօդուած հանդերձ տուգանքներով և պատիժներով, և
կոչեցաւ Սաննի Գոմանաց:

§ 44. Ժողով Վաղարշապատու Զ. յամի Տեառն 494.

Վաղկեղոնի ժողովի պատճառաւ մեծ խռովութիւն ընկաւ
Յունաստանում. և Օննոն կայսր ցանկանալով խաղաղութիւն
ձգել, հրովարտակ ուղարկեց ամենայն տեղ ընդունել առաջին
երեք տիեզերական ժողովները, ոչինչ ասելով Վաղկեղոնի ժո-
ղովի համար. որով ցուցանումէր թէ ինքն ևս չէ ընդունում.
և շատերը ստորագրեցին նորա վերայ: Այսպիսի շրջաբերական
հրովարտակ՝ որ կոչվումէ Հենոտիքոն, ընկալաւ և Բաբելէն Աս-
թողիկոս Հայոց, որ ժողով գումարեց Վաղարշապատի Աս-
թողիկէ եկեղեցում 491 թ. որի հրաւիրանքով եկան Գաբրիէլ
Ասթողիկոս Վրաց իւր եպիսկոպոսներով, Աղուանից Ասթո-
ղիկոս, և Յունաց կողմանէ մի քանի եպիսկոպոսներ. ուր նախ
նզովեցին Նեստորականները և Աւտիքականները, և ապա կար-
դացին Օննոնի հրովարտակը, որին համաձայնեցան ամենեքեան՝
և յայանի մերժեցին Վաղկեղոնի ժողովը:

§ 45. Ժողով Գրւնայ Բ. յամի Տեառն 527.

Ներսէս Բ. Ասթողիկոս Աշտարակեցի տեսնելով թէ քաղ-
կեղոնական աղմուկը օրըստօրէ բարձրանումէ, և որպէս զի չը-
տարածուի Հայոց մէջ ևս, մանաւանդ Յունաց բաժնում, ժո-

զով գումարեց Գուին քաղաքում 527 թ. և մերժեց զայն :
Եւ որովհետեւ հոգեորականաց և աշխարհականաց մէջ մտել
էին անկարգութիւնք, սահմանեցաւ 38 յօդուածներով բարեկարգութեան կանոններ :

§ 46. Ժողով Գրւնայ Ե. յամի Տետոն 645 :

Ներսէս Շինողի ժամանակ բազմացել էին Շարականի երգերը, և պատահեցաւ նորան դնալ Սարգաւառի տօնին ի Ռագաւան, և տօնակատարութեան ժամանակ երգումէին երկու դասերէն Հարցի զանազան Շարականներ ամենէն տարբեր միմեանցէ, որով մեծ աղմուկ ծագեցաւ եկեղեցում. նոյնպէս մտել էին հոգեորականաց և աշխարհականաց մէջ զանազան անկարգութիւնք, ևս և տարաձայնութիւն Վաղիկեղոնի ժողովի վերայ :
Ներսէս Վաթողիկոս ժողով գումարեց ի Գուին 645 թ. ուր նախ մերժելով Վաղիկեղոնի ժողովը, և ապա սահմանեցին բարեկարգութեան կանոններ տասներկու յօդուածներով. և յետոյ Բարսեղ վարդապետ Ղոն կոչեցեալ ըստ յանձնարարութեան Վաթողիկոսին ընտրեց պիտանի Շարականները, և կոչեցաւ Ղոնեպի :

§ 47. Ժողով Գրւնայ Ե. յամի Տետոն 749 .

Յովհաննէս Վաթողիկոս Խմաստասէր անուանեալ նստելով Հայրապետական աթոռ, ջանաց բարեկարգել եկեղեցին. նախ զրեց ազգու Ղառ Պաւլիկեանց ընդդէմ. և երկրորդ, արմատացած էին ինչ ինչ անկարգութիւնքը, որ տեղ տեղ փայտեղէն սեղան էին կանգնեցնում ըստ Յունաց՝ և աւաղաններ շարժական առանց անօթի որոշելու, մեծ պահքին շարժութ ու կիւրակէ չէին մատուցանում պատարագ՝ թէ տրամութեան օրեր են : Ռմանք պատարագի նուէրքը ըստ Յունաց էին կատարում, Խաչեցարը ասումէին սուրբ Եսայիայի երկրորդ նուագում, Օրնունդը և Յայտնութիւնը առանձին առանձին էին տօնում, և Օծութեան իւզը Նրուսագէմէն էին բերում՝ զոր կոչումէին Խա-

Վ ՅԷ: Այս ամենայն անկարգութիւնքը բառնալու և երկպառակեալ ազդը միացնելու համար՝ սուրբ Հայրապետն ժողով դումարեց Ղուին քաղաքում 719 թ., որի ատենի մէջ խօսեցաւ ճառ, նկարագրելով Հայաստանի թշուառ բազը ըստ հոգևորին և ըստ քաղաքականին, և յիշելով նախկին սուրբ Հայրապետներէ սահմանած բարեկարգութիւնքը, ինքն ևս ժողովի համաձայնութեամբ սահմանեց երեսուն և երկու կանոններ եկեղեցւոյ բարեկարգութեան և արարողութեանց միաձև կատարման համար :

§ 48. Ժողով Պարտաւի Բ. յամի Տեառն 768 .

Մի՞ն Աթոռիկոս տեսնելով ոմանց Առաջնորդաց մէջ թուրութիւն, անկարգութիւն, բռնութիւն և արծաթսիրութիւն, կամեցաւ ժողովով բառնալ զայս ամենայն. բայց այլազեղաց բռնութեան պատճառաւ չկարաց կատարել այս Ղուին քաղաքում. ուստի շրջաբերական գրով հրաւիրեց բոլոր եպիսկոպոսները ի Պարտաւ քաղաք, և շատերն հաւանութեան թուղթ գրեցին՝ որ ինչ ժողովն սահմանէ՝ ընդունելէ է նոցա :

Այս ժողովէ մէջ սահմանեցին քսան և չորս կանոններ բարեկարգութեան :

§ 49. Յայտնութիւն Դաստառակին Քրիստոսի .

Քրիստոսի Դաստառակն բազմեցուցած էր Նդեսիոյ քաղաքի պարսպի դրան գլխին. և երբոր Աբգար թագաւորի մեռնելէն յետոյ նորա որդի Մանէն բացեց կռատունները և հալածուէր քրիստոնէութիւնը, այն ժամանակ Նդեսիայի Աղդէ եպիսկոպոսն ծածկեց այն տեղը, և մնաց անյայտ մինչև 539 թ., որ ժամանակ Պարսից Խոսրով թագաւորն զիմելով Յունաստանի սահմանները, պաշարեց Նդեսիայն. և բնակիչներն ընկնելով ահ ու դողի մէջ ապաւինեցան յԱստուած. ապա քաղաքի Նպիսկոպոսին տեսնեան մէջ յայտնեցաւ Դաստառակի տեղը, և հրաման եղաւ առնուլ զայն, որով և կլինի նոցա ա-

զատութիւնն թշնամեաց ձեռքէն : Ապիսիոպոսն կատարեց որպէս և հրամայեցաւ նորան, և այս երկնային զէնքի հրաշքներով Պարսիկներն յուսակառուր եղաճ, ամօթով յետ դարձան : Ընձեռագործ պատկերն մնաց Ազդեսիայում մինչև 944 թիւը, այն է մինչև նորա փոխադրելը ի Առստանդնուպօլիս :

§ 50. Յայտնութիւն Արաղայ սուրբ Նշանին :

Սուրբ Հռիփսիմեան կուսանք գալով Հայաստան բնակեցան Արաղայ լեռան գլխին. և սուրբն Հռիփսիմէ իւր հետ ունեցած Աննաց փայտի մասը թաղեց այն տեղը, և յայտնեցաւ 653 թ. որի պատմութիւնն Ղառընտիւրների և Յայսմաւուրքների մջ այսպէս է գրած, թէ Թողիկ անուն մէկ ճգնաւոր աւանդութեամբ դիտելով Հռիփսիմէի բերած սուրբ Նշանի այն տեղ պահած լինելը, խնդրումէր Աստուծոմէն յայտնել նորա տեղը : Մէկ օր իւր Յովէլ աշակերտի հետ լսեցին ձայն ինչ՝ և տեսան պայծառ լոյս Արաղայ լեռան մէկ վէմի վերայ, և տասն երկու լուսեղէն սիւներ նորա շուրջ, ուր բուրեց հոտ անոյշ, և երկնային զօրութեանց երգ լսուեցաւ մինչև օրուայ վեց ժամը, ապա վերացաւ վիմէն լուսեղէն նշանն՝ և մտաւ յեկեղեցին՝ ու կանգնեցաւ սեղանի վերայ. և նոքա ևս մտան ներս և երկրպագեցին սուրբ նշանին. իսկ լուսեղէն սիւներն մնացին տասն երկու օր. որ և հեռաւոր տեղերի բնակիչներուն տեսանելի եղան, և մեծ բազմութիւն հոգեորականաց և աշխարհականաց ժողովեցան՝ որոց հետ և Թողորոսի որդի Արթը նախարարն Աշտուտեաց, և Ներսէս Շինող Հայրապետն : Հետոյ շինեցին տասն երկու եկեղեցի լուսեղէն սիւների տեղը. իսկ եկեղեցին՝ որի մջ հանգեաւ սուրբ Նշանն՝ մեծացրին, և նորա մօտ շինեց վանք. և Աթոզիկոսն սահմանեց տօն հոկտեմբեր ամսում, ասելով Շարականը Նշանաւանայալն՝ և մէկ շաբաթ պահք, որ աշխարհիկ բարբառով կոչվումէ Անոյց պահք :

§ 51. Կաթողիկոսունք Հայոց հինգերորդ դար .

1. Սուրբ Սահակ Պարթևի վախճանելէն յետոյ նստաւ Կաթողիկոս Յովնէփ աշակերտ նորին Սահակայ և Սեբրոպայ՝ Վալայոց ձորէն (Վարաբազեազ) Հողոցիմ գիւղէն Սիւնեաց աշխարհի 441 թ.։ Սա արար ժողով ի Շահասպիվան՝ Ծագղոցն դաւառի եկեղեցին բարեկարգելու համար. նոյնպէս արար ժողով և Արտաշատ քաղաքում, ուր դրեց Միհրներսեհի թղթի պատասխանը. խնդրեց թղթով և փոքր թահոզոս կայսեր օգնութիւնը. ապա 451 թ. կալանաւորած տարան Պարսկաստան Ղևոնդեանց հետ, ուր և նահատակեցաւ 454 թ.։

2. Մելիքէ Մանազկերտեցի ընարեցաւ Կաթողիկոս 452 թ.։ Յովնէփի զնալէն յետոյ, և նստաւ Աթոռին հինգ տարի։

3. Մովսէս Ե. 457 թ. ութն տարի։—4. Ղեփ. յաշակերտութենէ սուրբ Սահակայ և Սեբրոպայ, 465 թ. տասն տարի։—5. Վրէնափոք Ե. 475 թ. հինգ տարի։—6. Յովնան Մանդակոնի՝ յաշակերտութենէ սրբոց թարգմանչաց 480 թ. վեց տարի և 6 ամիս։—7. Բաբէլէն. 487 թ. հինգ տարի. Սա արաւ ժողով ի Վազարշապատ և հերքեց Վազկեղոնի ժողովը։—8. Սահմէլ՝ Բղնունեաց գաւառէն՝ 492 թ. տասն տարի։

Վեցերորդ դար :

1. Բարկէնին յաջորդեց Մովսէս՝ Կոտայք գաւառէն՝ 502 թ. ութն տարի։—2. Սահակ Բ. Հարք գաւառէն 510 թ. հինգ տարի։—3. Վրէնափոք Բ. Բագրեւանդ գաւառէն 515 թ. վեց տարի։—4. Ղևոնք՝ Առբերանի գաւառէն՝ 521 թ. երեք տարի։—5. Ներսէս Բ. Աշտարակեցի՝ 524 թ. ինն տարի։—6. Յովնան Նէս Բ. Ղարեղենից գաւառէն՝ 533 թ. տասն և եօթն տարի։—7. Մովսէս Բ. Աղվարդցի 551 թ. որ նորոգեց տօմարը. սա հասնելով ի ծերութիւն՝ կարգեց իրան օգնական զՎրթանէս Ապիսիոպոսը 581 թ ուին, և կառավարեց եկեղեցին թէ առանձին և թէ Վրթանէսի հետ քառասուն և երեք տարի։—8. Աբ-

բահաճ Ե. Եպիսկոպոս Ռշտունեաց 594 թ: Սա արար ժողով
ի Գուլին և նշովեց զԱլեքիոն վարաց Աթողիկոսը քաղկեդո-
նականութեան համար. և նստաւ Աթողին քսան և երեք տարի:

Եօթներորդ դար:

Երրասամէն յետոյ ընտրեցաւ 1. Առիփաս՝ Երագածոն
գաւառէն՝ 616 թ. ութն տարի: Սա նորոգեց Հռիփսիմեանց
վկայարանը, և իւր կնիքն ևս զրաւ նոցա տապանի վերայ:—2.
Վրէնփափոյ Գ. Եպահունեաց գաւառէն՝ 625 թ. երեք տարի:
Սա ծագած շիրթութեան պատճառաւ նախարարներու մէջ
բամբասեցաւ, որպէս թէ նա է պատճառն. և որպէս զի առիթ
խռովութեան չտայ, կամաւ հրաժարեցաւ Հայրապետական իշ-
խանութենէ, և շինեց յոտն Մասեաց վանք կրօնաւորներու,
ուր անցուց իւր կեանքը:—3. Եղի՝ ‘Նիգ գաւառէն՝ 628 թ.
տասն տարի: 4. ‘Ներսէս Գ. Տայք գաւառէն, մականունանալ
Շիրնոզ, 640 թ. քսան տարի:—5. Ենասփաս՝ Եկոռի զիւղէն՝
661 թ. վեց տարի: Սա շինեց իւր հայրենի գեղում կրօնա-
ւորներու վանք և Եկեղեցի, աղքատանոցներ և հիւրանոցներ:
Սորա հրամանաւ Ենանիա Շիրակացի նորոգեց Տումարը, և
մինչդեռ կամենումէր հաստատել զայն ժողովով, վախճանումէ:
—6. Իսրայէլ՝ վանանդ գաւառէն՝ 667 թ. տասն տարի:—7.
Սահակ Գ. Ծորափորցի 667 թ. քսան ու վեց տարի Աթողին
նստեցաւ և տասն տարի գերի Գամասիոսում:

Ութներորդ դար:

Սահակ Գ. Աթողիկոսէն յետոյ ընտրեցաւ Եղի՝ Երձի-
շեցի 703 թ. տասնուչորս տարի: Սա արար ժողով Պարտաւ
քաղաքում, և ձգեց Եղուանից Աթողէն զԵրեսն Աթողիկո-
սը Բակուր կոչեցեալ՝ նորա քաղկեդոնականութեան համար:
—2. Յովնանէս Գ. Օձնեցի՝ Իմաստաւեր կոչեցեալ՝ 718 թ. տաս-
նումէկ տարի:—3. Գաւիթ Ե. Արտայք գաւառէն՝ 729 թ.
տասներկու տարի: Սա նեղացած լինելով Մահմետ ոստիկանի

ձեռքին՝ Աթուր զնաց յԱրամօնս զիւղը, ուղարկեց դեսպան
 Ամիրապետի մօտ, և փոխել տուաւ զնա, և ինքն դարձաւ ՚ի
 Գուխն:—4. Տրդատ Ա. Վանանդեցի 741 թ. քսանեւերեք տա-
 րի:—5. Տրդատ Բ. Գրասնաւոր գաւառէն՝ 764 թ. երեք տա-
 րի:—6. Սէօն՝ Արագածոտն գաւառէն 767 թ. ութն տարի: Սա-
 րար ժողով Պարտաւ քաղաքում եկեղեցին բարեկարգելու
 համար:—7. Եսայի. Վիգ գաւառէն՝ 775 թ. տասն երեք տարի:
 —8. Սպեփաննոս Ա. Գլունեցի 788 թ. երկու տարի:—9. Յովնէ՝
 790 թ. վեց ամիս:—10. Սողոմոն Գառնեցի 791 թ. մէկ տա-
 րի:—11. Գէորգ Ա. Աշտարակեցի 792 թ. երեք տարի:—12.
 Յովնէ Բ. Վարչն կոչեցեալ՝ 796 թ. տասնումէկ տարի:

Իններորդ դար:

1. Գառնի Բ. Մաղազ գաւառէն՝ նստաւ Սաթուղիկոս 806
 թ. քսան և եօթն տարի:—2. Յովնաննէս Ե. Ովայեցի՝ Կոտայք
 գաւառէն՝ 833 թ. քսան և երկու տարի:—3. Օստայեա Չազ-
 ցի՝ 854 թ. քսան և երկու տարի: Սա էր աշխարհական, և ժա-
 մանակի խոռովութեան պատճառաւ ձեռնադրեցաւ մէկ օրուայ
 մը Վահանայ, Ապիսկոպոս և Սաթուղիկոս: Արաւ ժողով
 Շիրակ վանում՝ Փոտ Պատրիարքի թղթի պատճառաւ, բայց
 եկեղեցին չէ ընդունում ժողովը:—4. Գեորգ Բ. Գառնի գա-
 ւառէն՝ 876 թ. քսան ու մէկ տարի:

ԲԱԺԻՆ ՉՈՐՈՐԳ .

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅ ԹԱԿԱՌՈՐԱՅ ԺԱՄԱՆԱԿ
490 ՏԱՐԻ. 885—1575 Թ :

§ 52. վիճակ եկեղեցւոյ Հայոց:

Թէպէտ Հայաստանի անկեալ Թագաւորութիւնն կանգնեցաւ Բագրատունեաց ցեղէն 885 Թ. որի առաջին Թագաւորն եղաւ Սմբատ Խոստովանողի որդի Աշոտ, բայց նորա մահէն յետոյ Թշուառութիւնքն անպակաս շարունակվումէին եկեղեցւոյ վերայ սյլազդի Հաղարացիներէն և Յոյներէն աշխարհակալական և կրօնական պատճառաւ՝ և Հայոց ոմանց արքայազուններէն և նախարարներէն Թագաւորական պատուին հասնելու պատճառաւ :

Բագրատունեաց ժամանակ:

Աշոտի ժամանակ Թէպէտ եկեղեցին վայելեց խաղաղութիւն, բայց շատ կարճատեւ. վասն զի նորա մահէն յետոյ երբ նստաւ Թագաւոր նորա որդին Սմբատ, յայնժամ Աշոտի եղբայրն Աբաս հռչակելով զինքը Թագաւոր Հայոց՝ բացուեցաւ ներքին պատերազմն, և Ակեղեցին ընկաւ Թշուառութեան մէջ : Յետոյ Արծրունեաց իշխանն Գազդիկ ապստամբեցաւ Սմբատէն, և առանձին Թագաւորեց Սասաղուրական աշխարհում՝ Յուսուփ ոստիկանի ձեռքով. և միարանեալ սոքա երկրքեանն ընդդէմ Սմբատայ՝ ոսնակոխ արին Հայաստանը տասն և ութն տարի, քանդեցին Ակեղեցիքը և Սանօրայքը, լռեցաւ Աստուածպաշտութիւնն, և ամենայն տեղ էր արիւնհեղութիւն : Սմբատի նահատակութենէն յետոյ նստաւ Թագաւոր նորա որդին Աշոտ

Բ. և այն ինչ Ազիզեցին դառն էր հանդատութիւն, յանկարծ վրդովեցաւ ներքին խռովութեամբ. զի Պաղիկ Արծրունի և Սմբատ նախարար Միսակեան Վարժուան քաղաքը իրանց ձեռքը ձգելու համար քանդեցին պատերազմերով միմեանց կալուածական երկիրները. այսպէս և միւս նախարարներն իրարու հետ և թագաւորի հետ էին պատերազմում, կողոպտեցին, քանդեցին և աւերեցին միմեանց կալուածները՝ առանց խնայելու սուրբ տաճարներին: Միւս կողմէն Յուսուփի զօրքն քար ու քանդարին շայաստանը, և ապա Ազերայիք, շիւսիսարնակ Աովկասականք, Յոյնք, նոյնպէս Պուզարացի և Աւտեացի շայք յարձակեցան շայաստանի սահմանակից գաւառների վերայ, և մրնացեալ շէն տեղերը անշէն արին: Յետոյ Յուսուփ ոստիկան առաւել ևս քանդելու համար հայոց Աշխարհը՝ թագ զրաւ Աշոտ Ապարապետի գլխին, որ էր Աշոտ օրինաւոր Թագաւորի հօրեղբայր Շապուհի որդին. այնուհետև վառեցաւ պատերազմի կրակը երկու հօրեղբորդւոց միջ, որի պատճառաւ մեծ մնաս կրեց Ազիզեցին. և նոյն ժամանակին Վրսք վերակացու հեռու մեր բռնել զՅովհաննէս Աթոռեկոսն. և իբրև չքաջողեցաւ այս, թափեց դառնութեան թոյնը Այրի Աւանրի վերայ յափշտակելով Ազիզեցւոյ սպասները, և ամենջելով միաբանները. ապա Բիւրական ամրոցին տիրելով կողոպտեց և սպանեց բնակիչները, և այս թշուառութիւնն քաշեց 13 տարի մինչև Աշոտի մահը:

Արաս Թագաւորի ժամանակ աշխարհն և եկեղեցին թէպէտ ստացան խաղաղութիւն ներքին և արտաքին խռովութիւններէն, սակայն կրօնական վիճակը շփոթեցաւ. զի Յոյնք Պաղկեդոնի ժողով պատճառաւ մեծ բռնութիւն վերկայրին իւրեանց բաժնում եղած շայերի վերայ, ստիպելով զնոսա կատարել ամենայն պաշտամունքները Յունական ծէսով, և յանձն առնողները կրկին մկրտումին և դրոշմում, եթէ քահանայ էր լինում՝ կրկին էին ձեռնադրում. վասնորոյ շատերն փախան մեծ շայաստանի կողմը. և ոչք որ նոցա միջ տղայ ժամանակին մը-

կրրտած կինն Յուճական ծէսով , Հայք ևս կրկին մկրտեցին , որով աւելի խոր արմատացաւ երկու ազգերի մէջ առելութիւնն :

Տասն և մէկ դարում Սկիւթացի Թաթարներն առաջնորդութեամբ Տուղրիւ բեկին յարձակեցան ի Վախճուան , Ղուին և Վեդ (Նըրեան) գաւառը սուպատակեցին , Նեկեղեցիքը պրեցին , և ստիպեցին բնակիչները ուրանալ քրիստոնէութիւնը . որի պս աճառաւ շատերն նահատակեցան՝ և շատերն էլ զերի բնական : Սակայն Հայաստանի ամենամեծ հարուածն և Բաղրատունեաց թագաւորութեան կործանումն եղաւ այն , որ անարի Յովհաննէս—Սմբատ թագաւորն դրսուոր բնծայից Աստիլ կայսեր Անի քաղաքը իւր գաւառներով . թեպէտ կայսեր եղբայրն Արտանդին՝ որ յաջորդեց նորան , այն պարզեւազիրը յանձնեց մէկ անօրէն Արապոս Վահանայի , որ յետ սոյ Յովհաննէս թագաւորին , բոց անաստուած Վահանայն պահեց իւր մօտ , և Արտանդինի մահէն յետոյ վաճառեց այն պարզեւազիրը Միքայէլ կայսեր վերայ , որ եղաւ պատճառ Հայաստանի թշուառութեան և քանդուելուն : Թի նորա յաջորդ Արտանդին Մոնամախ կայսր՝ անօրէն վկատ Սարգսի Արեւնեաց իշխանի խորհրդատուութեամբ կանչեց զՎաղիկ թագաւորը ի Արտանդինուպօլիս , և տիրեց Անի քաղաքին իւր գաւառների հետ 1046 թ . և կարգեց Յոյն վերակացու :

Եւս միջոցին Պարսից Տուղրիւ բեկ թագաւորէն ուղարկած 100,000 զօրքն՝ կրակով , սրով և գերութեամբ աւերեցին մինչև 24 գաւառներ : Իսկ Յոյնք՝ որպէս տեր աշխարհին՝ փոխանակ թշնամեաց առաջն առնելու , միւս կողմէն նորա կին աւերում , որպէս զի կարողանան Հայ անուներ ջնջել բոլորովին . վասնորոյ և արտաքին թշնամիքն համարձակ ոսեակոխ արին անտէր աշխարհը :

Արտանդին Տուղիճ կայսր հրաւիրելով իւր մօտ Հայ իշխանները , Աննքերիմ Երծրունու որդիքը և ուրիշները , առաջարկեց ընդունել Յուճական կրօնը , և ապա զգահրնկեց Ղատգիկ թագաւորէն , որ յետոյ կարողանայ բոլոր ազգը դարձնել .

Թէպէտ չհասաւ իւր նպատակին, բայց հետեանքն շատ վատ եղաւ. զի Յոյնք տեսանելով կայսեր և միւս իշխաններու և մեծամեծներու թշնամութիւնը շայոց հետ կրօնական մասին, սկսան համարձակ անարգել՝ հայհոյել շայերը և անհաւատ կանչել. և եթէ մէկ օտարական շայ էր անցանում նոցա քաղաքներէն կամ զիւզերէն, անասելի հայհոյութեամբ ծեծումէին և արտաքսում:

Այս պիւի թշուառ վիճակ ընդունելով քրիստոնեայ ազգէն, արտաքին թշնամիքն էին յարձակում: Արիստրան մեծ կոտորած անելով Պուլգարաց և Ադուանից աշխարհում, զիմեց Արարատեան աշխարհը, քանդեց, այրեց, կոտորեց և գերեց: Յետոյ առաւ Անի քաղաքը՝ որի բնակիչները խոտի նման հնձեց:

§ 53. Ռուբինեայ ժամանակ:

Ռուբինեայ թագաւորութիւնն կանգնեցաւ արտաքոյ շայաստանի Ախլիկիայում, և մեծ շայաստանն ոչ մի օգուտ չբտացաւ, այլ Պարսից և Վիլիթացի ազգերէն միշտ հալածանքի մէջ էր: Արեւմտեան շայաստանն ևս Յոյներէն նոյնն էր կրում կրօնական մասին. իսկ Ախլիկիայն ևս աւելի վտանգի պատահեցաւ շոտմայ Պապերու անհիմն, սուտ և խարբբայ խոստմունքներէն, որ ոչ միայն եկեղեցին խռովութեան մէջ ընկաւ Աատին հոգեւորականներէն, որք բուն էին զրել Ախլիկիայի կողմերում, այլ և թագաւորութիւնն ևս ընկաւ կրօնական շփոթութեան պատճառաւ:

Տաներկու դար:

1197 թ. պատահեցաւ Մուղալատիկ. և մեծ խռովութիւն և արիւնհեղութիւն պատահեց Յունաց և շայոց մէջ. և Յոյնք մէկ շարաթ առաջ կատարեցին քան զշայք. ուստի այն շայք՝ որք բնակվումէին Յունաց և Վրաց իշխանութեան ներքոյ, մեծ հալածանքի և բռնութեան ներքոյ ընկան, մինչև անգամ Վրաստանի մէջ, զուցէ Թիֆլիզում, այրեցին Վրացիք մի շա-

յոց Եկեղեցի Զատիկ օրը, որի մէջ այրեցան 40 հողէք :

Եյս անգլթութեան պատճառաւ շայք վրէժխնդիր եղան, և ոչնչ բանով Վրացիք չկարացին խաղաղացնել զնոսա, բայց եթէ վճարելով 100,000 դահական եկեղեցւոյ շնութեան համար և 40,000 դահական այրուածներու համար: Իսկ որք բնակուած էին Յունաց իշխանութեան ներքոյ՝ աչք բաց չարին: Իսասհակ Ենկեղոս Փիսիկ կոչեցեալ և նորա յաջորդ Ալէքս Ենկեղոս կայսերներու հալածանքներէն՝ բռնադատելով շայերն կատարել Յունաց պէս թէ՛ տօները և թէ՛ միւս արարողութիւնքը, և կրկին մկրտուիլ, դրոշմուիլ և ձեռնադրուիլ: Թէպէտ Վեոն մեծ իշխան և Գրիգոր Աթողեկոս առաքեցին ՚ի Սոսանդնուպօլս զՆերսէս Վամբրոնացին դադարեցնելու համար հալածանքը, սակայն անօգուտ եղաւ. զի աւելի սաստկացաւ հալածումն :

Վեոն մեծ իշխանի համար ուղարկելով Պապն Աեղեոս տիանոս արքայական թագ, առաջարկել էր երեք խնդիրը ընդունել, Ե. երևելի տօները ամսաթուով տօնել, Բ. ժողովուրդն պատարագի ժամանակ դուրս չգնալ Եկեղեցիէն, Գ. Ծանդեան և Զատիկ ճրագալուցին՝ չլուծանել պահքը:

Վեոն՝ որպէս զի կարողանայ վերականգնել շայոց թագաւորութիւնը, ընդունեց այն առաջարկութիւնքը ստորագրութեամբ տասներկու եպիսկոպոսաց, և ընկալաւ թագը. և յետոյ տեսնելով թէ Վատին հոգեւորականութիւնն այլ տեսակ է ներգործում, սկսաւ հալածել իւր տէրութեանն՝ ոչ միայն ըզնոսա, այլ և աշխարհականները. բայց այն ձեռագիր տալն մեծ խռովութիւն ձգեց Զորոյգեաացւոց մէջ. զի շաղբատեցիք և Սանահնեցիք, որոց գլխաւորներն էին Գրիգոր Տուտէ որդի և Գաւիթ Վորարեցի Երբեպիսկոպոսներն, դանդաղ գրեցին Վեոն թագաւորին Վերսէս Վամբրոնացւոյ վերայ, որ մէկն էր այն թղթի ձեռնագրողներէն, և որի վերայ կասկածաւոր էին, թէ հակամիտ է դէպի Վատինականութիւն և Յունականութիւն. և Վեոն սպառնալեաց թուղթ գրեց Վամբրոնացւոյ վերայ, եթէ

հետի չլինեայ նոր: Բնութեան, և ստանումէ պատասխանի գրած անպէհեր հոգեով . որի մէջ շատ անփայլուչ անարդական բաներ է գործ ածում իւր աստիճանակիցներու դէմ, և ափսոս որ Տուտեորդուոյ գրածի օրինակը չունինք :

Տանկերի դար:

1202 թ. 1 Էոնի ընտրութեամբ նստաւ Աթոզիկոս Յովհաննէս Արքեպիսկոպոս Սոյ Մեթաֆաոյ կոչեցեալ : Այս ընտրութեան չհաւանելով Փոքր Հայաստանի Հայքն նստեցրին աւանձին Աթոզիկոս Սերաստիոյ Ապիսկոպոսը զԱնանիայ, և Շիրակացիք՝ Բարսեղ Ապիսկոպոս Անեցին. այս անցքի վերայ Յովհաննէս Մծարարոյ տեսնելով թագաւորի անհոգութիւնը, արհամարհեց զնա, և 1 Էոն զրկեց զնա՝ սցա պատուէն նստեցնելով զԴաւիթ Գ. Արքակաղնեցին. և եղան Հինգ Աթոզիկոս, չորս սոքա՝ և Հինգերորդն Աթամարայ :

Այս ժամանակին ընկաւ խռովութիւն Արեւելեան Ապիսկոպոսաց մէջ, երբ Չաքարիս սպասաւարն ստացաւ Սոյ ժողովի վճիռն 1204 թ. վրանի մէջ պատարագելու համար պատերազմի ժամանակ բայց սպասաւարն ձգեց խաղաղութիւն իշխանական զօրութեամբ :

1 Էոն թագաւորի մահէն յետոյ սկսուամէ կրօնական շփոթութիւնքն և խռովութիւնքն. զի նա չունելով արու ժառանգութեամբութեան, գահակալու մեն 1 ատին իշխաններ՝ ծնուած Ախլիկիայի տիրապետոյներու աշջնիներէն. արիւն հեղութիւնն լինումէ անպակաս. և ոմանք Աթոզիկոսներէն ևս 1 ատնական ծէսերով էին վարում, և սոքա են :

1 Էոնի դուստր Չարկէ ամուսնացնելով Անտիոքայ կոմսի որդուոյ Փիլիպպոսի հետ, որ մօրով Հայ էր, նստեցրին թագաւոր, երգում անելով՝ որ չստիպէ Հայերը դէպ ի 1 ատնականութիւն. բայց երկու տարի անցնելով սկսաւ նեղել ազգը. և պալատի զարդը և արքայական թաղը ուղարկեց յԱնտիոք, վասնորոյ բանուեցաւ բանաւում, ուր և մեռաւ :

Առստանդին Ե. Աթոռիկոս Բարձրերդցի ընդունեց հան-
զանակի մջ ասել շողոյն սրբոյ բղտունն և յԱբգ-ոյ :

1293 թ. Եղիպտոսի Սուլթան Բշրաֆ աւերեց շառնկան՝
և Աթոռիկոսարանը քանդեց, գերի արաւ զՍտեփանոս Գ. Աթ-
թոռիկոսը և եկեղեցեաց սրբազան անօթները և Նուսաուրչայ
աջը. և ապա բռնաւորն կրելով աստուածային պատուհաս՝ յեա
դարձրեց այն ամենայն սրբութիւնքը :

Գրիգոր Ե. Աթոռիկոս Ենաւարդեցի կրօնական մեծ խո-
փութեան պատճառ դարձաւ թէ կենդանի ժամանակ և թէ մա-
հէն յետոյ: Աս միանդամայն աշխատումը ձգել շայոց եկեղե-
ցոյ մջ ճշունական և Նատինական ձէսերը և դաւանութիւն-
քը. ուստի ինն յօդուածով շրջաբերական թուղթ գրեց ամե-
նայն տեղ. սակայն ամենքեանքը ընդդէմ կանդնեցան, մանա-
ւանդ արեւելեան եպիսկոպոսունք, որոց գլխաւորն էր Ստեփան-
ոս Աւուրեղեան, և գրեցին նորա թղթի հերքումն, խնդրելով
զնա հեռի մնալ օտար ազդերի հետ կրօնական միարանութե-
նէ: Սակայն չդադարեց Աթոռիկոսն իւր նպատակը առաջ տա-
նելէն, բայց տեանելով զործի անյաջողութիւնը՝ գրեց իւր դա-
ւանութիւնը և արարողութեանց սահմանադրութիւնն, և մերձ
իւր վախճանին յանձնեց Նեոն Բ. թագաւորին :

Տան և չորս դար:

1307 թ. Նեոն թագաւոր և շեթում թագաւորահայր
ժողով զումարեցին Ախա քաղաքում Եպիսկոպոսներէն, Ար-
դապեաններէն և վանահայրներէն. ուր կարդալով Նատինացեալ
Գրիգոր Ենաւարդեցոյ դաւանութիւնը ինն գլխով, ստիպեց
Ետեանակայները ստորագրել. և ամենքեան երկիւղէն կատարեցին
թագաւորի կամքը. սակայն ոչ մի տեղ զործ չդրուեցաւ, բայց
ի գահասնիստ Ախա քաղաքէն: Եյս բռնութիւնը թշնամութիւն
ձգեց ուխտապահ իշխանների մջ ընդդէմ թագաւորին և շե-
թումին, և Առստանդին Բ. Աթոռիկոսին, և ոմանք գնացին
թագաւորներու Ալիարդու իշխանի մօտ, որ նստումը Ալիկիա-

յում. զրգուեցին զնա նոցա դէմ և նոցա համախոհներու դէմ. և այլապէի իշխանն դաւաճանութեամբ հրաւիրելով զնոսա իւրեանց մեծամեծ իշխաններով մինչև 40 հոգի, կոտորել տուաւ: Ահա այս եղաւ առաջին պտուղն կրօնական խռովութեան:

Օչին, եղբայր շեթում թագաւորի, իմանալով իւր եղբոր և եղբորորդի Ղևոնի սպաննուելը կրօնական պատճառաւ, վառեցաւ սրամտութեամբ, և հրաման հանեց ընդունել Անաւարձեցի կրօնափոխ Աթողիկոսի հերձուածողական դաւանութիւնը և սահմանադրութիւնքը եկեղեցական արարողութեանց. այս պատճառաւ մեծ բազմութիւն հոգևորականաց և աշխարհականաց ժողովեցան Աիս քաղաքում 1309 թ. ուր ծագեցաւ մեծ խռովութիւն հոգևորականաց, իշխանաց, ռամիկների մէջ, մինչև անգամ և կանանց:

Այս խռովութիւնը դադարեցնելու համար ձեռք տուաւ բռնութեան Առստանդին Ղատինացեալ Աթողիկոսի և մի քանի կրօնափոխ իշխաններու խորհրդով, բանտարկելով եպիսկոպոսներէն և վարդապետներէն գլխաւորները, պստրելով մի քանի կրօնաւորներ, և աշխարհականներէն այր և կին սպանելով: Բայց սակայն ոչինչ զործ չվճարեց, այլ առաւել ևս զբրդեց ժողովուրդը, որ մինչև անգամ և երեսանց համոզուածներն ևս ձգեցին զիմալը և միանալով միւսներու հետ շատ արիւնհեղութիւն գործեցին նզովքի արժանի Անաւարձեցեոյ հետեւողներն. այս արիւնէն չմնացին ազատ և՛ Ղատինացեալ հոգևորականք, մինչև անգամ Արղըումի Գլիզոր Ապիսկոպոսը սպանեցին բաժակի մէջ ջուր խառնելու համար:

Թագաւորի և Աթողիկոսի այս ամենայն անիրաւ և անզուսպ զործողութիւնքը չտանելով Արուսաղէմի Սարգիս Արքեպիսկոպոսն մերժեց երկուսի հրամանը, և իւր հօտը պահեց նոցա հերձուածէն. և որպէս զի բոլորովին դուրս գայ Աթողիկոսի իշխանութենէն, հրովարտակ առաւ 1311 թ. Ազիպատոսի Սուլթանէն անկախութեան համար, ստանալով Պապընի կոչումը, այսինքն իշխան, պէյ, զի նորան տուած էր իշխանութիւն

դատելու և աշխարհական գործերը, և որովհետև Յունաց Ապիսկոպոսն կրումէ Արուսաղէմի Պատրիարք տիտղոսը, և պատրիկ բառը մօտիկ լինելով Պատրիարք անունին, վասնորոյ և Սարգիս Աբբեպիսկոպոսն կոչեցաւ Պապրէարք, որին յաջորդումն մինչև ջայսօր նոյն տիտղոսով . բայց երբոր կաթողիկոսական Աթոռն ի Սոյ փոխադրեցաւ յԱջմիածին, այնուհետև Արուսաղէմի պատրիարքութիւնն մտաւ Պաթողիկոսի ամենայն Հայոց իրաւասութեան տակ . և նորա Ապիսկոպոսներն ձեռնադրովումն յԱջմիածին . Մեռոնը տանումն անտի, և պարզ եկեղեցական խնդիրները առաջարկումն Պաթողիկոսի լուծման :

Օշին թագաւոր, որ զինքը տուած էր հպատակ Հռոմոյ Պապին, ունայն յուսով օգնութիւն զտանելու, կրկին ժողով զումարեց յԱտանա 1316 թ. ուր դասն 17 Ապիսկոպոսք, որք թէպէտ ընդունեցին մոլորեալ Անաւարդեցու ինն զլեով կանոնները, սակայն երեսանց էր, և շատերը չկատարեցին, միայն Պաթողիկոստրանը և Ալիկիայի մի քանի եկեղեցիք, վասնորոյ թագաւորն և Պաթողիկոսն Առտանդին յետկացան ստիպելն : Բայց Օշին այրիանալով՝ ամուսնացաւ Յովհաննա անուն օրիորդի հետ, որ Ալիկիայի արքայական ցեղէն էր և կրօնքով Ղատին, և Պապի հաճութեամբ պահումէր պալատի մէջ վեց Ղատին կրօնաւոր : Բայց այս յարակցութիւնը խաբերայ պապերու հետ՝ եղաւ պատճառ թագաւորութեան անկման :

1. Լոն Ա. Օշինի որդին հետևելով իւր հօր ճանապարհին՝ զրել էր իւր յոյսը Պապի և Ղատին իշխաններու վերայ, որով ձգեց աշխարհը և եկեղեցին մեծ թշուառութեան և աւերածութեանց ներքոյ : Ազիպտոսի և Բաղդատի Մէլք Ասար Սուլթանն լսելով Աւրոպացւոյ արշաւանքն Արուսաղէմի վերայ, և Հայոց թագաւորի կրօնական կապակցութիւնը և դրաւոր յարակցութիւնը Պապի հետ, միացաւ թուրքմաններու և թաթարներու իշխանների հետ, և յարձակեցաւ Ալիկիայի վերայ . քանզեց, զերեց, աւերեց և այրեց քաղաքները և ե-

կեղեցիքը: Եյս թշուառութեան ժամանակ Հայոց իշխանքն չօգնեցին թաղաւորին կրօնական տակըւթեան պատճառաւ: Եպա Առտտանդին Գ. Վաթողիկոսի միջնորդութեամբ Թաթարներու Խոանն 20,000 զօրք ուղարկեց Ղ. Լեոնին օգնութիւն, և հաշտեցրեց ևս Եղիպատոսի Սուլթանի հետ:

Յաիր Բ. Վաթողիկոս Ստեղծ ժամանակ, որ Ենաւարդեցու քեռորդին էր, մտաւ Հայաստան աշխարհի մէջ Աւնիթոռներու ոտքը. որոց զլեաւորն էր Բարդուղիմէոս Ապիսկոպոս մեսիօններու կարգէն, քարոզումը Ատրպատականի կողմը, և արտաքին բարեկրօնութեամբ ձգեց իւր կողմը շատերը: Սորա համբաւը լսելով Ասայի Ալարդասպետ Վաչեցի՝ Եռաջնորդ Գայլեճորի Աւանքի՝ Արեւմտայ մօտ, որ ունէր մինչև 360 աշակերտ, ուղարկեց նորա մօտ աշակերտներէն մէկը Յովհաննէս Ալարդասպետ Վաչեցիին խմանալու նորա գործողութիւնը, և այս տխմարն շուտ խաբուելով Բարդուղիմէոսի կեղծուպատիր խօսակցութենէ՝ ընդունումէ լատինականութիւնը, և եղաւ երկրորդ Ալասակ կրօնական խօսվութեան. սովորումէ ինքն Ատափներէն, և նորան ուսուցանումէ Հայերէն, և սկսումն թարգմանել Ատափնաց մի քանի գրեանք Հայ լեզուով. և ապա հրատարակելով իւր գիւղը, և իւր ընկերակիցներէն 15 հօդի իւրանման թեթեամբներ ձգումէ լատինականութեան խորանդունդի մէջ. և անուհիտե վարվումն Ատափական ծէսերով. ուստի հոգեորականք և աշխարհականք հալածանք են յարուցանում դոցա վերայ, և Ղ. Լեոն թաղաւոր բաժարկումէ ձեռքը ընկածները:

Իսկ Ալասակ Յովհաննէս Վաչեցիին Պապի հրամանով հաստատումէ Հայաստանի մէջ Գոմինիլեան կարգը 1337 թ. իսկ նորա աշակերտներն հիմնումն վանքեր զանազան տեղերում ՚ի Մարաղայ, Նախիջևան, Սուլթանիա, Տիփսիս, Թեոդոսիա ևլն: Արքա թարգմանումն Ատափներէն գրեանք, և մեծ հարուած են տալի բուն Հայկաբանութեան իւրեանց աղճատ ոճով. յորոց մի քանիսը կան տպուած, և զպղաւի են հայկաբան ընթերցող-

ներու համար, իսկ նոցա համար յախտննական սև կնիք սրբազան լեզուի սրբապղծութեան համար :

Ունիթոսներու խումբն օրրստօրէ շատանալով երէք դաս բաժանեցաւ, 1) էին դաւանութեամբ Ղատին, իսկ արարողութիւնքն կատարումէին ըստ Հայոց, 2) կոչվումէր Հայ կաթողիկ, մի քանի ծէսերը փոխելով, և սոքա էին ի թէնդոսիա, ի Կախիջւան և յԱրնջակ, և 3) ամենայն բանով, մինչև անգամ և զգեստով էին Ունիթոսներ: Սոքա այնչափ յանդուգներ էին և հեռացած սուրբ Աւետարանէն, որ մկրտութիւնը, զրոշմը և ձեռնադրութիւնը կրկնումէին. վանորոյ Ղևոն թաղաւոր և Յակոբ Աթոռիկոս տեսնելով նոցա այս զործողութիւնքը՝ չկարացին համբերել, և թաղաւորական իշխանութիւնն բանտարկելով և հալածելով հազութե թէ խաղաղացրեց խոռովութիւնը: Բայց յետոյ դուրս եկան Կերսէս Պալեանց Արմիայի Ապխսկոպոսը և Սիմէօն պէկ իբր Ապխսկոպոս Արզումի՝ և ասկնուվրայ արին Հայաստանը՝ մինչև իրանց հալածուելը :

Ղևոն՝ որ մէկ կողմէն հալածեց Ունիթոսներն, միւս կողմէն ձգեց Արիւկիայն Ղատիններու ազդեցութեան ներքոյ, զի սպանել տուաւ իւր աներ Օշն պայլը, որ տէրութեան Խնամակալն էր և նորա Աստանդին եղբայրը, և նոցա տեղ կարգեց իւր հօրաքեռորդի Յովհաննէսը (Շիւանը) Պայլ (այսինքն իշխանաց իշխան), և Պեւամուռդ Ղուսինեանը, որ իւր Ղատին ազգականներէն մէկն էր, կարգեց Առօրիկոսի իշխան, նոյնպէս արաւ և Հայ իշխանների մէջ փոփոխութիւնք, գնելով նոցա տեղը Ղատին իշխաններ: Սպանել տուաւ և իւր կինը, և սրակեցաւ Արիւկիայի Թաղաւորի աղջկայ հետ: Ի՞նչ կլինէր արդեօք այս ժամանակին եկեղեցւոյ և աշխարհի վիճակը: Այս եղաւ, որ Բերկիայի Եմիրայն և Կասր Սուլթան քարուքանդ արին Արիւկիայն 1335 և 1337 թ. և ապա Ղևոնի խնդրանօք հաշտեցաւ Սուլթանն այն պայմանաւ, որ ոչնչ յարակցութիւն և բանազնացութիւն չունենայ Պապի և Երեւմտեան ազգերի հետ, զոր և ընդունեց Ղևոն: Բայց Բենեկտիկոսոս Պապի օրէնս ընդդէմ գործքն, այն

է սուտ կոնդակն արձակման Վեոնի երդումն, որով նորոգեցաւ թղթակցութիւնն զերաքսի հետ, եղաւ պատճառ տասն և վեց բերդի քանդուելուն Սուլթանի ձեռքով, և Վաթիղիկոսըն ևս զըկեցաւ Աթուէն, որ յորդորումէր զԹաղաւորն կրտսրել հողմախօս Պապի հետ թղթակցութիւնը և ամենայն յարակցութիւնը՝ աշխարհի և եկեղեցւոյ խաղաղութեան համար:

Յովհաննէս Պայը՝ յաջորդ Վեոնի միանգամայն և Վատին՝ բայց մօրով Հայ, ժառանգելով զահր, հրովարտակ հանեց որ ամենքեան ընդունեն լատինականութիւն. վասնորոյ և սպանեցաւ մի տարի թաղաւորելն յետոյ. և նստաւ նորա եղբայր Պուխտոն. սա ևս չպահեց զգուշութիւն, այլ եղբոր ճանապարհը բռնեց. վասնորոյ սպանեցաւ երկու տարուայ վերայ:

Վեոն Զ. Վուսինեան, Վատինադաւան, իւր յոյսը դրած էր միայն Պապի և Վատին թաղաւորներու վերայ: Շրջակայ բարբարոս ազգերն, որ թշնամիք էին Հայոց թաղաւորներու՝ Պապի հետ յարակցութիւն ունենալու պատճառաւ, վասնորոյ 1374 թ. Նզլիպտոսի Ամիրայն անհամար բազմութեամբ յարձակեցաւ Սիլիկիայի և նորա բոլոր քաղաքների, զիւղերի և բերդերի վերայ. քանդեցին և այրեցին բոլոր շինութիւնքը, սպանեցին անհամար հողիք, բացեցին թաղաւորներու և իշխաններու զերեզմանները, և ամենայն բան կրակ տուին, որ այլ ևս չլինի յոյս վերանորոգութեան. զերի ընկաւ թաղաւորն իւր ընտանիքով, և վերջացաւ թաղաւորութիւնն Ռուբինեանց ցեղէն 1375 թ.:

Հայաստան աշխարհ, որ սպասումէր օրրստօրէ զօրանալու Ռուբինեանց թաղաւորութեան Սիլիկիայում, և մանելու նորա իշխանութեան ներքոյ, ստուարացնել նորա զօրքը, և հալածել իւր բռնաւորները նորա օգնականութեամբ, յիտ կանգնեցաւ ոչ միայն բնիկ Հայաստանն, որ զանազան ազգերի իշխանութեան ներքոյ էր, այլ և Սիլիկիայի Հայերն՝ իւրեանց թաղաւորներու լատինականութեան պատճառաւ, և այս եղև նորա պտուղն— Հայոց վերջին կործանումն և ստրկութիւնն, այս

եղաւ սրբոյն Պետրոսի սուտ անուն յաջորդներու խաբերայական կոնդակներու պտուղն, որ միայն իւրեանց զահասիրութեան տարածելն էր շայոց վերայ՝ և թագաւորութեան կործանումն՝ և ոչ օղնելն: Այս եղաւ շայոց իշխաններու յիմարութեան պտուղն՝ կարգելով կրօնամուկ Ատոն թագաւորազուններէն իւրեանց աշխարհի վերայ թագաւորներ :

1387 թ. Անկիթամուր Խան Աջօղբէկ թագարներու՝ անհամար զօրքով յարձակեցաւ շայաստան, քարուքանդ արաւբնակութիւնքը, եկեղեցիքը և վանորայքը, սպանեց և զերեց անհամար բազմութիւն :

§ 54. Արժանայիշատակ անձինք.

Իններորդ դարում.

1) Յովհաննէս Աթողիկոս պատմարան: Թէպէտ նոր էր ծաղկել սորա ժամանակ Բաղրատունեաց թագաւորութիւնն, սակայն շատ հալածանքներ կրեց և թափառական կեանք քաշեց :

Նա զեսպանութեամբ զնաց 905 թ. Սմբատ Աշոտեան թագաւորէն Յուսուփ ոստիկանի մօտ, և բանտարկեցաւ. և շատ նեղութիւն քաշելէն յետոյ ազատեցաւ զրամով, և փախաւ Աղուանից Ատրներսէ՛հ թագաւորի մօտ: Ապա զնաց Ալբաց աշխարհը, ուր ստացաւ նամակ Յունաց Նիկողայոս Պատրիարքէն, որով խնդրումը խաղաղութիւն ձգել Ալբաց՝ Ափխազաց և շայոց մէջ, և միարան պատերազմել շաղարացւոց դէմ, խոստանալով և կայսեր օգնութիւնը: Այս նամակով փոքր ինչ մխիթարեցաւ Աթողիկոսն, և հաշտութիւն ձգեց Ալբաց՝ Ափխազաց և շայոց մէջ: Յետոյ զնաց Տարոնի գաւառը հաշտեցնելու նախարարները, և զրեց թուղթ Աոստանդին Պերփեռուճէն կայսեր վերայ 920 թ. խնդրելով օգնութիւն շաղարացւոց դէմ: Այսրն սիրով հրաւիրեց զնա և զԱշոտ Բ. թագաւոր շայոց: Թագաւորն զնաց, բայց Աթողիկոսն ոչ,

որ քաղկեդոնականութեան համար խօսք ու զրոյց չլինի, և խը-
նովութիւն չընկնի ազգի մէջ: Աս երեք անգամ հաշտութիւն
ձղեց Աշոտ օրինաւոր Թաղաւորի և Աշոտ բռնաւորի մէջ: Աւ-
երբոր Աաթողիկոսարանն յափշտակեցաւ՝ և եղաւ՝ Աբար Ա շերա-
կացուի ծառայից բնակարան, յայնժամ և Յովհաննէս Աաթո-
ղիկոս Թողեց միանգամայն Աթոռը՝ և զնաց ի Ա շապուրական
Պապիկ բռնաւորի մօտ 994 թ. և բնակեցաւ յԱղթամար,
ուր աւարտեց իւր պատմութիւնը, և վախճանեցաւ անդ. և
Աթոռի փոխադրութիւնն յԱղթամար եղաւ յետոյ պատճառ-
բաժանման Աաթողիկոսութեան:

Տասն եւ մի դար.

2) Պետրոս Ա. Աաթողիկոս Պէփփփարչ) անուանեալ՝ էր
հոչակաւոր զիտութեամբ և հանձարով, և խոհեմ կառավա-
րութեամբ սիրելի եղաւ ազգին: Սա 1022 թ. զնաց Ա շախլ
կայսեր մօտ յաշխարհն Խաղտեաց՝ Յովհաննէս—Սմբատ Հա-
յոց Թաղաւորի կողմէն նորա նամակով, որով յանձնելով կայ-
սեր իւր տէրութիւնը՝ խնդրում, պաշտպանութիւն: Սնարով
այնտեղ մեծ պատուով՝ կատարում, կայսեր առաջարկութեամբ
Ջրօրհնեաց հանդէսը Հայոց արարողութեամբ, և Խաչակն-
քերով ջուրը Աննայ Փայտով, և Թափելով սուրբ Սեոռնը՝ ջրի
ընթացքը կանգնում, և երեւումն լուսի ճառագայթներ, և
այս հրաշքով կոչեցաւ Պէփփարչ. և ապա մեծ պատուով վե-
րադառնում, ի Սերասիա Սենէքերիմ՝ Արծրունի Թաղաւորի
մօտ, և մնում, երկու տարի. և 1025 թ. դառնալով յԱնի,
Թաղաւորն և ժողովուրդն սկսումն ծուռ աչքով նայել նորա
վերայ. բայց նա երկպառակութեան պատճառ չտալու համար՝
հեռանում, Ա շապուրական աշխարհի Չորոյ վանքը, ուր մնում
չորս տարի: Այս բանի վերայ ներանալով Հայք՝ հրաւիրեցին
զնա նենգութեամբ, և բանտարկեցին Վջնի ամրոցում. ուր
մնաց 17 ամիս. և նորա փոխանակ դրին Աաթողիկոս Սանահնի
վանահայր Պէոսկորոս Ապիսկոպոսը. և սորա կառավարու-

Թիւնը չկարելով տանել ազգը, ժողով զուամարեցաւ Անի շաղաքում 7,000 անձինքներէն ընդ նախադասութեամբ Ազուանից Յովսէփ Աթոռղիկոսի, և կրկին հաստատեցաւ Պետրոս իշխանութեան մէջ, իսկ Ղեկորոս ընկաւ :

Բազրատունեաց թաղաւորութեան ընկնելէն յետոյ մեծ հալածանքներ կրեց Անի քաղաքի Յոյն վերակացուէն. քշեցին զնա Աարնոյ նահանգի Արծն քաղաքը, և իւր Տեղապահ զբաւ Խաչիկ Ապիսկոպոսը. իսկ Արծնոյ քաղաքապետն յանկարծ բռնել առաւ զնա Խաղառիչ բերդում. վասն զի Յոյնք կամենումէին Աթոռղիկոսութիւնը ևս վերայնել : Ապա Մոնոմախ կայսեր հրաւիրելով զնաց ի Աոստանդնուպօլիս, բայց Աթոռղիկոսական շքով՝ այն է 300 զբահաւորուած մարդերով, 100 Ապիսկոպոսներով և Աւարդապետներով, 200 հետեակով. և երբոր ներկայանումէր կայսեր՝ հովուական Պաւլազանը առջևն էին տանում : Այսք պահեց զնա ի Ա. Պօլիս երեք տարի, և միտքն էր բոլորովին արգիել զնա այն տեղ. բայց Ասով Արծրունոյ երաշխաւորութեամբ արձակեց զնա, և նստաւ Սեբաստիայի սուրբ Աշան վանքում, ուր և վախճանեցաւ 1058 թուին :

2) Ղարիզոր Աթոռղիկոս Ա կայսէր կոչեցեալ՝ էր Ղարիզոր Մաղրիսարոսի որդին, Պալհաւունի ցեղէն, Առուարչի սերունդէն, բայց իզական սեռէն, որի նախամայրն համարվումէր սուրբ Մահալի Պարթևի զուտոր Անոյշ : Աստաջ կոչվումէր Աւահրամ, քաջաւարժ Յունական դպրութեան մէջ. և իւր հօր տեղ կարգած էր Ղուբս. ապա վառուելով աւտուածային սիրով՝ թողեց իշխանական փառքը, կինը և որդիքը, և եղաւ կրօնաւոր. որի սրբակեցութիւնը և շնորհքը տեսնելով ազգը՝ ընտրեց զնա Աթոռղիկոս 1065 թ. և անուանեցաւ Ղարիզոր՝ իւր նախահօր անունով, այսինքն սուրբ Ղարիզոր Առուարչի, որի յաջորդութիւնը նորոգեց քաղաքապետութեան, և սովորութիւն ընկաւ Հայաստանեայց Ակեղեցւոյ մէջ, քաղ օրինակի Արեւմտեան Ակեղեցւոյ, փոխել ձեռնադրութեան ժամանակ

Մկրտուժեան անունը: «Կա նորոգեց վանքերը, և զարդարեց եկեղեցիքը բարեկարգութեամբ, մինչև անգամ ոտքով շքեցաւ ժողովրդին քարոզելու և մխիթարելու. և տեսնելով ազդիս կրած վշտերը և նեղութիւնքը, ձեռնադրեց իւր տեղ Առնեցի Գեորգ Վարդապետը՝ իւր քարտուղարը 1061 թ. և ինքն բնակեցաւ Սեաւ լեռան վանքում, սակայն ժողովուրդն զիմուռնէր առ նա: Գեորգ Աթոռղիկոս նախաստիք համարելով ժողովրդի գնայն նորա մօտ՝ խռովութիւն ձգեց, որի համար զրկեցաւ պաշտօնէն, և Վկայասէրն կրկին յանձն առաւ Աթոռղիկոսութիւնը:

Յետ այսորիկ գնաց յԱնի քաղաք, ուր տեղապահ կարգեց իւր քեռորդի Բարսեղ Ապիսկոպոսը, և անտի գնումէ Հռոմ, ապա Արուսաղէմ և յետոյ Ազիպտոս. և ձեռնադրումէ Մնմփիս քաղաքում իւր քեռորդի Գրիգորիսը Առաջնորդ այն կողմը եղած Հայոց վերայ, և ինքն վերադարձաւ յԱրեգի վանքը Սեաւ լեռան:

Հայրապետական Աթոռի փոխադրելու պատճառաւ ի Ալիւկիա՝ Արեւելեան Հայք Վկայասէրի հաճութեամբ ձեռնադրել տուին Բարսեղ Ապիսկոպոսը՝ Աթոռղիկոս 1082 թ.: Այս ժամանակին Գրիգոր Աթոռղիկոս գնաց Ա. Պօլիս Ալէքսի կայսեր մօտ, և խաղաղացրեց շփոթութիւնքը՝ ընկած Հայոց և Յունաց մէջ. և ապա գտաւ Արուսաղէմում, երբ խաչակիր զօրքն առաջին անգամ առան զայն. և վերադառնալով յԱրեգի վանքը՝ պարապումէր մատենադրութեամբ մինչև իւր վախճանը 1105 թ.:

Երկուսասանորդ դար:

4) «Ներսէս Աթոռղիկոս Արայեցի՝ մականուանեալ Շնորհապէ իւր քաղցրախօս վարդապետութեան համար. էր որդի Ապիրատ Պաշաւունի իշխանի Ծովք զրեկի, և կրտսեր եղբայր Գրիգոր Գ. Աթոռղիկոսի. ծնաւ 1098 կամ 1100 թ. և մանուկ ժամանակին գտանվումէր իւր եղբօր հետ Գրիգոր Վկայ-

յասիրի և Քարսեղ Աթոռիկոսի հոգաբարձութեան ներքոյ :
 Աւսու Ենաւ լեռան Կարմիր վանքի Առաջնորդ Ատեփանոս
 գիտնականի մօտ, ձեռնադրեցաւ իւր եղբորէն քահանայ 1125
 թՎ. և ապա Եպիսկոպոս 1135 թՎ. և ամենայն գործի մէջ օգ-
 նական էր իւր եղբորը, հոգ տանելով ազգի բարօրութեան և
 Եկեղեցւոյ բարեկարգութեան համար: 1141 թՎ. Լատինաց
 հրաւիրելով՝ գտաւ Պրիլոդր Աթոռիկոսի հետ Անտիոքայ ժո-
 դովում. այլ թէ ինչ գործի համար էր ժողովն, յայտնի չէ :
 Սա դադարեցրեց մեծ խռովութիւնը, որ կար թորոս և Օշին
 իշխաններու մէջ. և յետ դառնալու ժամանակ գնաց Արիկիա-
 յի Մամեստիա քաղաքը 1165 թՎ. ներկայացաւ Մանուէլ կայ-
 սեր փեսայ Ալէքս իշխանին, որի հետ խօսակցելով՝ ցոյց տուաւ
 իւր խոհականութիւնը և իմաստութիւնը, և իշխանն սիրով
 կապուեցաւ նորա հետ, որ զկնի շատ խօսակցութեանց երկուց
 եկեղեցեաց բաժանման պատճառների վերայ՝ խնդրեց սուրբ
 Կերսեսէն Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը, զոր և
 ստացաւ. և այս եղաւ սկիզբն բանազնացութեան Յունաց և
 Հայոց մէջ միաբանութեան վերայ :

Պրիլոդր Աթոռիկոս զգալով իւր մերձ վախճանը՝ ձեռնա-
 դրումէ Կերսէսը Աթոռիկոս 1166 թՎ. որ որպէս արժանաւոր
 ժառանգ Հայրապետական Աթոռի բարեկարգելով և բարեզար-
 դելով եկեղեցին ըստ ամենայն մասանց՝ վախճանումէ 1173 թՎ.
 որի մահուն լուրն շատ տրտմեցնումէ զկայսրն Մանուէլ և Պատ-
 րիարքին :

5) Կերսէս Լամբրօնացի, որոյ Մկրտութեան անունն է
 Ամբատ, էր որդի Օշին իշխանի Լամբրօնի, ծնաւ 1153 թՎ. և մօր
 արգանդէն նուիրած Աստուծոյն: Երբոր ծնաւ՝ ծնողքն տեսնելով
 նորա կերպարանքի դեղեցկութիւնը, զանց արին իւրեանց ուխտը.
 բայց աղայի տկարութեան պատճառաւ զղջացին ու տարան
 Ալեւոս վանքը՝ և նուիրեցին Աստուծոյ: Հասակի մեծանալու
 հետ զարգանումէր և շնորհքով. նորա դաստիարակն էր Յով-
 հաննէս գիտնական վարդապետ ոմն՝ միաբան նոյն վանքի, և զը-

տաւ յոյժ յառաջադէմ՝ ուսման մեջ, մանաւանդ զի ունէր բընական ձիրք. ուսաւ և դպրութիւն Յունաց, Լատինաց և Ազիպտացոյ. և իւր ուշիմամտութեամբ և հանձարախօսութեամբ զարմացնումէր ամենքը :

Նորա 16 տարեկան հասակում՝ մեռաւ նորա հայրն Օշին, և կտակեց որ նա ժամանակին կարգուի Առաջնորդ Ալեուայ վանքին, զոր ինքն էր շինել. բայց Ներսէս լսելով զայս՝ կամեցաւ առանձնանալ յանապատ և ձգնաւորական կեանք վարել. իսկ նորա Էշահանգուխտ մայրն պատճառելով Արուստղէմ գնալը՝ տարաւ զնա իւր հօրեղբայր Ներսէս Էշորհայրոյ մօտ. զոր ձեռնադրեց քահանայ, և մնաց կաթողիկոսարանում : Եպա ըստ իւր խնդրոյ և հրամանաւ Հայրապետին զնոց Աւաւ.— Լեւան վանքը, ուր աշակերտեցաւ զխանական Ասեփանոս վարդապետին Տէրացոս կոչեցեալ, և լցաւ աստուածային զխութեամբ. և 18 տարեկան հասակում սկսաւ ատենան կանգնիլ Լամբրօնի եկեղեցոյ և քարոզել. և անունն հռչակեցաւ ամենայն տեղ : Յետոյ առանձնացաւ Սաղրու կոչեցեալ անապատում Տորոսի լեռներում, ուր պարապումէր շարադրութեամբ և թարգմանութեամբ. և յաճախ գնումէր Էշորհայր Ասեփողիկոսի մօտ, նորա հրամայելով, որ և ներկայ գտաւ նորա վախճանին :

1176 թ. ձեռնադրեցաւ Գրիգոր տղայ Ասեփողիկոսէն՝ քրտան երեք տարեկան հասակին՝ Երբեպիսկոպոս Լամբրօնի, և ամենայն արթնութեամբ և իմաստութեամբ կառավարումէր իւր վիճակը, բայց պաշտօնի մեծ զբաղմունքներն արգելք էին լինում նորա գրաւոր պարագմունքներին. վասնորոյ փախաւ Սաղրու անապատը, յԱզիպտոս, Սեպուհ լեռքը, բայց յետ դարձրին իւր տեղ. յետոյ ծածուկ զնաց Ախպրոս կղզին Յոյն կրօնաւորաց վանքը, ուր քաջ տեղեկացաւ Յունական դպրութեանց, սակայն կրկին յետ դարձրին : Սա գտաւ Հոսովյայի ազգային ժողովում 1179 թ. Յունաց յետ միաբանութեան խնդիրը վճռելու համար. ուր խօսեցաւ ճառ, որով ջատագովումէ Յունաց և Լատինաց եկեղեցիքը : Գնաց զեսպանու-

Թեամբ Ալէքս Անկեղոս կայսեր մօտ կրօնական ասեղուծիւնը դադարացնելու համար, և ոչինչ շահեցաւ: Յետ այսորիկ բարուք հոյուելով իւր հօտը՝ վախճանեցաւ 1198 թ. ի հասակի 45 ամաց:

§ 55. զատմութիւն միաբանական խնդրոյ Յունաց և Հայոց մէջ:

Ներսէս Շնորհալին դադարացնելէն յետոյ խռովութիւնը ծագուած Թորոս և Օշին Հայ իշխաններու մէջ՝ գնաց Մամեստիա քաղաքը 1165 թ. և տեսութիւն անելով Մանուէլ կայսեր փեսայ Ալէքսի հետ՝ բացուեցաւ խօսակցութիւն ընդհանրական եկեղեցւոյ բաժանման վերայ. և Ալէքսի խնդրանօք գրբեց Հայաստանեայց Ակեղեցւոյ դաւանութեան և արարողութեանց դիր ու տուաւ նորան: Բայց ինչպէս աստ, նոյնպէս և միւս գրուածների մէջ պահպանուած Հայկական եկեղեցւոյ ուղղափառութիւնը: Նորա գրուածների մէջ երևումք քաղաքականութիւն, և չէ դիպում Յունաց եկեղեցուն, այլ իւր եկեղեցւոյ վարդապետութիւնը հաւատոյ մասին և ամենայն արարողութեանց ուղղութիւնն է հաստատում առաջին չորս դարերի սուրբ Հարց գրուածների և սուրբ Առաաւորչի վարդապետութեանց և աւանդութեանց վերայ:

Արբոր սուրբ Արրորդութեան և Վրիստոսի Աստուածութեան ուղղափառ դաւանութիւնը գրումք համառօտ, ապա վիճարանականն է հերքում: 1. Հաստատու մէ Ղուկասու առաջին զլիսի պատմութեան սուրբ Աուսին աւետիք տալու ժամանակն հրեշտակէն՝ ապրիլի 7-ին՝ և ոչ մարտի 25-ին: 2. Բանին Աստուծոյ երկու բնութենէ միաւորութիւնն ի մի բնութիւն անշփոթելի: 3. Արեքսորեան երգի համար, թէ ի դէմս Արղևու եմք երգում: 4. Մեծ պահքում ձէթ ու ձուկն ուտելը և զինի խմելն է հերքում: 5. Անջուր զինով պատարագելն է հաստատում: 6. Թէ Հայք ընդունումեն և յարգում սրբոց պատկերները. և այս լինումէ սկիզբն բանագնացութեան միաբանական խնդրոյ: Ալէքս անձամբ գնումէ ի Ա. Պօլիս՝ և այն զիրք

տալիս է կայսեր. զոր թարգմանելով Յունարէն, կարդումնն Պատրիարքի և Ապիստոլոսաց առջև՝ և զարմանումն ամենեքեան, և հաւանութիւն են ցուցանում ուղղափառ խոստովանութեան: Ապա կայսր թուղթ է գրում Պարիզոր Պ. Աթոռդեկոսի վերայ 1167 թ. յորդորելով ի միարանութիւն, սակայն Հայրապետն վախճանումէ, և զայն ստանումէ նորան յաջորդող եղբայրն ըստ մարմնոյ՝ Աերսէս Շ նորհալի. թէպէտ նամակարէն հրաւիրումէ զնա ի Ա. Պօլիս և անդ աւարտել միութեան գործը, սակայն դժուարին էր Աթոռդեկոսին կատարել կայսեր հրաւերը, այլ պատասխանն է գրում. որի սկզբի զբաժն է որպէս յառաջարան, և շատ բաներ խօսելէն յետոյ ասումէ, «զի թէ անօրինեցէ Աստուած խօսիլ մեզ առ միմեանս, մի եղեցի որպէս Տեառն առ ծառայս, և ծառայից առ տեարս, զի դուք զմերն պակասութիւն դնէք մեր առաջի, և մեք ոչ համարձակիմք ի ձերոց ինչ՝ յորոց դայթակղեմք, ծանուցանել ձեզ . . . վասնորոյ՝ եթէ ողորմութիւնն Աստուծոյ զհիմնարկեալս ի ձէնջ շնուած՝ խաղաղութեան յաւարտումն հասուցէ, լինիլ քննութեան բան ի միասին ժողովեաց, զիցուք երկոցունց բաժանեալ որմոցս՝ զուխ անկեան և Թագաւոր զվէնն Վրիստոս, որպէս և է իսկ ճշմարիտ, և դատաւոր՝ զզիրս Առաքելոց և Մարգարիցն, և զուղղապէս վարդապետաց եկեղեցւոյ, և մեք իւրաքանչիւրքս որպէս դատախազք կայով առաջի Թագաւորին և դատաւորացն՝ խօսեսցուք դատաստանաւ ընդ միմեանս, և խնդրեսցի իրաւունս ի նոցանէ. և որում բանի և դիմաց վկային դատաւորքն . . . զայն բնկայցուք անհակառակ, : Յետոյ գրումէ հաւատոյ սահմանը և եկեղեցւոյ աւանդութիւնքը աւելի հանգամանօրէն քան զոր առաջ գրել ու տուել էր Ալէքս դուքսին: Այսպս ստանալով այս թուղթը՝ ցուցանումէ Պատրիարքին և Ապիստոլոսաց, որ փարատուումն առաջին դայթակղութեանն, և կայսրն երկրորդումն նամակը՝ ուղարկելով իւր կողմնն Թէօփիանոս Մարգիստոսը՝ և Փիլիպոլսի կողմի Հայոց Պ. անահայր Յովհաննէս վարդապետը՝ մականն

ուամբ Աւթման, որք զալով սուրբ Հայրապետի մօտ, տունին կայսեր նամակը, և սկսան զնել առջևնեքը Աստուածաշունչ սուրբ զիրքը՝ և խօսիլ կրօնական և արարողական խնդիրների վերայ. էր ինչ՝ որ մի օրինակ էին նայում, և էր ինչ՝ զոր խրաբանչիւն ուրիշ տեսակ էր մեկնում, և մանաւանդ սուրբ Ալիբղի առաջին և երկրորդ թուղթը Եկեղեցոսի վերայ, թէ որպէս հարքն ասացին, մի է բնութիւն Վանին մարմնացելոյ. այս բանի համար Թէօօրիանոս չէր կամենում՝ որ ասէ՝ անձառ միաւորութիւնն մի բնութիւն, այլ երկուց բնութեանց յատկութիւնը անշփոթ պահելով, իսկ սուրբ Հայրապետն երկուսն էլ հաստատումէ ըստ առաջին սրբոյն, ընդդէմ՝ Եկեղեցականներու միաւորելով, և ընդդէմ՝ Աւտիքականներուն ճշմարտելով յատկութիւնքը: Ապա զրումէ պատասխանի կայսեր վերայ, և ուղարկումէ նոյն Մագիստրոսի ձեռքով, զոր կարգաւրով մայրաքաղաքի հոգեւորականութիւնն՝ փարատումեն իւրեանց ծուռ կարծիքները Հայոց եկեղեցւոյ վերայ, և կայսրն երրորդ անգամ ուղարկումէ զիր նոյն փիլիսոփայի ձեռքով, իւրնդրելով զլուխ հանել սկսած խաղաղութիւնը և միութիւնը երկուց եկեղեցեաց: Այս նամակի մջ առաջարկումէ ինն գլխով խնդիրներ ընդունելու. նոյնպէս ուղարկումէ զիր և Միքայել Պատրիարքին, և որովհետեւ Աթոռիկոսն ինքնին չէր կարող վճռել այն խնդիրները, ուստի յայտնեց դեսպանին թէ ժողովով պիտի քննէ. բայց նոքա չսպասեցին ժողովի գումարելուն՝ յայնժամ Հայրապետն զրեց թուղթ կայսեր և Պատրիարքի վերայ, խոստանալով ազգային մեծ ժողով առնել, ուր որոշել և տալ սրատասխանի առաջարկեալ խնդիրներուն. և թէպէտ ընդհանրական թղթով հրաւիրեց Հայոց Ապիսկոպոսներ և վարդապետներ, որոց մջ կային և Աղուանից, սակայն մահն աւարտեց նորա կեանքը, և զործը մնաց կիսատ:

Ը նորհալոյ մահուան բօթն մեծ տխրութիւն պատճառեց կայսեր և թագաւորական քաղաքին, բայց կայսրն և Պատրիարքըն նորոգումեն գործը նամակներ գրելով Վրիզոր Դ. Աթոռ

դիկոսի վերայ Տղայ կոչեցեալ, առաջարկելով կատարել ինն իլլիսով զբաժ թուղթը նորա նախորդի վերայ: 1. Նղովել մի բրնութիւն ասողները: 2. Խոստովանել Յիսուսի Քրիստոսի մէջ երկու բնութիւն մի անձնաւորութեան մէջ, երկու ներգործութիւն և երկու կամք: 3. Սուրբ Եստուածը երգել առանց խաչեցարի: 4. Տօները տօնել Հռոմներու հետ: 5. Մեռնոն լինի Չիթենեոյ պատգներէ: 6. Խորհրդական հայն խմբուն լինի և զինին ջրախառն: 7. Պատարազի ժամանակ ոչ որ դուրս չգնայ եկեղեցիէն: 8. Բնդունել Գ. Ե. Թ. և Լ. տիեզերական ժողովները, և 9. Վաթողիկոսի հաստատութիւնն ընդունել Հռոմի թագաւորէն:

Գրեպոր Վաթողիկոս տեսնելով՝ թէ նորա հեռեանքն է ձրգել երկպառակութիւն ազգի մէջ, յայտնումէ կայսեր՝ և խընդրումէ չնեղել ազգը այնպիսի կրօնական խնդիրների մասին: Համաձայնումէ կայսր և առաջարկումէ միութիւն հաւատոյ մասին—պարզ խոստովանել երկու բնութիւն, երկու ներգործութիւն և երկու կամք, և մի բնութիւն ասելը վերցնել: Վաթողիկոսն ժողով է գումարում ի Հռոմկայ 1178 թ., ուր խօսեցաւ Ներսէս Լամբրօնացին ճառ ջատադովելով Յունական եկեղեցին ըստ ամենայն մասանց, հրաւիրումէ և ժողովն միանալ նորա հետ, օրինակ բերելով Նզը և Վահան Վաթողիկոսները, որք ընկալան Քաղկեդոնի ժողովը: Յետոյ ժողովն զրեց դաւանութեան զիր, ոչ երկու բնութիւնն ուրանալով մի անձնաւորութեան մէջ, և ոչ մի բնութիւն ասելը վերցնելով, զոր ստորազրութեամբ ուղարկումեն կայսեր և Պատրիարքին. և այս միջոցում մեռնումէ կայսր և լինումէ բանադնացութեան վախճան. իսկ կրօնական ասելութիւնն երկու կողմէն մնում է անվերջ:

§ 56. Եկեղեցական մատենադիրք .

10 դար .

1. Յովհաննէս Աաւետիկէս Վարախանալէրացի գրեց Հատորց պատմութիւն սկսեալ Հայկէն մինչև Աշոտ Բ. Թագաւոր Բաղրատունի: Ոճ՛ն է Հայկաբանական և քաղցր: Տպած է Արուսաղէմում և ի Մոսկուա:

2. Մովսէս Ասղականդուսացի գրեց Համառօտ Պատմութիւն Աղուանից սկսեալ Ադամէն մինչև Ռուսայր Թագաւոր. տպած է ի Մոսկուա:

3. Մեարտոկ Երէց Վայոց — յորեղի գրեց պատմութիւն Մեծին Ներսէսի Պարթևի, Օրբելեանց տան և Թաթարներու յարձակմունքի Հայաստանի վերայ. տպած է ի Մատրասոյ:

4. Խորրով Ապիսիոպոս Անյակացեաց, հայր Վրիզոր Նարեկացւոյ, արար պատարազի խորհրդի բացատրութիւն և Ճամազըբի մեկնութիւն ընտիր ոճով. տպած է ի Ա. Պոլիս:

5. Գրէգոր Նարեկացի գրեց Սողոմոնի երգոց երգոյն մեկնութիւնը, Անձևացեաց Գուրգէն Թագաւորի խնդրանօք. շարադրեց հրաշալի ազօթքները Նարեկ կոչեցեալ. գրեց ճառեր և ներբողներ, գանձեր և մեղեդիք, և պատմութիւն Ապարանից խաչն. որք տպած են ի Վէնէտիկ և Ա. Պոլիս. ոճ՛ն է խրթին:

6. Ստեփանոս Հարդապետ Ասողի գրեց տիեզերական պատմութիւն մինչև Գաղիկ Ա. Թագաւոր Բաղրատունի. տպած է ի Փարիզ. ոճ՛ն է պարզ:

7. Թովմաս Հարդապետ Արծրունի գրեց Արծրունեաց ազգի պատմութիւնը՝ սկսանելով Նոյ Նահապետէն մինչև Գաղիկ Թագաւոր Բաղրատունի. տպած է ի Ա. Պոլիս:

Այս 10 դարում շինեցան վանօրոյք Հայաստանի ամեն կողմերը, և ծաղիկեցան ուսումնականներով. բայց նոյա անունները հանդերձ աշխատութիւններով դեռ կորած են:

11 դար.

1. Պետրոս Գեորգիայի զրեց շատ ճանաչելու, ասաց Հանգստեան և Մարտիրոսաց շարականները, և Մանկունքներէն շատը սորա ասած է :

2. Գրեգոր Մագիստրոս՝ վարժ Յոյն և Մտորի դպրութեանց մէջ, ունի զրաժ բանասիրական թղթեր, թարգմանութիւնք, Վերականուրթիւնք, և հազար տուն ոտանաւոր պատմութիւն Ադամէն սկսած մինչև Վրիստոսի դպրւստը: Սորա զրուածներէն մի քանի հատուած տպած են ի Մոսկուա զիտնական Մըկըրտիչ Լամինի Բնիքի հարստաժողովի կողմէն զրքի մէջ :

3. Անանիա Վարդապետ Սանահինի զրեց մեկնութիւն չորեքտասան թղթոց Պօղոսի և համեմատութիւն չորս Աւետարանիչներու :

4. Արեւստանի վարդապետ Լաստիվերոյի զրեց Հայաստանի թշուառութեան անցքը Գաղիկ Ա. Բաղրատունի թագաւորէն մինչև Անի քաղաքի տունուիլը, տպած է ի Վիննաիկ :

5. Գրեգոր Բ. Ամենայնի Պալատականի տեղեակ Յոյն և Մտորի դպրութեանց, թարգմանեց սրբոց վկայարանութիւնքը, և կոչեցաւ Վկայասեր :

Այս 11 դարում ծագիկեցան և շատերն, որպէս Յովհաննէս Վարդապետ Արեւան՝ Մաթեմատիկոս, Արեւան Վարդապետ՝ երգող Արեւելի Գեորգիանի, Արեւելի Գեորգիայ, Սարգիս երեց աշակերտ Մաղիսարոսի, Սարգիսան Արեւելոյոս Արամիր վանքի ևն :

12 դար.

1. Յովհաննէս ասրիստաժ վարդապետ ասաց Ղևոնդեան քահանայից շարականը Պայծառացան այսօր, քարոզն Յիշու Տէր լլայալլօնեայս ԺԹ. ունի և զանազան զրուածներ :

2. Գրեգոր Գ. Ամենայնի՝ եղբայր Շնորհալուոյ, երգեց Խորհրդան անձառ և Մեծահրաշ շարականները, լրացրեց սրբոց վը-

կայարանութիւնքը, և սահմանեց կարգալ եկեղեցեաց մէջ, որ կոչեցաւ Յայսմաստօք :

3. 'Ներսէս Շնորհալէ' զրեց ընդհանրական թղթեր լի իմաստութեամբ ամենայն աստիճանի մարդկանց վերայ, կրօնաւորներու, վանօրէից, առաջնորդաց, եպիսկոպոսաց, քահանայից, իշխանաց, զինուորաց, քաղաքացեաց, երկրագործաց և ամենայն ժողովրդոց՝ և կանանց զասի վերայ: Պարեց և պատասխանիք Մանուէլ կայսեր և Միքայէլ Պատրիարքի թղթերին, որք բուրն հաւսքած մի տեղ՝ տպած են ի Ս. Պետերբուրգ, և կոչե Քնորհանրական Շնորհալոյ: Ունի ասած շատ երգեր և շարահաններ, որովք առաւել ևս ճոխացրեց և զարգարեց եկեղեցին: Շարագրեց նոյնպէս շատ ներբողական ճառեր: Յօրինեց ոտանաւոր Այսմաստօքն շայաստանի, զրեց Բանաստեղծութիւն Ողբ Երեմիոյ անունով, արար Յնաստօ արքի կոչեցեալ ոտանաւոր զիրքը, շատասոյժ խոսասովանիճ աղօթքը, և խորհրդաւոր Եասկեր և շանելոյներ: Սորա տպած են :

4. Սարգիս՝ աշակերտակից 'Ներսիսի Ալայեցւոյ' նոյնպէս Շնորհալե կոչեցեալ՝ արար Աստուծոյ իմաստեղծութիւնք. տպած է ի Ս. Պօլս :

5. Իգնատիոս Վարդապետի աշակերտակից Սարգսի զրեց Պուկասու Եւետարանի մեկնութիւն, տպած է ի Ս. Պօլս :

6. Սահակի երեց Անեցի՝ արար աղիւսակեոյ ժամանակագրութիւն՝ հանգերձ մասնաւոր պատմութեամբ:

7. Մարտիրոս Ուսուցիչի զրեց շայոյ պատմութիւն սկսեալ Եշտ ողորմանձ թագաւորէն մինչև ցիւորոս և ցլ և ոն Ե. Ռուբինեան իշխանները :

8. 'Ներսէս Աւերբոնայի զրեց մեկնութիւն Սաղմոսաց Ղաւթի, Սողոմոնի Եռակաց, Ժողովողի և Իմաստութեան, Երկոտասան Մարգարէից, Պատարագամատուցի, Եւր ընդ եղբարսն աղօթքի, ասաց Օւտակի, 'Նոր—Աիւրակի, շամբարձման և թոռանց շարականները: Պարեց նոյնպէս թղթեր զանազան անձանց վերայ, որոց մէջ երևելի են Ա. Ռուբինեան թագաւորի և Յոյն Ռսիան մի-

այնակիացի վերայ դրած թղթերն: Մորս մատենագրութիւնքն տպած են ի Վ. Էն, տիկ :

Ե. յս 12 գարում՝ ծաղիկեցան Մխիթար Գ. օշ, Յովհաննէս Տաւուշեցի, Խաչատուր Տարօնեցի, որ ասաց Խորհուրդ էրն երգն, և լին :

13 դար.

1. Միլիար երեց Էնեցի զրեց համառօտ պատմութիւն Հայոց, Վ. քաց և Պարսից. տպած է ի Մոսկուա :

2. Վարդան Վարդապետ Բարձրբերդի զրեց տիեզերական պատմութիւն՝ աշխարհի ստեղծմանէն մինչև Հեթում Ե: Տըպած է ի Մոսկուա: Ունի և ուրիշ զրուածներ: Սա ասաց շարականները՝ Որ նախնայ, Ի յանուանման Ժովն, Որդ Վարդաբեցին, և սրբոյն Սարգսի օրհնութիւնը :

3. Յակոբ Ասիողլիոս Ալայեցի ունի շատ ճառեր, և ասաց սուրբ Առևսի ծննդեան շարականը՝ Երգեցէ՛ք սրբի՛ք սիօնի :

4. Արսակոս Վարդապետ Գանձալեցի զրեց Հայոց պատմութիւն՝ սկսած 1. ուսաւորէն մինչև 1260 թ., տպած է ի Մոսկուա :

5. Մալաթիա Եբեղայ զրեց պատմութիւն թագաւորներու յարձակումների Հայոց աշխարհի վերայ մինչև 1279 թ.:

6. Սեֆաթ սպարապետ՝ եղբայր Հեթում Ե. թագաւորի՝ զրեց խառն աշխարհարատով Հայոց աշխարհի անցքը՝ 951 թուէն մինչև 1274 թ., տպած է ի Մոսկուա :

7. Վահրամ Վարդապետ՝ ասենադպիր 1. և օն Գ. թագաւորի՝ զրեց ոտանաւոր չափով պատմութիւն իրրև յաւերւած Շնորհալոյ վիպասանութեան մինչև իւր ժամանակը, և տպած է ի Փարիզ :

8. Յովհաննէս Վարդապետ Երզնկացի կամ Ծործորեցի՝ կռչեցեալ Պլուզ՝ արար Գիրք երկնային շարժմանց վերայ: Սա ասաց 1. ուսաւորչի շարականը՝ Ե. յօր դասարանեալ և 1. երկնի առեւայն, և Մեծին Կերսիսի Որ զլոյս անձառ, և եթն Խոտա-

ճարակացն՝ Յատուրս վերջին ժամանակի, նոյնպէս զանապան տա-
զեր՝ որպէս Զ ըրորհնեաց Յամենայն ժամ օրհնէմք և Այոսը յայնն
Հայրական. լրացրեց և Շ նորհալւոյ կիսաս թողած մեկնութիւ-
նը Մատթէոսի Աւետարանի :

9. Յովնանէս վարդապետ Երճիշէցի՝ Ոսպնակեր կոչեցեալ՝
արար մեկնութիւն Պատարագի. սպած է ի Կ. Պօլիս :

10. Ստեփաննոս Երբեպետիպոս Օրբէվէան՝ զրեց Սիւնեաց աշ-
խարհի պատմութիւնը՝ սկսեալ Գեղամի որդի Սիսակէն մինչև
1299 թ. նոյնպէս և Օրբելեան տան, որք սպած են ի Փարիզ
և ի Մոսկուա: Երար և զիրք ընդդէմ Յունաց և Լատինաց՝
որ կոչի Չեռնորդի Ստեփաննոս Աննեցոյ. այս ևս սպած է Արու-
սաղէմում :

Այս 13 դարում ծագիկեցան և շատերն, որոց միջ կրեւելի
են՝ Գրիգոր վարդապետ Ակեռացի, որ ունի շատ գրուածներ,
և՛ սոսց շարտիանը՝ Երեմիան արքայորոնեան, Երիտապէս
Վերթող, Գեղորդ վարդապետ Ակեռացի, Խաչատուր վար-
դապետ Անչառացի, Զաքարիա Ապիսկապոս Ծործորեցի,
և շն :

14 դար.

1. Ասայի վարդապետ Աղւշի՝ Առաջնորդ և վարժապետ Գայ-
լեծորի վանքի՝ զրեց մեկնութիւն Աղեկիկիլի մարգարեութեան,
մեկնութիւն Քերականութեան և Պաւանութիւն հաւատոյ :

2. Յովնանէս վարդապետ Գանձախէցի՝ արար Գիրք ասնելի
վերայ, որ կոչի Տեմայարձառ :

3. Յովնանէս Արքառեցի՝ վանահայր և վարժապետ Տաթևու-
վանքի՝ զրեց զանապան մեկնութիւնք, քարոյներ և ձառեր, և
պաշտպանեց եկեղեցին Ունիթոսներէն :

4. Գրեգոր Տաթևացի՝ զրեց երկհատոր քարոզչիք անուա-
նեալ Ամոսն Չմոսն հատոր: Սա մեծ պաշտպան կացաւ Ու-
նիթոսներու ժամանակ՝ զրելով նոցա դէմ Հարցմանց կոչեցեալ
զիրքը, որք սպած են ի Կ. Պօլիս :

5. Գրիգոր Վարդապետ Խաթեցի Ներքին Կոչեցեալ՝ զրեց ճառեր, ներբողներ, երգեր, և շն:

6. Երատէլ Վարդապետ՝ Արևնեաց Եպիսկոպոս՝ զրեց զանազան ոտանաւորներ Երատայ գիրք անուանեալ, և շն:

Եյս 14 դարում ծագկեցան շատերն և նոցա մեջ յայտնի են՝ Գրիգոր վարդապետ Երզնկացի, Մխիթար Սասունցի, Գահրէլ Սսեցի, Մաղաքիա Եպրակունցի, Յակոբ Արմեցի, Յովհաննէս Աղոտիկ, և Տիրատուր վարդապետ. որք արարին սուրբ գրքի մեկնութիւնք: Սակայն որպէս սոցա, նոյնպէս նախնի հեղինակներու զրուածներէն՝ է որ մասամբ, և է որ բոլորովին կորան ի վնաս մեր՝ Գուին քաղաքի երկու անգամ կործանուելով երկրաշարժութենէ 861 և 894 թ. Յուսուփ ոստիկանի աշխարհակործան աւերածութեամբ 20 տարի, այլ և Ալիւթացիներէն 10 տարի, Ելիասլանի հիմնայատակ անելով Ընի քաղաքը 1064 թ. և կրկին Մուղալ թաթարներէն 1239 թ. Մահմետականներու քանդելով Եդեսիա քաղաքը 1144 թ. ուր պահած էր նախնեաց մատեանների անդին դիւանը, Բաղարերդի կործանուելով Իսմայէլացիներէն 1170 թ. ուր կորան աւելի քան տասն հազար ձեռնագիր մատեաններ՝ ինչպէս ասումէ Ստեփանոս Օրբելեան, Ալիբէկիայի ընդհանրական կոտորածով թաթարներէն, թուրքերէն և Աղիպտացիներէն երեք անգամ 1292, 1322 և 1335 թ. թողնումնք յիշել և միւս քաղաքների, գիւղերի, վանքերի և եկեղեցեաց կործանմունքները, որոց մեջ անթիւ մատեաններ կորեան, որպէս և Լանկթամուրի ձեռքով 1337 թ.:

§ 57. Կամողիկոսունք Հայոց

10 դար:

Յովհաննէս Օ. Գրասխանակերտցի յաջորդեց Մաշտոցին 897 թ. և 28 տարի կաթողիկոսութենէն յետոյ վախճանեցաւ Վասպուրական աշխարհում, որ աշխարհի խոռովութեան

պատճառաւ զնաց Պազիկ Արծրունւոյ մօտ 924 թ. և Աթոռը փոխադրեց յԱղթամար:

Սաբեփաննոս Բ. 925 թ. մէկ տարի, և յաջորդեց թէոդորոս Ա. 10 տարի, ապա նորա եղբայր Ադեշէ 936 թ. որ հինգ տարէն յետոյ մի քանի մարդոյ շարախօսութեամբ ընկաւ Աթոռէն, և մնաց պարագ երկու տարի մինչև նորա մահը. և յետոյ նստեցաւ Անանիա Սոկացի 943 թ. 22 տարի, հինգ տարի յԱղթամար՝ և 17 տարի ի Վարագ և յԱնի:

Վահան՝ որդի Զուանշիր իշխանին Բաղաց՝ ընտրեցաւ Աթոռիկոս 965 թ.: Սա կամեցաւ ընդունել Վաղկեդոնի ժողովք. և երբոր Ապիսիոպոսք ժողով դումարեցին Անի քաղաքում ձգել զնա Աթոռէն, փախաւ ի Վասպուրական Արուսաշէ Արծրունի թագաւորի մօտ, և նորա տեղ ընտրեցաւ Սաբեփաննոս Պ. 970 թ.: Սոքա երկրքեան պատերազմունքին նզովից թըլթեր զրելով միմեանց վերայ. և Ստեփաննոս զայրացած զնաց ի Վասպուրական յանդամանել զՎահան, բայց Արուսաշէ արտօրեց զնա յաղթամար, և ապա կալանաւորեց Ատտորոց բերդում, ուր և մեռաւ 972 թ. և նստաւ Խաչիկ Ա. սա շատ շինութիւնք արաւ, շինեց փառաւոր զբառուն, ուր ժողովեց շատ մատաններ, և 20 տարի կառավարելէն յետոյ վախճանեցաւ 992 թ. և նստաւ Սարգիս Ա. որ փոխադրեց Աթոռը յԱնի, և իւր կենդանութեան ժամանակ ձեռնադրեց Խաչիկ Աթոռիկոսի եղբայր Պետրոսին Աթոռիկոս 1019 թ. և ինքն հրաժարեցաւ պաշտօնէն:

11 դար.

Պետրոս Աթոռիկոս Պետրոսայ՝ անուանեալ, նստելով շայրապետական Աթոռին, 39 տարի աստանդական շքելով վախճանեցաւ Սերաստիայում:

Խաչիկ Բ. որ կարգած էր Պետրոս Աթոռիկոսէն Տեղապահ Անի քաղաքում՝ ընտրեցաւ 1058 թ.: Արկու տարէն յետոյ Առասանդին Տուկիծ կայսր կանչեց իւր մօտ, և պահանջեց

Պետրոս Աթոռիկոսի կայքը. և երբոր բան չգտաւ, յայնժամ նա անխիղճն տարեկան հարկ դրաւ Աթոռիկոսի վերայ. բայց նա վատահ խօսքերով մերժեց զայն. վասնորոյ երեք տարի արգելեալ մնաց Ս. Պօլոսմ. և ապա աղատուելով՝ զնաց ի թաւրլուր, ուր սրտի ցաւերէն հիւանդացեալ՝ վախճանեցաւ 1064 թ. և Աթոռն մնաց պարապ մէկ տարի: Ապա ազգային ժողով գումարելով ի Օսմանդաւ, ընտրվումէ Ղարիզոր Մագիստրոսի որդին Սահրամ, որ օծուելու ժամանակ կոչեցաւ սուրբ Ղուսաուրչի անունով Ղարիզոր, մականուանեալ Սկալաէր 1065 թ. և Աթոռն փոխադրեցաւ անդ: Սորա ժամանակ նստեցան ի Հոնի երկու Աթոռիկոսք Սարգիս և Թեոդորոս, և սոցա մահով վերացաւ անդ կաթողիկոսութիւնը:

Հայրապետական Աթոռի փոխադրելու պատճառաւ ի Արևիկա՝ Երեւելան Հայք Սկայասերի հաճութեամբ օծել տուին նորա քեռորդի Բարսեղ Ապիսկոպոսը՝ Աթոռիկոս Հազրատայ վանքում 1082 թ. և Աթոռն դրաւ յԱնի: Այս ժամանակ Փիլարտոս անունով մէկ իշխան զնալով ի Մարաշ ձեռնադրել տուաւ Սարազայ վանքի վանահայր Պօղոս Ապիսկոպոսը Աթոռիկոս այն կողմի, և եղան չորս Աթոռիկոսք. բայց վերջինը հրաժարեցաւ իշխանութենէն, և ազգը ճանաչումէր միայն Ղարիզորը, որ 40 տարի գահակալութենէ յետոյ վախճանեցաւ 1105 թ.:

12 դար.

Ղարիզոր Սկայասեր իւր մահուան մօտիկ ժամանակ կանչեց իւր մօտ Բարսեղ Աթոռիկոսը՝ ու յանձնեց նորան իւր քեռորդէքը Ղարիզոր և Ներսէս, և պատուիրեց ժողոված մարդկանց՝ որ Բարսղի մահէն յետոյ, Ղարիզորը ընտրեն Աթոռիկոս, և այնպէս էլ եղաւ. որովհետեւ Բարսեղ Ս. Սկայասերի մահէն յետոյ առանձին վարելով իշխանութիւնը՝ վախճանեցաւ Սեաւ լեռան Շուգր անապատում 1113 թ.:

Ղարիզոր Պահլաւունի՝ որդի Ապիկոս իշխանի քսան տա-

րեկան ընտրեցաւ Աթոռդէկոս. և թէպէտ Աթոռմարի Գաւիթ Արքեպիսկոպոս մերժեց նորա իշխանութիւնը, և հինգ Ապիսկոպոս ժողովելով Չորոյվանքում՝ օծաւ Աթոռդէկոս 1114 թ. սակայն սղզային ժողովն մերժեց զնա՝ և զՎարիդորն ընդունեց որպէս օրինաւոր. բայց Գաւիթ մնաց Հակոտակաթոս, որին յաջորդումն և այլք մինչև յայսօր. և այսպէս Հայրապետական իշխանութիւնն երկու պատուեցաւ. իսկ Գրիգոր Աթոռդէկոս կամեցաւ փոխել Աթոռը յԱջմիածին, սակայն խռովութեան պատճառաւ անկատար մնաց նպատակն. ուստի գնաց իւր հայրենի կալուածքը Ծովք գրեական, ուր հաստատեց Աթոռը 1125 թ. և ապա փոխադրեց ի Հոռովկայ 1147 թ. և մերձ վախճանին՝ եպիսկոպոսաց և վարդապետաց ժողովի համաձայնութեամբ օծեց իւր եզրայր՝ Ներսէսը՝ Աթոռդէկոս 1165 թ. իսկ ինքն վախճանեցաւ 1166-ին 53 տարի Աթոռդէկոսութենէ յետոյ : Սորա ժամանակ սկսաւ Յունաց և Հայոց միութեան խնդիրը, և շարունակեցաւ Շնորհալույ և Գրիգոր տղայ Աթոռդէկոսաց ժամանակը :

Սուրբ Ներսէս՝ Շնորհալի կոչեցեալ՝ իմաստութեամբ կառավարեց եկեղեցին եօթն տարի, և վախճանեցաւ 1173 թ. և նորա թաղման օրը ընտրեցաւ նորակերթորդին Գրիգոր Գ. մականունանալ Տղայ, որ քսան տարի բարւոք կառավարելով Աթոռը վախճանեցաւ 1193 թ. և նստաւ նորա եզրօրդին Գրիգոր Ե. որ անկարգ վարքի համար կալանաւորեցաւ Լեոն մեծ իշխանին Առախառ բերդում. և կամելով փախչել բերդէն՝ ընկաւ պարսպէն ու մեռաւ, և կոչեցաւ Գահակէժ :

Գրիգոր Զ. Ապրաթ կոչեցեալ՝ եզրօրդի Շնորհալույն՝ ընտրեցաւ Աթոռդէկոս 1195 թ. : Սորա ժամանակ զիպաւ Ծռնազատիկն 1197 թ. և մեծ խռովութիւն պատճառեց Յունաց և Հայոց մէջ՝ մինչև արիւնհեղութիւն. և շփոթը խաղաղելու համար ուղարկեց զՆերսէս Լամբրօնացին դեսպան Ալէքս կայսեր մօտ. բայց ոչինչ շահեցաւ, և եօթն տարի իշխանութենէ յետոյ վախճանեցաւ 1202 թ. :

13 դար.

Յովհաննէս՝ մականուանեալ Սեփաքարոյ՝ օծաւ Վաթողիկոս 1202 թ. բայց Փոքր Հայոց և Շիրակայ Եպիսկոպոսք անհաւան զտանուելով նորա ընտրութեանը՝ առաջինքն նստեցրին Վաթողիկոս՝ Սերաստացի Ընանիա Եպիսկոպոսը, և Շիրակայիք՝ Ընեցի Բարսեղ Եպիսկոպոսը: Եպա զժտութիւն ընկնելով Յովհաննէս Վաթողիկոսի և Վ. և ոն թագաւորի մեջ՝ ընկաւ Աթոռէն՝ և նստաւ Գաւիթ Գ. Արքակաղնեցի, որով եղան չորս Վաթողիկոսք. բայց երեք տարէն յետոյ մեռաւ Գաւիթ, նոյնպէս և Ընանիա, և Յովհաննէս կրկին հաստատեցաւ Աթոռին. և 18 տարի զահակալութենէ յետոյ վախճանեցաւ:

Կոստանդին Ա. Բարձրբերդցի նստաւ Վաթողիկոս 1220 թ.: Ժողով զումարեց Սիս քաղաքում 1243 թ. ուր սահմանեցին քսան և երեք կանոնք բարեկարգութեան, զոր շրջաբերական թղթով հրատարակեց: Գնաց Հեթում թագաւորի հետ թաթարներու Մանգու Գանի եղբայր Հուլաւ Լչղաճի մօտ՝ նախահոգ լինելով Ախիլիայի պաշտպանութեան համար նորա յարձակմունքէն. և 47 տարի նստելով Աթոռին՝ մեռաւ 1267 թ.:

Յակոբ Ա. Տարսնացի՝ անուանեալ Ալայեցի՝ ընտրեցաւ Վաթողիկոս 1268 թ. արտադրել տուաւ բազմաթիւ օրինակներ սուրբ Երեսէս Շ նորհալոյ ընդհանրական թղթերէն, և ուղարկեց Առաջնորդներու վերայ հրահանգութեան համար. և 19 տարէն յետոյ վախճանեցաւ: Երան յաջորդեց Կոստանդին Բ. Պրօնադորժ կոչեցեալ 1287 թ. բայց զժտութեան պատճառաւ Հեթում թագաւորի հետ՝ ընկաւ Աթոռէն 1290 թ. և ընտրեցաւ Սաբեֆանոս Գ. և վերջինն եղաւ Հռովմայ նրստող Վաթողիկոսներէն. զի Լեզիպոսոսի Սուլթան Աշրաֆ 1293 թ. աւերեց Վաթողիկոսարանը, զերի արաւ Վաթողիկոսին, և մեռաւ 1294 թ.:

Գրեգոր Լ. Անաւարդեցի՝ Աթոռը փոխադրեց ի Ախ 1294 թ. սա յոյժ հակամէտ էր դէպի Լաւինաց եկեղեցին, և կամենումէր նոցա ծէսերը մտցնել շայոյ եկեղեցւոյ մէջ. և այն ինչ կամեցաւ ժողով զումարել այս մասին, վախճանեցաւ 1306 թ. բայց նորա գրած ինն զլետով դաւանութեան թուղթը մեծամեծ խռովութեան և արիւնհեղութեան պատճառ դարձաւ :

14 դար

Գրիգոր Անաւարդեցու մահէն յետոյ նստաւ կրկին Առտանդին Բ. ժողովի ընտրութեամբ 1307 թ., և հետեւեցաւ Անաւարդեցու ընթացքին: Սորա կաթողիկոսութեան տարիքն են՝ աթոռակալութեան 17 տարի և հրաժարեցուցման 18՝ ընդամենն 35 տարի: Սորա ժամանակ սկսաւ ինքնաղլուխ Արքեպիսկոպոսութիւնն Երուսաղէմի շայոյ՝ Պատրիարք անունով, և առաջինն եղաւ Սարգիս Արքեպիսկոպոսն 1311 թ.:

Առտանդին Գ. Լամբրոնացի նստաւ Կաթողիկոս 1323 թ. էր խոհական անձն, և դեսպան զնաց Լեոն թագաւորի կողմէն Եզիպտոսի՝ Երար Սուլթանի մօտ՝ զնկրով դաշն տան ուհինգամեայ զինադադարման. և չորս տարէն յետոյ վախճանեցաւ :

Յակոբ Բ. Սեցի յաջորդեց Առտանդինն 1327 թ. և 14 տարի դահակալութենէ յետոյ ընկաւ Լեոն Ե. թագաւորի ձեռքով, որին հակառակումէր Պապի հետ թղթակցութեան համար, որ աշխարհը չլինասուի թշնամիներէն. և նորա տեղը նստաւ Մելիսայ Եպիսկոպոս Բռնեցի 1314 թ.: Իսկ Յակոբ զնաց Գաղղիայի Եւենիոն քաղաքը Պապի մօտ, և հաւանեցրեց զնա հաւատոյ մասին. և վերադարձի ժամանակ մեռաւ Մխիթար Կաթողիկոս, և կրկին նստաւ 1355 թ.՝ չորս տարի: Սորա ժամանակ սկսան Ունիթոռներն մտնել շայաստան:

Յակոբ Կաթողիկոսէն յետոյ նստաւ Մելսոպ Առաջնորդ թագէոսի վանքի 1359 թ. 17 տարի: Եպա Առտանդին Գ. 1372 թ. երկու տարի. յետոյ Պօղոս Ե. 1374 թ. չորս տարի,

որի ժամանակ վերջացաւ միանգամայն Հայոց Թաղաւորութիւնն ծաղկած Ախլիկիայում: Պօղոսին յաջորդեց 1378 թ. Թէոփոս Բ. 18 տարի. ապա 1396 թ. Արարպէս Ե. Բովկի անուանեալ՝ երկու տարի, և յետոյ Գաւթի Գ. 1398 թ. չորս տարի: Սոցա կաթողիկոսութեան ժամանակ Հայաստան աշխարհ բոլորովն շփոթուած էր այլազգեաց երեսէն, և արժանայիշատակ զործեր ոչինչ չգործեցան՝ բայց ի քաղաքական և եկեղեցական վշտալի անցքերէն:

ՆԵՐՔԻՆ ԱԻՃԱԿ ԵԿԵՂԵՑՈՒՅԸ.

§ 58. Թոնդրակեցոց ազանդ.

840 թ. երևեցաւ Սմբատ անունով մէկ մարդ, որ էր Նազդիտան դաւառի Ջարեհաւան զիւղէն, մոլորուած Պաւլիկեան նոր Մանիքեցոց ազանդով, գնաց Ապահոնեաց գաւառը և բնակեցաւ Թոնդրակ զիւղաքաղաքում. արտաբուստ կեղծաւորվում էր իբրև քրիստոնեայ, իսկ ի ներքուստ էր անաստուած. ոչինչ էր համարում ձեռնադրութիւնը. ուրանում էր մեւելոց յարութիւնը, նախասնամութիւնը, Հոգւոյն սրբոյ շնորհքը՝ մերժում էր եկեղեցւոյ խորհուրդները, բարոյական վարդապետութիւնը, մեղաց պատիժը: Այս մոլորութեան մէջ ընկան Թոնդրակի բոլոր բնակիչներն և շրջակայքն, և օրըստօրէ շատանալով հեռեօղններն՝ ցրուեցան Հայաստանի միւս գաւառները՝ և կոչեցան Թոնդրակեցիք. զոր լսելով Յովհաննէս Ա. Կաթողիկոս՝ նշովեց Սմբատ և նորա հեռեօղնները 847 թ. նոյնպէս արին նորա յաջորդներն մինչև ցՊետրոս Գետադարձ. ևս և աշխարհական իշխանութեան ձեռքով մեծ հալածանք վերկացրին նոցա վերայ. սակայն ազանդը տևեց իբր 200 տարի: Ի վերջոյ Գրիգոր Մաղիստրոս բանիւ և զրով և իշխանական զօրութեամբ ջնջեց, հալածական արաւ Հայաստանէն, և քանդեց նոցա ժողովարանը 1050 թ.:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

§ 59. Ժողով Սոյ Բ. յամի Տեառն 1204:

Օտքարէ սպասարար Հանապաղ պատերազմի մէջ լինելով՝ զրկած էր մնում սուրբ Պատարազի տեսնելէն, որի համար Վլքբացիք բամբասումէին զնա. վասնորոյ առանձին թղթով խընդրեց թագաւորէն և Յովհաննէս Աթոռղիկոսէն՝ շնորհել նորան իրաւունք շրջեցնելու իւր հետ Պատարազի սեղան և քահանայք, խնդրելով զարձեալ՝ հանդիսով կատարել Պատարազը, և Վլքբափոխման ու Խաչվերաց տօները ամսաթուով կատարել: Եւ ևսն թագաւոր և Գաւիթ Աթոռղիկոս ժողով զումարելով Սիս քաղաքում 1204 թ. վճռեցին վրանի մէջ պատարազելը, և սահմանեցին ութն գլխով կանոններ բարեկարգութեան. զորս ուղարկեցին սպասարարի վերայ: Եւ թէպէտ ոմանք հակառակ կացան ժողովի վճռին, որպէս Գրիգոր Ապխկոպոս Տուաէորդի, Գաւիթ Ապխկոպոս Քորբեցի և այլք, բայց ոչինչ չկարացին առնել:

§ 60. Ժողով Սոյ Գ. յամի Տեառն 1243:

Առստանդին Աթոռղիկոս տեսնելով եկեղեցականաց անկարգութիւնքը՝ ժողով զումարեց Սիս քաղաքում 1243 թ. Հեթում թագաւորի հաճութեամբ. և սահմանեցին քսանհինգ կանոններ բարեկարգութեան, զորս շքարեւական Անդակով հրատարակեց ամենայն տեղ:

Թէպէտ եղան զանազան ժողովներ 10ից—14 զարը՝ որպէս թագաւորաց օժման, Աթոռղիկոս ընտրելու, միութեան խնդրի, Անաւորդեցու ինն գլխով մուրամիտ վարդապետութեան համար՝ և շն և շն. բայց ոչինչ եկեղեցական կանոնադրութիւնք լեւնելու պատճառաւ՝ զանց արինք առանձին գրել, և յիշատակեցինք պատմութեան մէջ:

ԲԱԺԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ.

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՏԱՅԻԿՆԵՐՈՒ, ՊԱՐՍԻԿՆԵՐՈՒ ԵՒ ՌՈՒՍԱՑ ԻՇԽԱՆՈՒ-
ԹԵԱՆ ՆԵՐԲՈՑ. 1402 ԹՈՒԼՆ ՍԿՍԵԱՂ, ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ:

463 ՏԱՐԻ:

§ 61. Կաթողիկոսք եւ զինակ Հայոց Եկեղեցւոյ

15 դար:

Դաւիթ Գ. Կաթողիկոսէն յետոյ նստաւ 1402 թ. Կաթողիկոս Բ. 7 տարի. նորա ժամանակ աւելի բորբոքեցաւ Ունիթոռներու խռովութեան բոցն, և Հայոց վարդապետաց ամբաստանութեամբ այլազգի իշխաններն պատուհասակոծ առնելով զնոսա հալածեցին աշխարհէն :

Յակոբ Գ. նստաւ Կաթողիկոս 1409 թ. Կիլիկիայի այլազգի իշխանի բռնութեամբ. այլ երկու տարէն յետոյ մահադեղով մեռաւ :

Գրեգոր Բ. 1411 թ. առանց ընտրութեան ազգին նստաւ Կաթողիկոս, որի պատճառաւ մեծ շփոթ ընկաւ Կսոյ միաբանից մէջ. և այն ինչ Կաթողիկոսն կամենումէր այլազգի իշխանի ձեռքով նուաճել իւր թշնամիքը, բայց նոքա զօրանալով՝ աքսորեցին զնա մէկ բերդի մէջ՝ Եօթն տարի կաթողիկոսութենէ յետոյ, ուր և մեռաւ :

Պօղոս Բ. Արարատեան դաւառէ՝ Առաջնորդ Արուսաղէմի՝ ընտրութեամբ ազգին օծաւ Կաթողիկոս 1418 թ. դադարեցրեց խռովութիւնը. բարեկարգեց Աթոռը. և տասներկու տարէն յետոյ վախճանեցաւ :

Կոստանդին Ե. վահակեցի 1430 թ. սորա ժամանակ ժողով գումարեցաւ Փլորէնցիայում, ուր հրաւիրեցաւ և սա, և

ուղարկեց պատգամաւորներ չորս վարդապետ. և մինչև սոցա վերադարձը՝ վախճանեցաւ 1439 թ. ինն տարի կաթողիկոսութենէ յետոյ : Սրան յաջորդեց Յովնէի Գ., որ մէկ տարի յետոյ մեռաւ :

Գրէգոր Թ. Մուսարեկեանց նստաւ Աթոռիկոս 1340 թ., առանց հաւանութեան արևելեան եպիսկոպոսաց, և որովհետև Սոյ Աթոռն շատ էր անշքացել, և Աթոռիկոսքն մեծ նեղութիւն էին կրում այլազգի իշխաններէն, ուստի արևելեան եպիսկոպոսք, վարդապետք, վանահարք, իշխանք և տանուտեսարք ժողով դումարեցին յԱջմիածին 1441 թ. և միարան խորհրդով կամեցան փոխադրել Աթոռը իւր բնիկ տեղը յԱջմիածին, հրաւիրելով զԳրիգոր Մուսարեկեանց, բայց նա յանձն չառաւ զնալ, վասնորոյ ժողովի միարան հաւանութեամբ ընտրեցաւ Արապի վարդապետ կոչեցեալ Սիրապեցի, զոր օծին Աթոռիկոս 1441 թ. և Աթոռն 989 տարի թափառական շրջելէն յետոյ հաստատեցաւ Աջմիածնում : Աւսնուհետև շարունակվումէ մինչև այսօր անդ. և թէպէտ Մուսարեկեանց նըստաւ Սիւ քաղաքում հակաթոռ, որում յաջորդումեն մինչև այսօր, սակայն ազգն ճանաչումէ Աջմիածնի Աթոռիկոսը զլուս և օրինաւոր յաջորդ սուրբ Աւսաւորչի Աթոռին :

Արապի յաջորդեց Արապեայ Ս. 1443 թ., այր հեղ և խոնարհ, վարժ սուրբ զբքի ուսման մջ. հոգ տարաւ նորոգել եկեղեցիքը և բարեկարգել շայրապետանոցը. և երկու տարուայ վերայ Մարկոս անունով ոմն և նորա կուսակիցներն ձգեցին խոռովութիւն, և այլազգի իշխանի բռնութեամբ զրկեցին Աթոռէն, և նորա տեղը զրին Գրէգոր Մակուեցին. իսկ Արապիոս առանձնացաւ մէկ վանքի մջ մինչև մահը :

Գրիգոր Ժ. Մակուեցի 1443 թ. սասկաւ աւարտել Արապիոսէ սկսած շինութիւնքը. բայց տասներկու տարէն յետոյ նեղացած լինելով այլազգեաց բռնութենէ՝ ընտրեց ինքեան գործակից և աթոռակալ Արիստակէս վարդապետն, որ յետոյ ձգեց զՄակուեցին Աթոռէն և ինքն նստաւ նորա տեղը 1460 թ. :

Եյս ժամանակ Կաթողիկոսարանի Սարգիս վարդապետն զողացաւ Լուսաւորչի Եջը՝ ու զնաց Թաւրիզ՝ ակնունելով հասնիլ Կաթողիկոսութեան՝ Ջահանշահ խանի ձեռքով. զոր լսելով Եղթամարայ Ջաքարիա Կաթողիկոս՝ սիրելին Ջահանշահի՝ նորա օգնութեամբ նստաւ Կաթողիկոս յԵջմիածին 1461 թ. բայց մէկ տարի յետոյ Գրիգոր և Երեստակէս միանալով՝ քշեցին զՋաքարիայն այլազգի իշխանի օգնութեամբ. և Ջաքարիա զողանալով Լուսաւորչի Եջը և եկեղեցական զարդերն՝ փախաւ յԵղթամար: Եյս ժամանակին 1461 թ. սկսաւ ի Կ. Պօլիս Հայոց Պատրիարքութիւնն, և առաջինն եղաւ Յովակիմ՝ Երքեպիսկոպոս Պրուսայի:

Երէստակէս նստաւ Կաթողիկոս 1362 թ. իւր հետ ունելով և Մակուեցին. և սորա մահէն յետոյ առանձին վարեց իշխանութիւնը չորս տարի: Նա ևս կարգեց աթոռակալ զՍարգիս վարդապետը:

Սարգիս Բ. աթոռակալ նստաւ Կաթողիկոս 1466 թ. քրսան ու չորս տարի, և հնարքով բերել տուաւ Եղթամարէն Լուսաւորչի Եջը: Նորան յաջորդեց Երէստակէս Գ. 1490 թ. ութն տարի. ապա Թաքէս Ե. Եթոռակալ 1498 թ. հինգ տարի:

16 եւ 17 դար:

Թաղէոս Ե. Կաթողիկոսին յաջորդեց Եղիշէ Բ. 1503 թ. 12 տարի. ապա Ջաքարիա Գ. 1515 թ. հինգ տարի. յետոյ Սարգիս Գ. 1520 թ. 16 տարի. ապա Գրիգոր Ժ. Ե. 1536 թ. հինգ տարի. նորան յաջորդեց Սեփանոս Ե. Սարմատեցի 1541 թ. այր զհանական և տեղեակ զանազան լեզուաց. թէպէտ փոյթ ունէր ծաղկեցնել Եթոռը, բայց խռովութեան պատճառաւ ոչինչ կարաց առնել. Պարսիկք և Տաճիկք միմեանց հետ պատերազմ ունենալով՝ ոտնակոխ արին Հայաստանը երկար ժամանակ, և շատերը նահատակեցան հաւատոյ համար. իսկ Ստեփանոս Կաթողիկոս ձեռնադրեց Սերաստացի Միքայէլ վար-

դասական իւր տեղապահ 1547 թ. և ինքն շրջելով ի Ա. Պօլես, ի շոտ, ի Վերմանիա, ի Ալեհաստան և ի Ռուսաստան՝ դարձաւ յԱշջմիածին, զոր պատուով ընկալաւ Միքայէլ Աթոռիկոս, և վարեց իւր պաշտօնը ընդամենը 15 տարի. և նստաւ Միքայէլ 1556 թ. սա ևս կարգեց իւր զործակից և Աթոռակալ զԼարսեղ վարդապետ ոմն, և ինքն զնաց ի Սերաստիա. և վերադառնալով յԱշջմիածին վախճանեցաւ 22 տարի հարսապետութենէ յետոյ. որին յաջորդեց Գրեգոր ԺԱ. 1569 թ. կացաւ չորս տարի. ապա Սփեփանոս Օ. 1573 թ. երկու տարի. յետոյ Թարգէս Բ. 1575 թ. ինն տարի. և նստաւ Եռաքել Աթոռակալ 1584 թ. երկու տարի, որ ներդնալով այլազգեաց բռնութենէն՝ ձեռնադրեց զործակից իւր զԳրեգոր Ապիսկոպոս 1586 թ. և ինքն առանձնացաւ մէկ վանքի մէջ մինչև մահը :

Գաւիթ Ե. նոյնպէս ներդնալով այլազգեաց հարկապահանջողութենէն՝ ընտրեց օգնական Գառնեցի Մէլիքէի Եպիսկոպոս և ձեռնադրեց Աթոռիկոս 1593 թ. որպէս զի կարողանան ազատել Աթոռը պարտքէն: Մէլիքսէթ Աթոռիկոս ներդնալով պարտատէրներու ստիպմունքէն և հարկապահանջներու բռնութենէն՝ զնաց ի Ա. Պօլես օգնութիւն գտնել իշխաններէն. որք սիրով ընկալան զնա. և կաթողիկոսութեան երկու լինելը վերցնելու համար՝ զրին զնա Պատրիարք մայրաքաղաքին փոխանակ Տիրատուր վարդապետի. բայց մի տարի յետոյ ձգեցին Աթոռէն, և վերադառնալով յԱշջմիածին, թաղեաւ Գաւիթ Աթոռիկոսի հետ անձանօթ տեղերում պարտատէրներու ձեռքէն :

Եյն Ժամանակներում 1600 թ. ընկաւ շայաստան աշխարհում սով և սրածութիւն, շատացան ասպատակութիւնք, և ծանրացան Աթոռի պարտքերը և վշտերը: Կորքա լսելով Ամիգքաղաքի Եռաջնորդ Արապիոն Ապիսկոպոսի իմաստուն և հարուստ լինելը՝ մտածեցին՝ հաւանութեամբ միւս վարդապետաց հրաւիրել զնա ի Աթոռիկոսութիւն՝ եթէ յանձն կառնու վը-

Ճարել ԼՅՄիածնի պարտքը: Արապիոն ստանալով հրաւերը՝ գընաց Զուղայ քաղաքը. ուր ժողովեցան եր'յու Աթոռիկոսքն և միւս խորհրդակից Ապիսկոպոսք, և լինելով մեղադրական զրոյց անխոհմ' անտեսութեան Աթոռի, Մանուէլ Ապիսկոպոս ձգեց խռովութիւն ժողովականներու մէջ, և հակառակելով միմեանց՝ ոչինչ գործ չչինեցին. բայց Արապիոն Ապիսկոպոս իւր առաքինի վարքով և քաղցրարան քարոզութեամբ սիրելի եղաւ ամենքին. վասնորոյ Զուղայի իշխաններն ու ժողովուրդն տարան զնա յԼՅՄիածին, և հաւանութեամբ եպիսկոպոսաց և վարդապետաց ժողովի՝ ձեռնադրել տուին Աթոռիկոս՝ անուանելով Գարիգոր ԺԳ :

Գաւիթ և Մէլիքսէթ, որք նստած էին Տաթևու վանքում, լսելով Արապիոնի կաթողիկոսութեան լուրը, մտածեցին զնալ Ասպահան շայազդի ժողովոցոց մօտ օգնութիւն գտանել պարտքերի մասին. բայց Մէլիքսէթ միայնակ զնաց, ուր ներկայանալով Շահ—Արասին՝ յոյս ունէր օգնութեան. իսկ նա որ վաղուց միտք ունէր շայաստանը ձեռք բերելու, սկսաւ կեղծուպատիր խօսքերով մտիթարել զնա, և տեղեկանալ աշխարհի ելու մտին : Ապա մեծ զօրքով դիմեց շայաստան, ունելով իւր հետ և զՄէլիքսէթ Աթոռիկոս՝ որպէս Առաջնորդ Արշաւանքի, և տիրելով շայաստանի վերին կողմերին՝ առաւ Արեւան քաղաքը, ապա ստիպեց Գաւիթ և Մէլիքսէթ Աթոռիկոսները հատուցանել նորան պարտքերը՝ զորս պարտ էին այլազգեաց. և նոքա վախենալով նորա սպառնալիքներէն, ճարեցին փոքր գումար ծանր շահով, և ազատեցան նորա ձեռքէն : Արյնպիսի տառապանքի տակ ընկաւ և Արապիոն Աթոռիկոս Զուղայում. ուր դառն տանջանքների մէջ ընկնելով՝ մերկացաւ ամենայն կայքէն, և վտանգած անձնով զնաց Միգ քաղաքը, ուր վախճանեցաւ կաթողիկոսութեան երրորդ տարում :

1605 Թ. Օսմանցիք զինուելով Պարսից դէմ, Շահ—Արաս հրամայեց իւր զօրքին կողոպտել, ասպատակել շայոց աշխարհը, և զերել նորա բնակիչները, որոց հետ գերի ընկան Գա-

ւիթ և Մէլիքսէթ հանդերձ մի քանի եպիսկոպոսներով և վարդապետներով, կողոպտեցան Լճմիաձնի ամենայն զարդերն ու անօթները: Աղէտալի և դառն է այս գերութեան անցքը, որով զաղթեցին ի Պարսկաստան իրր 14,000 տուն, և հարուստները բնակեցան Ասպահանի հանդէպ, ուր շինեցին աներ, եկեղեցիք և վանքեր, և քաղաքը կոչեցին ‘Աոր—Ջուղայ’:

Շարունակ պատերազմերի, գերութեան և ինքնակամ գաղթականութեան պատճառաւ քանդեցան և աւերեցան գրեթէ Հայոց աշխարհի բոլոր վանօրայք. բայց 1610 թ. Սաղմոսավանքի Առաջնորդ Սարգիս Ապիսկոպոս՝ Պարոն տէր կոչուած՝ վառուած հողեւոր և միանձնութեան սիրով՝ գտաւ իւր դործակից տէր Աիրակոս Տրապիզոնցուն, որք աւերեալ վանօրէից շինութեան և նորոգութեան համար ստացան շատ աշակերտներ, և սահմանեցին բարեկարգութեան կանոններ կրօնաւորական կեանքի համար, և ծաղկեցան շատ նշանաւոր անձինք՝ որք ծաղկեցրին Հայաստանի զանազան կողմերում վանօրայք:

Այս ժամանակներում 1611 թ. երևեցան Արարատեան երկրում երկու Ատփն կրօնաւորներ, որք շրջումէին սրբոց մասունքների համար. և Հրաման ընկալան Մէլիքսէթ Աթոզիկոսէն՝ այցելութիւն անելու ուխտատեղեաց. ապա գնալով Լճմիաձին ընտելացան միարանութեան հետ, և յաճախ կերթային Հռիփսիմի վանքը: Մէկ օր պատշաճ ժամանակ գտանելով՝ սկսեցին քանդել նորա զերեզմանը, ու զողացան մասունքը. բայց յանկարծ ներս մտան երկու Ապիսկոպոսք, որք թէպէտ և խեցին մասունքը, բայց մի քանի կտոր մնաց տոպրակում, և զայն ևս խեց Ղաւթի Աթոզիկոս Ասպահանում. իսկ յիշեալ կրօնաւորներն շրջելով Ղաեղաբքունու կողմերը՝ սպանուեցան Պարսիկներէն:

Այդ ժամանակներում Մէլիքսէթ Աթոզիկոս, որ ծածուկ փախաւ գերութենէ, նստումէ Արեւանում, և Լճմիաձնի միարանութիւնն ամբաստանեցին Ղաւթի մօտ, որ ‘Աոր—Ջուղայ’ յումն էր, նորա անհոգութեան վերայ. նա ժողովրդեան ինդրա-

նօք գնաց յԱջմիածին. բայց Մէլիքսէթ իմանալով նորա գալը, ինքն շտապեց գնալ նստիլ Աթոռին՝ և զնա չթողուլ ներս: Գաւիթ գանգատեց Շահ — Աբասին, որ այն ժամանակ Սրաց կողմն էր. և թէպէտ Շահն կամեցաւ սպանել զՄէլիքսէթն, սակայն Ամիրգէն նախարարի խնդրանօք ազատեցաւ՝ յանձն առնելով վճարել տարին հարիւր թու ման հարկ, եթէ կաթողեկոսական իշխանութիւնն ևս նորան կրտայ: Շահ — Աբասու քախութեամբ կատարելով նորա առաջարկութիւնը՝ ուղարկեց զնա յԱջմիածին 1618 թ: Ապա 1620 թ. չկարողանալով վճարել պարտքը, ձեռնադրեց Մովսէս վարդապետ Սիւնեցին Ապխսկոպոս, որի լաւութեան համբաւը տարածուած էր, տալով նորան իշխանութիւն Մեռոն օրհնել Աջմիածնում, որպէս զէ ժողովուրդն նորա պաածառաւ հաւաքուելով կարողանայ ժողովել զբամ՝ հարկը տալու համար. բայց չհասնելով նրպատակին՝ խորհեցաւ հրաժարիլ կաթողեկոսութենէ, և ձեռնադրելով իւր եղբորորդի Սահակ Ապխսկոպոսը՝ կաթողեկոս 1624 թ. յանձնեց նորան պարտքերը, և ինքն փախաւ ի Ա. Պօլիս, ուր չգտանելով ընդունելութիւն, յուսակոտուր գնաց Ահհաստանի կողմ քաղաքը: Անդ 1624 թ. հակառակ ժողովուրդեան կամքին ձեռնադրեց կաշառքով Ախիօլ թորոսովէն Ապխսկոպոս, որ էր աման սատանայի, և ժողովուրդն մերժեց զնա:

Ախիօլ չեպխսկոպոս առնելով իրան օգնական Ղիզվիթ կրօնաւորներն, որք մեծ արտօնութիւն ունենալով Ահհաստանի մէջ, մեծ հալածանք վերկայրեց այն տեղի Հայոց վերայ, եկեղեցիքն և ուսումնարաններն փակեցան, հոգևորականքն հալածեցան, Աստուած պաշտութիւնն դադարեցաւ, ոչ Մկրտութիւն, ոչ Հաղորդութիւն և ոչ թաղման կարգ եղան 23 տարի: Ահհայ կառավարութիւնն միջամուխ եղաւ այս գործի մէջ իւր հպատակներու իրաւունքը պաշտպանելու. բայց Ղիզվիթներն արդէլք եղան ամենայն բանի. և Ախիօլ չեպխսկոպոս՝ որ միացել էր Աստիւնայ հետ, գարձաւ բացարձակ տէր ամենայն

Հայոց եկեղեցեաց, հիւանդանոցների և ուրիշ եկամուտների : Այս պատճառաւ շատ Հայք ստիպեցան թողուլ այս երկիրը՝ և դադարել, մնացողներն ընկալան լատինականութիւն : Ահա տանի Հայերու թիւը հասնումը մինչև 40,000 դերգաստանի. իսկ Մէլիքսէթ տարով Հայոց եկեղեցուն այս անժողանալի հարուածը՝ զնաց Կամինից քաղաքը, ուր մեռաւ 31 տարի անարժան կաթողիկոսութենէ յետոյ :

Սահակ Գ եղբորորդի Մէլիքսէթի և նորա յաջորդ 1624 թ. ընկաւ Պարսիկ հարկապահանջներու ձեռքը. վասնորոյ փախաւ դէպ ի Պանքաղաքը, ուր մնաց հինգ տարի. և նորա անդ ընտրեցաւ Մալաթի Գ Ալենեցի 1629 թ. : Այս ժամանակում մեռել էր Շահ—Աբաս, և նորան յաջորդել էր նորա թոռն Շահսէֆի. Հայոց իշխանները հրաւիրեցին Մովսէսին յԱսպահան, և ստացան թագաւորէն հրովարտակ նորա հաստատութեան, միանդամացն և տարեկան հարկի ազատութեան, որով Աջմիածին ազատեցաւ պարտքէն, և Մովսէս դարձաւ իւր Աթոռը :

1630 թ. Սահակ լսելով Մովսէսի կաթողիկոսանալը, աշխատեց և ինքն վարել իւր իշխանութիւնը Օսմանեան տերութեան միջ, բայց չհաջողեց. վասնորոյ և ահամայ հրաժարեցաւ պատուէն՝ և կացաւ Աջմիածնում միարանից հաշվում մինչև մահը : Իսկ Մովսէս յետ այսորիկ յամին 1631 սկսաւ նորոգել Աջմիածնի շինութիւնքը, սահմանեց կարգ ու կանոն միարանից համար, շինեց դպրոց Յօհանավանքում, բարեկարգեց վանորայքը, և վախճանեցաւ երեք տարի և չորս ամիս Աթոռը կառավարելէն յետոյ :

Փէլեպոս Եղբակեցի այր սրբակեաց և խաղաղասէր, աշուկերա Մովսէսի, ընտրեցաւ Կաթողիկոս 1633 թ. և սկսաւ աւարտել Աջմիածնի թերի շինութիւնքը մնացած իւր նախորդէն : Ապա զնաց յԱսպահան՝ և յետ բերաւ սուրբ Առաքաւորէն Աջը Աջմիածին : Կորա ժամանակին մեծ անկարգութիւնք կային Կ. Պոլսում Պատրիարքական Աթոռի յաիշտակութեանց

պատճառաւ միմեանց ձեռքէն, ուստի Փիլիպպոս Աթոռղիկոս 1651 թ. ընկաւ ճանապարհ, և նախ զնաց յԱրուսազէմ, ուր տեսութիւն անելով Ասոյ Ներսէս Աթոռղիկոսի հետ, արար ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց վասն սիրոյ և բարեկարգութեան երկու ավոռնների, և սահմանեցին 13 կանոններ : Ապա 1652 թ. եկաւ Ա. Պօլիս և ազդու քարոզութեամբ բառնալով խռովութիւնը՝ հաստատեց սէր ու միարանութիւն, ազատեց եկեղեցիքը սարտքէն, և նստեցրեց նոր Պատրիարք ըլլ Յովհաննէս Մուղնեցին, և ինքն վերադարձաւ յԱջմիածին : 1654 թ. սկսաւ շինել Աջմիածնի հոյակապ զանգակատունը, բայց զեռ չաւարտած՝ վախճանեցաւ 22 տարի արժանաւոր դահակալութենէն յետոյ, և թաղեցաւ սուրբ Հովսիսիմէի եկեղեցում : Նորա անունը յիշատակումն Աջմիածին Պատարագում Առաքելաց քարոզի ժամանակ :

Յակոբ Ա Նոր—Ջուղայեցի ընտրեցաւ Աթոռղիկոս 1655 թ. էր առաքինի և խոհեմ. սա լրացրեց զանգակատան և այլ թերի մնացած շինութիւնքը : Հոյս արաւ պայծառացնել Հայրէն գրերով ապագրութիւնը Չորեցի Մատթէոս սարկաւազի ձեռքով, որ գնալով Ամսդէրտամ քաղաք Նիտիլանտիայի՝ ճարտար արհեստաւորներու ձեռքով վայելչացրեց գրերի դաղափարը կամ ձեւը, զոր յետոյ աւելի շքեղացրեց Ղուկաս Ա շաննդեցի :

Սորա օրօք ընկաւ շփոթ Ա. Պօլսի Պատրիարքական Աթոռի յափշտակութեան պատճառաւ, մինչև որ աշխարհականք և ս ձեռք բերին այն պատիւը Տէրակալ անունով, և պատճառ լինել թովմաս վարդապետ Բերիացու բանտարկութեան և մահուան :

Այն ժամանակներում 1656 թ. Լզիազար Լպիսկոպոս Անթափցի, որ երբեմն եղել էր Պատրիարք Ա. Պօլսի, կարգեցաւ Լարուսազէմում փոխանորդ Պատրիարքի. սա զննելով սուրբ Յակոբայ վանքի յիշատա արանաց մատեանը՝ դտաւ միկ այլաբանական գրուածք ինչ թաղած գանձի ոսկեոյ և արծաթի, զոր

Հանկրով ծածուկ՝ սկսաւ դէմ կանգնիլ Յոյներուն, որք կամենումէին սեպհականել իրանց Հայոց ուխտատեղիքը, և ապա նոյն դրամով ազատուելով զանազան վտանգներէ՝ և խելով Յունաց ձեռքէն սուրբ Յակոբայ վանքը՝ աշխատեց 1663 թ. ստանալ ոչ միայն Արուսաղէմի Պատրիարքութիւնը, այլ և Աթոզիկոսութեան պատիւ Տաճկաստանի Հայոց վերայ, և Ասոյ Խաչատուր Աթոզիկոսէն օծուեցաւ Բերիայում՝ Աթոզիկոս: Բայց Արուսաղէմի Աստուածատուր Պատրիարք Հալածեց Ազդիազարին, և թափառական շրջումը առանց տեղի:

Յակոբ Աթոզիկոս իմանալով զայս՝ զնաց ի Ա. Պօլսի 1666 թ. վերայնելու այս մեծ խռովութիւնը, Ազդիազար ստանալով տէրութենէն Հրովարտակ՝ զնաց ու նստաւ Արուսաղէմի Աթոռին. իսկ Յակոբ ազգի օգնականութեամբ ստացաւ նոր Հրովարտակ լինելու Աթոզիկոս Օսմանեան Հայոց՝ և Ազդիազարի ստաշած Հրովարտակի ոչնչութեան. վասնորոյ վերջնս հեռացաւ Արուսաղէմէն, և Յակոբ վերադարձաւ յԱջմիածին:

Յետ այսորիկ կրկին սաստիացաւ խռովութիւնն Ա. Պօլսի Պատրիարքական Աթոռի վերայ, զոր կաշառքով էին առնում, մինչև անգամ՝ աշխարհականք ևս. վասնորոյ Յակոբ կրկին զնաց ի Ա. Պօլսի 1678 թ. խաղաղութիւն ձգելու, և հրաւիրեց ևս զԱզդիազար. բայց մինչև նորա գալը՝ վախճանեցաւ Յակոբ 1680 թ. և թաղեցաւ ի Պէյօղլու, կացեալ Աթոզիկոս 25 տարի: Նորա մահէն յետոյ Աթոռն մնաց դատարկ երկու տարի, և ոչ զգրքնորեցին, որպէս զե երկպառակութիւն չծագի. ուստի Աջմիածնի միաբանութիւնը հրաւիրեց Ազդիազարը դալ և վարել իշխանութիւնը, և եկաւ 1682 թ.: Սա շինեց երեք փոքրիկ զանգակաաները Աջմիածնի վերայ, նոյնպէս բարձրացրեց հարաւային խորանը երեք աստիճաններով՝ և սեղան կանգնեց սուրբ Յովհաննէս Մկրտչի անունով. իսկ հիւսիսայինը բարձրացրեց եօթն աստիճաններով՝ և շինեց սեղան սուրբ Ատեփանոսի անունով, նաև մեծ կաթողիկէի ներքոյ ուղղադիժ շինել տուաւ հասարակ քարէ չորս սիւների վերայ կաթողիկէ, և նորա մէջ սեղան,

որ կոչվումէ Իջման փեղ, և ինն տարի կաթողիկոսութիւն անելն յետոյ Իջմիածնում՝ վախճանեցաւ 1690 թ. :

Նաևադեօ Լզեռացի յաջորդեց Լզեռաղարին 1690 թ. և խոտութեամբ վարուելու պատճառաւ ընկաւ Աթոռէն 1695 թ. և արսորեցաւ ի Սեան կղզին, նորա տեղը ընտրեցաւ Նոր—Ջուղայի Առաջնորդ Ստեփանոս, բայց կալանաւորեցաւ Երեւանու Սարդարէն՝ Նախապետի կուսակիցներու ջանքով, և բռնուեցաւ բանտի մէջ, ուր և մեռաւ. և Նախապետ նստաւ Աթոռին: Սա շինեց Վաղարշապատ զիւղի մօտ Շողակաւի կոչեցեալ եկեղեցին սուրբ Մարիանէ կուսի 1694 թ. և ինքն մեռաւ 1705 թ., տասնուհինգ տարի կաթողիկոսութենէ յետոյ :

18 դար.

Նախապետ Կաթողիկոսին յաջորդեց Ալէքսանդր Ջուղայեցի 1706 թ. ութն տարի: Ապա Ասորոս-Յասորոս Ահմատանցի 1715 թ. տասն տարի: Սա քանդեց Իջման Տեղի կաթողիկէն և շինեց մարմարաքարէ, նոյնպէս և Աւագ բեմի ճակատը, և ապա խոռվութեան պատճառաւ Պարսից բռնութենէ շրջումէր թափառական, ու մեռաւ յՕշական զեղում, և թաղեցաւ սուրբ Հռիփսիմի վանքում:

Կարապէտ Օկթթունցի՝ Արքեպիսկոպոս Վաղարշայի՝ ընտրեցաւ Կաթողիկոս և օծաւ Կ. Պօլսի մայր եկեղեցում 1725 թ., որ պատերազմերի պատճառաւ մնաց անդ, և ապա դարով յԻջմիածին՝ վախճանեցաւ իբր չորս տարի հայրապետութենէ յետոյ: Աորան յաջորդեց Եբրահիմ Բ Վանցի 1730 թ., հինգ տարի: Սա շինեց Իջմիածնի աւագ սեղանի աջ ու ձախ երկու սեղան, մին՝ սրբոց Յակոբեանց Առաքելոց անունով, և միւսն՝ Սուրբ Լուսաւորչի :

Եբրահիմ Գ Արեւացի՝ Առաջնորդ թէքիրտաղի՝ ընտրեցաւ Կաթողիկոս 1734 թ. սիրելի եղաւ թախմաղ — Ղուլի — Խանին, այն է՝ Նատիր — Շահին, և հրաւիրեցաւ նորանէն Պուղանի դաշար 1735 թ., օրհնել նորա սուրբ՝ և կապել նո-

բա մջքին, իբրև նշան թագաւորելու Հայոց վերայ, և մեռաւ երեք տարի զահակաութենէ յետոյ :

Ղաղար Ջահկեցի՝ Առաջնորդ Ռմիւննիայի՝ օծաւ Աթողիկոս 1738 թ. փոքր ժամանակէն յետոյ խոժոռուելով նորահետ Շահ—Մահմուտ խան՝ մասնեցաւ թահմաղ—Շահի ձեռքը, և մեծ զուսար տալով ազատեցաւ: Նոյնպիսի զրժտութիւն ընկաւ նորա և Աստապապայի Վթալի խանի մջքայց լաւ ծեծ կերաւ թահմաղ — շահէն, կողոպտեցաւ կայքէն և զրկեցաւ կաթողիկոսութենէ 1745 թ. Հինգ ամիս, և Շահի հրամանաւ Տեղապահ կարգեցաւ Գողթանի Առաջնորդ Յովհաննէս վարդապետ, բայց Ղաղար կրկին ձեռք բերաւ կաթողիկոսութիւնը՝ իւր եղբայր Յովսէփ քահանայի ջանքով, և գալով յԱջմիածին՝ անխնայ չարչարեց զՎթալի Վետրոս վարդապետը, և արտրեց ի Սեան: Հետոյ գժտութիւն ընկնելով միւս միարանից հետ՝ մասնեցաւ թահմաղ — շահի ձեռքը, և ընկաւ 5500 թուման տուգանքի ներքոյ, և մէկ մասը տուաւ՝ վաճառելով Աթոռի գանձը, իսկ մնացածի համար ուղարկեց վնց բեռն եկեղեցական զարդեր և անօթներ, և ինքն փախաւ յԱրդէրուժ. բայց Շահն վերադարձրեց այն կայքը, և նորա հրամանով տեղապահ ընտրեցին զՎթալի, որին համաձայնեցան և Ա. Պօլսեցիք: Ղաղար արտրեցաւ ի Սեան, և տասն ամէն յետոյ կրկին դարձաւ յԱջմիածին՝ ու Վթալի Վետրոս արտրեց ի Ջահուկ, ուր և մեռաւ. իսկ Ղաղար այս վերջին բռնութեան մջ ապրեցաւ երկու տարի ու կէս, որի կաթողիկոսութեան բոլոր տարիքն են տասն երեք: Սա շինեց հիւրանոց՝ որ կոչվումէ Ղաղարապատ. արաւ ինչ ինչ շինութեանց նորոգութիւնք, և շինեց Աթողիկոսաց ձմեռուան բնակարանը, որ ասվումէ Եփեսոս Լեանապի:

Ղաղարին յաջորդեց Ա. Պօլսի Պատրիարք Մեթա Մինեցին 1751 թ. իբր երկու տարի. յետոյ Սահակ Ապիսկոպոս ահագին կոչեցեալ, որ Հինգ տարի մնաց ի Ա. Պօլս և յԱրդէ-

րում, և չգնաց յԱջմիածին, և ոչ օծումն ընկալաւ, վասնորոյ ընտրեցաւ Յակօբ և՛. Շ ամսխեցի, և կացաւ չորս տարի:

Սէփօն Երեւանցի նստաւ կաթողիկոս 1763 թ. որ շնայելով ժամանակի դառնութեան և Եթոռի աղքատութեան՝ գործ դրաւ ամենայն ջանքը եկեղեցւոյ բարեկարգութեան և ազգի լուսաւորութեան համար: Նորա արած շինութեանց վերանորոգութիւնքն չենք բերում ի հաշիւ, այլ կաթողիկոսական պարտաւորութիւնքը եկեղեցական և ազգային պայծառութեան համար: Նա շինեց Աջմիածնում տպարան պատուական 1776 թ. հրատարակելով Եւրոպայէն արհեստագետներ, և տպել տուաւ եկեղեցական ամենատեսակ գրեանք, որով անհետացրեց կաթողիկատիպները: Այլ շատ ազգօգուտ գործեր ևս կանէր՝ եթէ մահն չէր կտրել նորա կեանքի թելը տասն և եօթներորդ տարում: Արան յաջորդեց Ղուկաս կարնեցի 1780 թ. և շատ շինութիւնք արաւ 10 տարի կաթողիկոսութեան մէջ, և վախճանեցաւ 1799 թ.:

19 դար.

Ղուկաս կաթողիկոսի մահէն յետոյ ընտրեցաւ Ռուսաստանի Առաջնորդ Յովսէփ Երբեպիսկոպոս Երկայնարագուկ Երդութեանց 1800 թ. և հաստատեցաւ Ռուսաց և Օսմանեան կայսերներու հրովարտակներով. որ դառով ի թփփիւղ՝ յանկարծամահ եղաւ 19 մարտի 1801 թ. որի մարմինը տարան յԱջմիածին՝ և թաղեցին Վայիտանէի վանքի դաւթում: Սա իւր առաջնորդութեան ժամանակ շինեց Եթտարխան քաղաքում եկեղեցի Պետրոս և Պօղոս Առաքելոց անունով: Յետոյ հիմնեց Վոն գետի մօտ 1780 թ. քաղաք՝ վերարնակեցնելով Ղլիմոն Հայ դաղթականները, և կոչեց Նոյ—Նախիջևան, շինելով և վեց եկեղեցիք, իսկ քաղաքի շրջակայքում հիմնեց հինգ Հայարնակ դիւրօրայք, և տէրութենէն ստացաւ նոցա համար առանձին արտօնութիւն և իրաւունք, որ դատաւորներն ու կառավարիչներն լինին Հայ ազգէ: Նմանապէս շինեց ուսումնա-

բան, նոյնպէս և Սուրբ Խաչ կոչեցեալ վանքը հետի քաղաքէն մէկ ժամով, զնեց և հաստատեց անդ Խաչարեանց տպարանը իսկ այժմ կայ անդործ:

Դասել Արքեպիսկոպոս՝ Տփլիսոյ Էնազէթ զիւղէն՝ միաբան Էջմիածնի՝ պատգամաւոր ուղարկուեցաւ ի Կ. Պօլիս, 1800 թ. Դանիէլ Պատրիարքը Կաթողիկոս ընտրելու համար, և յետ դառնալով յԷջմիածին օծաւ Կաթողիկոս 18 ապրիլ 1801 ամի՝ օգնականութեամբ Երեւանու Խանին. իսկ Դանիէլ հասնելով Բագրեանդ գաւառը՝ լսեց Դաւթի Կաթողիկոսանայը, և լինելով անձն խաղաղասէր՝ կամեցաւ հրաժարիլ առաջիկայ պաշտօնէն, սակայն նորա կուսակիցներն հարկադրանօք օծեցին զնա Կաթողիկոս Երեք — Խորան (Իւչքիլեւ) կոչեցեալ վանքում, և շատ տառապանք բաշեց, և արտօրեցաւ ի Մարազայ: Իսկ Դաւթի ընկաւ Աթոռէն 1807 թ. ու նստաւ միաբանից շարքում մի սենեակի մէջ մինչև իւր մահը հանդատութեամբ, և մեռաւ 1817 թ. իսկ Դանիէլ վարեց իշխանութիւնը մէկ տարի, ու վախճանեցաւ Երեւանի բերդում 1808 թ. ուր զնացել էր Խանի հրամանով Ռուսաց և Պարսից պաւերագմի ժամանակ, և յետոյ նորա մարմինը տարան յԷջմիածին՝ և թաղեցին զանդակատան հարաւային սիւնի մօտ:

Եւրէ՛՛ Արքեպիսկոպոս Աժտարխանի օծաւ Կաթողիկոս 1810 թ.: Սորա ժամանակ Աթոռն զրկած լինելով հարստութենէն Պարսից բռնութեամբ, և ինքն ևս զոյով առատաձեռն, ձգեց Աթոռը ծանր պարտքի ներքոյ, և չկարելով վճարել՝ հեռացաւ ի Ղարաբաղ 1821 թ. և անտի ի Հաղբատ և ի Տրփիս. և երբոր Ռուսք առան Երեւանը 1828 թ. Կաթողիկոսն վերադարձաւ յԷջմիածին. և զոյով ծերացեալ՝ պակասեցաւ աչքերի լոյսը, և տուաւ հրաժարական 1830 թ. քսան տարի կաթողիկոսութենէն յետոյ, ապրեցաւ այլ ևս հինգ տարի, և վախճանեալ թաղեցաւ միաբանից գերեզմանատան մէջ. ինչպէս կտակել էր ինքն, որի վերայ կայ շինած փոքրիկ մատուռ:

Փ

1831

Եփրեմ Կաթողիկոսի կենդանութեան ժամանակ՝ Կարբեցի Յովհաննէս Արքեպիսկոպոս ընտրեցաւ Կաթողիկոս 1831 թ. Էջմիածնայ միաբանութեան հաճութեամբ՝ և ոչ ազգային ժողովով : Սորա խնդրանքը գրեցաւ կարգադրութիւն յաղագս կառավարութեան Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան, զոր հաստատեց կայսրն ամենայն Ռուսաց ի 11 մարտի 1836 ամի, որի զօրութեամբ բացուեցան Սինօզն Էջմիածնի, վեց վիճակային Կոնստատոբոլայք, հոգևոր և վանքական կառավարութիւնք: Եւ տասնումէկ տարի զահակալութենէ յետոյ վախճանեցաւ 26 մարտի 1842 ամի: Սա տուաւ Էջմիածնայ պարտքը և մահուան ժամանակ տասն հազար մանէթ զրաւ արքունի բանկում յանուն Աթոռոյ: *Բարբաբե և ուրիշ:*

Ներէն Ե. Աշտարակեցի՝ Արքեպիսկոպոս Բեսարաբիայի, միաբան Էջմիածնի, կարգեցաւ Առաջնորդ Վրաստանի 1814 թ. բարեկարգեց եկեղեցիքը, սահմանեց մտանաններ ամենայն եկեղեցեաց մէջ գրելու ծնեալքը, պակեալքը և ննջեցեալքը, և երեցփոխաններ՝ որ մինչև նորա ժամանակ Աւագ Քահանայից ձեռքբրում էին եկեղեցական արդիւնքներն: Եփնեց հայկապ ուսումնարան 1822 թ. Հայկական դպրութեան և կրթոնի ուսումն առաջ տանելու նպատակով: Գնեց Կոնստանդնուպոլս և Կոնստանդնուպոլս ամբարանոցը, որ գտանուում է մերձ թիֆլիզ ք. և լինէ շինութեամբք: Եփնեց ուսումնարանի հանդէպ երեսուն և վեց միակարգ կրպակներ, և տասն սենեակներ, և Երևանսկի անուանեալ հրապարակում եռայարկ տուն: Զայս ամենայն շինեց թիֆլիզում եղած Էջմիածնի կալուածների արդիւնքով, ժողովրդեան նուիրատվութեամբ և պարտքով. բայց պարտքը տուաւ Կաթողիկոս ժամանակը Եկեղեցական գումարէն:

1826 թ. գնաց Ռուսաց զօրքի հետ, որպէս Առաջնորդ պատերազմի, Պարսից դէմ Երևանի վերայ, և 1828 թ. կարգեցաւ Առաջնորդ Ռուսաստանի Հայոց վերայ:

Մանգոս Խոջեանի գրած հոգ և ուրիշ:

Յովհաննէս Ը Կաթողիկոսի մահէն յետոյ ընդհանուր հաճութեամբ ազգին, ընտրեցաւ Կաթողիկոս 1843 թ. ի հասակի 82 ամաց. Ներսէս Կաթողիկոս համարեալ թէ վերջրեց ամենայն տեղի Առաջնորդները, կարգեց Կօնստանուպոլիսից և վեճակներն մէջ աշխարհական անդամներ և գործակատարներ, **I** Էջմիածնի Սինօղն չունէր անդամներու լրիւ թիւը, և փոխանակ ու թն անդամների երեք էին. բայց մահուան տարումն լրացրեց, և այն տէրութեան յաճախ ստիպմունքով: Նա ինչպէս վիճակի արդիւնքներն էր ստանում, նոյնպէս թիֆլիզու և Ելիսաւէտօպօլու եկեղեցեաց մայր գումարները ստացաւ, որոց ապացոյց են նորա ապահովագրական Կոնդակներն, Նա Կաթողիկոսութեան ժամանակ շինեց լճակ և անտառ: Գնեց թիֆլիզում ^{Կոնստանուպոլիսի} ուսումնարանի համար Փոստայի տունը: ուր այժմ է Դպրոցն: Նա շատ էր սիրում թիֆլիզը, և մեծ մասը այն տեղ էր անցուցանում: Վախճանեցաւ թիֆլիզում 13 փետրվարի 1857 ամի, որի մարմինը հանդիսաւոր յուղարկաւ որութեամբ տարան Էջմիածին, և թաղեցին Դանիէլ Կաթողիկոսի զերեզմանի մօտ:

Մարտի 1-էն երբեմն Պատրիարք Կ Պօլսի ընտրեցաւ Կաթողիկոս ազգային ժողովով 1858 թ. Նա աւելի զրահանութեամբ էր պարագում քան թէ Կաթողիկոսական պարտաւորութեամբ: Տուաւ Ներսիսեան Դպրոցին կանոնադրութիւն, որ սպաժ է 1866 թ: Բացեց ամենայն Արքեպիսկոպոսանիստ քաղաքներում և գաւառներում ծխական ուսումնարաններ արական և իգական սեռի: Սորա ժամանակ պատահեցաւ հերձուած, որ Երևանու Շահրիար զիւղացիք՝ իւրեանց կալուածատէր աստիճանաւոր Օհան Շահխաթունեանցէն կրելով նեղսակրութիւն՝ մինչև անգամ և եկեղեցին փակել, յայտնեցին Կաթողիկոսին. բայց նա ահանջ չգրաւ և արտաքսեց զնոսա անարգանօք խարուելով Շահխաթունեանցի պաշտպան Ղուկաս Արք-

եպիսկոպոս Տեղակալէն. և զիւղացիք յուսահատուած կրօնափոխ
 եղան: Մատթէոս վախճանեցաւ ութն տարի կաթողիկոսութենէ
 յետոյ 1865 թ. և ընդհանուր ազգի հաճութեամբ համբարձաւ
 Հայրապետական Աթոռին երբեմն Կ. Պօլսի Պատրիարք Գեորգ
 Դ. Կ. Պօլսեցի 1866 թ. որ վարումէ իշխանութիւնը ամենայն
 ազգասիրական հոգւով և եռանդեամբ յօգուտ և ի պայծա
 րութիւն եկեղեցւոյ սրբոյ:

§ 65. Եկեղեցական մատենագիրք:

15 դար.

1. Աստուծոյ վարդապետ Բարդուղէմ' ունի գանազան ճառեր և ոտանաւորներ:

2. Կիրակոս վարդապետ Երզնէացի' որի զրուածներն տպած են և կոչվումէ Ունեփորի: Սորան են տալի Արեւելի գերարքիւն շարականը:

3. Թովմոս վարդապետ Մեծաբէցի' զրեց Լանկթամուրի և իւր ժամանակի պատմութիւնը. և ինչ

4. Միքայիլ եպիսկոպոս Նազուշ' էր պատկերահան և երգարան:

5. Յովնանէս վարդապետ Թուրքուսնիցի' զրեց բազմօտնեան ոտանաւորներ միջակ և ստորին սճով՝ իբր մեկնութիւն Մինդոց գրքի:

Այս 15 դարում արդէն սկսվումէ աւելի ընկնիլ Հայկական գիրութիւնն:

16 դար.

1. Թադեոս վարդապետ Սեփասպոյցի' զրեց իւր ժամանակի անցքերը պատահած Հայաստանում:

2. Սարգիստիոս Կաթողիկոս Սալմասպոյցի' զրեց համառօտ մեկնութիւն Յովհաննու Աւետարանի:

3. Ղուկաս վարդապետ Կիւշեցի' զրեց ինչ ինչ տուճարական իրերի վերայ ոտանաւոր և արձակ:

4. Յովնանէս վարդապետ Ծորեցի' արար համառօտ պատմութիւն Հայաստանի անցքերի, Շահթահազի պատերազմը Օսմանցոց հետ:

17 դար.

1. Սեման վարդապետ Ջուղայեցի՝ յօրինեց Քերտիսնուսեան և Տրամբանուսեան:

2. Ստեփան վարդապետ Լեհաստանի Լէսպօլիս քաղաքէ, Հմուտ Լատին դպրութեան, թարգմանեց Լատիներէնէ Ղիոննսիոսի Արիսպագացւոյ զիրքը, Համբնոսեան, Հայելե վարդապետ Բարսեղի տղայի գրքերը:

3. Առաքել վարդապետ Ղապրեճեցի՝ գրեց Հայաստանի պատմական անգրքերը 1601 թ. մինչև 1662, և վերջումը դաւազանագիր Կաթողիկոսաց: Տպած է ի Կ. Պօլիս:

Այս 17 դարում կային ևս բաւականին մատենագիրք, որպէս Բարսեղ վարդապետ Ամրդօլու վանքի ուսուցիչ փիլիսոփայութեան: Ներսէս վարդապետ Մոկացի, Բեդլոս կոչեցեալ, ունի զանազան պատմական գրուածներ: Մելիքսեմ վարդապետ, ուսուցիչ Յոհանայ վանքի և ապա Էջմիածնի: Մարտիրոս և Ղուկաս վանանդեցիք, Երեմեա Էջմիածնեցի և այլն:

18 դար.

1 Աղեքսանդր Ա. Կաթողիկոս գրեց մի փոքրիկ զիրք ընդդէմ քաղկեդոնականաց և Պապին:

2. Մողղաթիս դպիր Կ. Պօլսեցի՝ գրեց իւր ժամանակի անցքը 1691 թ. մինչև 1715 թ.:

3. Հոննեո Երասողե՛ճացի՝ գրեց տնօրինական տեղեաց նրկարագրութիւնքը. տպած է յԵրուսաղէմ:

4. Յակոբ Նալեան Պապրեարք Կ. Պօլիս, ունի գրած մինչև քսանուչորս կտոր գրեանք. յորոց տպածներն. են՝ Չէն հոգեար, Վէճ հասարայ, Մելիսեան Նարեկի, Գոնջարան ճանուցման:

5. Բաղդասար դպիր Կ. Պօլսեցի՝ գրեց երկհատոր Քերտիսնուսեան Հայոց. տպած է ի Կ. Պօլիս:

6. Մեարայ երէց Պօլսեցի՝ արար Քերտիսնուսեան Հայերէն. տպած է անդ:

φ

Зачем же ты выходишь из дома, зачем
ходишь? Ты бы лучше сидела дома и читала
книжки, а не ходила по улицам и
встречала всякого рода людей. Ты бы
лучше сидела дома и читала книжки, а не
ходишь по улицам и встречаешь всякого
рода людей. Ты бы лучше сидела дома и
читала книжки, а не ходила по улицам
и встречаешь всякого рода людей. Ты бы
лучше сидела дома и читала книжки, а не
ходишь по улицам и встречаешь всякого
рода людей.

V

opuz atpūstān lūpūpūzēnū b atpūpūstānū tē
nūpūpūzēnū nūc, tūpūpūzēnū b atpūpūzēnū cēnū nūpūpūzēnū
nūpūpūzēnū tē, atpūpūzēnū pūcūstē tē nū pūzēnū tē
lūcūstē nū b tūpūpūzēnū atpūpūzēnū:

⊕

Uzuzūn b lēstūn sūpūzēnūcūzēnū qūzūpūzēnū nū b tūpūpūzēnū
nūpūpūzēnū dūzūzēnū tē tūpūpūzēnū tūpūpūzēnū
nūpūpūzēnū b nūpūpūzēnū nūpūpūzēnū. nūpūpūzēnū atpūpūzēnū
lēstūpūzēnū nūpūpūzēnū nūpūpūzēnū b nūpūpūzēnū lūcūzēnū, pūzēnū tē
atpūpūzēnū nūpūpūzēnū tūpūpūzēnū tūpūpūzēnū, nū pūzēnū b nūpūpūzēnū:

1/ pūzēnū tē nūpūpūzēnū nūpūpūzēnū nūpūpūzēnū b nūpūpūzēnū
nūpūpūzēnū nūpūpūzēnū nūpūpūzēnū, nūpūpūzēnū nūpūpūzēnū b
nūpūpūzēnū:

X

1/ nūc
nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc
nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc nūc

7. Սիւնն Կաթողիկոս Երեւանցի՝ գրեց ընդեմ Կաթողիկոսնուն զիրք՝ Պարսաւճոր անունով, և շատ երգեր, որք տպած են Էջմիածնում: Սա ուղղեց մեր Տօնարարը:

8. Մերքէ վարժարէս Պարսաւճանց Կ. Պօլսեցի՝ ունի շատ երգեր, որք տպած են ի Ս. Պետերբուրգ:

Այս 18 զարում առաւել շատացաւ մասննագրաց թիւր, և հայկական դպրութիւնն ստացաւ փոքր մի ուղղութիւն:

19 զար.

1. Պօլսո Պարսաւճի Ազրիանուպօլսեցի՝ յօրինեց Թանգարան երաբոս կոչեցեալ զիրքը, և Տեսաւելան սուրբ Գրոց Տաճկերէն լեզուով. որք տպած են Կ. Պօլսում:

2. Գրեգոր Գրեգ Գեշտաւճեան Կ. Պօլսեցի՝ ունի գանազան հեղինակութիւնք. յորոց տպածներն են՝ Լուսաշառիչ, որ է մեկնութիւն հաւատոյ Հանգանակին, Երեւոսոյ Բոսորան Լուսերէն, Ղրմաստնուելան ի շարտարան Քրիստոսի Տրամթոնուելան, Քերտնուելան. այլ աւագ որ Ֆիլոսօփիական Հայ լեզուի բառարանը կրակի կերակուր եղաւ:

3. Յօնն ոսոռ Գանանցեցի վարժապետ Զմիռնիայի, քաջ Հայկաբան և Աստուածարան և բանաստեղծ. նորա հեղինակութիւններէն տպած են՝ Արքեպիսկոպոսի Հայտարարի, և Երեւոյ ի սուրբ Խաչ:

4. Մերքէ Արքեպիսկոպոս Կարնեցի Առաջնորդ Աժտարխանի, էր նախ Լիբանանու միաբան, ապա վերադարձաւ Հայոց եկեղեցւոյ ծոցը. ուսեալ էր Եւրոպական լեզուներ, աշխատարեց Ծաղիկ Գրատնուան անունով զիրքը, որ տպած է:

5. Միշտիւ Արքեպիսկոպոս Սալանուելան Կ. Պօլսեցի, Մխիթարեան միաբանութենէ վերադարձեալ Հայոց եկեղեցւոյ ծոցը կարգեցաւ կարգավոր Լազարեանց Ճեմարանի ի Մոսկուայ, և դասատու Հայկաբանութեան և Աստուածբանութեան. ունի գանազան հեղինակութիւնք, յորոց տպածներն են՝ Կրօնա գրատնուան, Քերտնուան և Ճարտարանուանի:

բայց ամուսնու որ Խորոյ հասարակ իրկասիրութիւնը անյայտացել է:

6. Յարուսեան վարդապետ Ալմաշարեանի Աժտարխանցի տեսուչ Ներսիսեան Դպրոցի և ուսուցիչ Կրօնագիտութեան, թարգմանեց Ռուսերէնէ ի Հայ Քրիստոնէական վարդապետարանէն, որ տպած է թիֆլիզ և Եջմիածին. ունի և շատ երգեր:

7. Յովնանէն Եպիսկոպոս Ծանախանեանց, միաբան սրբոյ Եջմիածնի աշխատասիրեց երկհատոր գիրք՝ մակագրութեամբ՝ Սարսափութեան Եջմիածնի և հինգ գոտաւայն Արարարոյ, և տպած է անդ: Սոցա մէջ կան պատմութեան շատ աղբիւրներ:

8. Մարտիկոս Կառնոյի՝ Կ. Պօլսեցի՝ աշխատասիրեց 1. Խորհրդածութիւն նշանաց և շնորհաց՝ զրաբար, 2. նոյնը աշխարհաբար, 3. Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցոյ՝ աշխարհաբար, 4. Ծանօթութիւն ի վերայ մասանց սրբոց, աշխարհաբար, 5. Բարի մարդ և բարի քրիստոնեայ՝ աշխարհաբար, 6. Հերբումն զբանդիր վայրաբանութեանց ումանց մերազնեայ տկարամիտ անձանց՝ աշխարհաբար, 7. Հաստատութիւն ստուգութեան գաշանց թղթոյն (բայց անհաստատ)՝ աշխարհաբար, 8. Հայելի ասուածային շնորհաց՝ զրաբար, 9. Ուղեցոյց քրիստոնէական վարդապետութեան՝ զրաբար, 10. Դիտողութիւն սուետարանական ճշմարտութեան՝ զրաբար, 11. Ներածութիւն աստուածաբանական զիտելեաց՝ զրաբար: Այս ամենայն զրեանք տպած են ի Կ. Պօլիս. Մոսկուա, թիֆլիզ. Եջմիածին, և Երուզի: Եւ 12 Առաջնորդ Լուսաշաւիղ ճանապարհին, ձեռնագիր:

9. Կարապետ վարդապետ Ծանախանեանց, միաբան սրբոյ Եջմիածնի: Սա փախստական գնաց ի Փարիզ, ուր սովորեց Գաղղիերէն: Նորա աշխատասիրութիւնքն են 1. Արհեստ թուաբանութեան, 2 Տիեղերական աշխարհագրութիւն Արսենեւի. սոքա թարգմանութիւնք են Ռուսերէնէ: 3. Գծագրութիւն Եկեղեցական պատմութեան Իննովկենտայ, թարգմա-

նութիւնն Ռուսերէնէ, 5. Բնդարձակ Վրիստոնէական վարդապետութիւն, 6. Նկարագիր պատմութեանն Հայոց՝ Վաղղիերէն, կայ և սորա թարգմանութիւնը տպած Հայերէն ի Մարկոս Աղաբեկեանցէ, 7. Ղևոնդ պատմադիր, թարգմանեալ Վաղղիերէն, 8. Նղիսարեթ կամ Թշուառ գերդաստան աքսորեալ ի Սիրիոյ, 9. Ուղեորութիւն ի Սպիցբէրգ, թարգմանութիւնն Վաղղիերէնէ ի Հայ, 10. Բնդարձակ տեղագրութիւնն Հայաստանի՝ Վաղղիերէն, 11. Պատասխանիք ընդդէմ բողոքականաց:

10. Սարգիս Արքեպիսկոպոս Զաւլալեանց՝ Սանահնի վանքի միաբան, Առաջնորդ Ղարաբաղի, աշնատասիրեց երկհատոր զիրք անունով Ղանապարհաբարհեմեան ի Տէր Հայաստան. տպած է ի Թիֆլիզ: Նոցա մջ կան շատ պիտանի նիւթեր ազգային պատմութեան համար:

11. Սարգիս Վարդապետ Թեոփոբեան՝ Մխիթարեան միաբանութենէ: Սա և սորա հետ Վարդիէլ վարդապետ Այվազեան (այժմ՝ եպիսկոպոս) և Ամբրոսիոս վարդապետ Վալֆայեան էին կառավարիչ և ուսուցիչներ Մուրատեան Ղարթարանին ի Փարիզ, որք ստանալով 1854ին Մխիթարեան միաբանութենէ դաւանութեան թուղթ, զոր պիտի տային Պապին, որի մջ գրած էր և այս, թէ՛ «նոսմայ եկեղեցւոյ իշխանութենէ բաժանեալ Հայք՝ արտաքոյ են ճշմարիտ եկեղեցիէն Վրիստոսի», չեն ըստորագրում, վասնորոյ ընկան հալածանքի ներքոյ, և միացան կրկին իւրեանց մայր Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ, հետ: Այս անցքերը տպեցին Փարիզում՝ վերնագրով՝ Պատմութեանն և պատմութեան վերաբարձի երեց Վարդապետաց Հայոց: Յետոյ տպեցին և Յայրաբարհեմեան անցից Մոսբարեան վարժարանի: Այս միացաւ նոցա հետ և Խորէն վարդապետ (այժմ՝ եպիսկոպոս) Վալֆայեան, որ նոյնպէս տպեց իւր անցքը, որպէս յաւելուած առաջին վերադարձողներու:

Սարգիս վարդապետի հեղինակութիւնքն են, 1. Պատմութիւնն Մուրատեան վարժարանին՝ երեք հատոր, 2. Յաղագս

մարդկային իրաւանց և պարտուց, և 3. Յազազս զաստիարակութեան մանկանց: Սրբա տպած են ի Փարիզ:

12. Գաթբրէլ եպիսկոպոս Այլաղլեան՝ աշխատասիրեց՝ 1. Պատմութիւն Օսմանեան տէրութեան, երկհատոր, 2. Համառօտ պատմութիւն Ռուսաց, 3. Միջակ վարդապետարան կրթօնի, 4. Գասատեար մեկնութեան և արարողութեան սրբոյ Պատարաղի, աշխարհարար, 5. Ուրուաղիժ ողոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան, աշխարհարար, 6. Վալք Բըրիստոսի, տպած են ի Փարիզ, և 7. Թարգմանութիւն Արիւսովի առակների, տպեալ ի Թէոդոսիա:

13. Եֆրոսիոս լարդասպետ Գալֆայեան, աշխատասիրեց համառօտութիւն Աստուածաշունչ զրոց, տպած է ի Թէոդոսիա:


14. Խորէն եպիսկոպոս Գալֆայեան՝ թարգմանեց Ամարթինի ոտանաւորները, որք տպած են «Աոյեան աղանի», օրագրում, և աշխատասիրեց՝ Բասագիւր յանգաց Հայկական վեպի, տպեալ է ի Թէոդոսիա:

15. Մկրտիչ եպիսկոպոս Խրէեան Վանցի՝ շարադրել և տպել է երկու զիրք՝ Հրաւիրակ երկրին աւետեաց, և Հրաւիրակ Երարատեան, ոտանաւոր չափով:

16. Մաղխարոս Մանր Մանրեանց Ջմիւռնացի՝ ուսուցիչ կրօնի և լեզուի Հայոց ի Վաղարեանց Ճեմարանի, աշխատասիրեց՝ Հրահանգ Բրիստոնէական վարդապետութեան՝ հարուստ և համառօտ, Հաւատապատում, Բրիստոսապատում, որք են մանր ուսմունք հաւատոյ, որք տպած են ի Մոսկուա:

Այս 19 դարում, բաց ի Մխիթարեան միաբանութենէ, կան և ի մինջ շատ և շատ մատենադիրներ և ուսումնականներ՝ տեղեակ Աւրոսպական և արեւելեան լեզուաց, համարեա թէ աշխարհականներ:

Աղոթանից եկեղեցի



ԱՂՈՒԱՆԻՑ ԵԿԵՂԵՑԻ

§ 66. Հիմնադիր Գրիստոնէութեան :

Հիմնադիր քրիստոնէութեան Աղուանից աշխարհի համարվումէ Աղեշէ Առաքեալ՝ մին Վրիստոսի եօթանասուն աշակերաներէն: Սա եկաւ Թաղէոս Առաքեալի հետ ի Հայաստան, և նորա նահատակութենէ յետոյ գնաց կրկին յԱղուսաղեմ, և ձեռնադրեցաւ Յակոբոս Տեառնեղբօրէն՝ եպիսկոպոս: Ապա 52 թ. վերադառնալով Մազքթաց աշխարհը՝ սկսաւ քարոզել ի Զողայ (Շորայ), և շատ տեղեր տարածեց քրիստոնէութիւնը: Ապա անցնելով դէպ ի Ուտի նահանգի Սահառ քաղաքը երեք աշակերաններով՝ ընկան բարբարոսներու ձեռք, և աշակերաններէն մէկը նահատակեցաւ, իսկ երկուքը գնացին անօրէններու հետ. և Աղեշէ գնաց Վիս զիւղը, ուր շինեց եկեղեցի և մկրտեց ժողովուրդը. յետոյ Չարագան դաշտում ընկաւ հեթանոսներու ձեռքը, և քարկոծեցաւ 70 թ. ու ձգեցին զբի մջ, որ կոչի Բումէն: Յետ ժամանակաց նորա մարմինը տարան Զւրվշտիկ զիւղը, և ամփոփեցին, որի վերայ Աղուանից Վաչակիան Թագաւոր շինեց եկեղեցի, իսկ նահատակութեան տեղը կանգնեցրեց սիւն:

§ 67. Տարածումն Գրիստոնէութեան:

Սուրբ Աղեշէի մահէն յետոյ դադարումէ քրիստոնէութիւնըն Աղուանից աշխարհում, և չորրորդ դարու սկզբում Ուանայր Թագաւոր իւր նախարարներով և զօրքով զալիս է ի Հայաստան, ընդունումն սուրբ հաւատը Առասաղեցի քարոզութեամբ, մկրտվումն, և վերադառնալով յԱղուանստան՝ քանդումն կռատունները, հաստատումն եկեղեցիք, և ամենայն տեղ տարածվումէ քրիստոնէութիւնն:

Ուսնայրի մահէն յետոյ թուլանումէ հաւատը, վասնորոյ ոմանք բարեպաշտ իշխանք իննդումեն Տրդատ թագաւորէն մէկ եպիսկոպոս սուրբ Առասաւորչի ցեղէն. Ալբրթանէս Հայրապետ՝ Թագաւորի առջարկութեամբ ձեռնադրելով իւր որդի Գրիգորիսը 18 կամ 20 տարեկան հասակում, ուղարկումէ զնա Տրդատ Ազունից աշխարհը Սանատրուկ Արշակունի իշխանի հետ՝ որպէս պահապան պատանի Աթոզեկոսի. որ թեպէտ բարեկարգումէ եկեղեցիքը, և քարոզումը աստուածային բանը, բայց Մաքուլթները (Կիւրեցիք) պարսպելով աւաղակութեամբ՝ հաճոյ չէր նոցա քարոզութիւնը, կամենումէին սպանել զնա, սակայն երկնչումին Տրդատէն. ուստի նորա մահէն յետոյ Սանատրուկ հաճեցնելու համար նոցա սիրտը, որ ցանկանումը թագաւորութեան, կապել է տալիս սուրբ Գրիգորիսին մէկ ամեհի ձիու պոչէն, զոր քարշելով Ատանեան դաշտումը Ասսպից ծովի ափը, Գարբանդի մօտ մաս մաս է լինում նորա մարմինը, և սուրբ մասունքները ժողովելով նորա սարկաւազներն՝ տանումեն Փոքր Արևիք (Ղարաբաղ) և թաղումեն փոքր Հարանդ (Ղարանդ) գաւառի Ամարաս զիւղում՝ եկեղեցւոյ հիւսիսային որմի ներքոյ. իսկ 489 թ. յայտնվումէ սուրբ նշխարները, և Ալաչական Թագաւոր շնեց եկեղեցի նորա վերայ :

Սուրբ Գրիգորին յաջորդեց Շուփհաղիշու եպիսկոպոս, և ապա ինն անձինք, յետոյ Արեմիա, որի ժամանակ դտաւ սուրբ Մեսրոպ Ազունից լեզուի զիրը, և Արեմիա եպիսկոպոսապետ թարգմանեց Աստուածաշունչ զիրքը Ասորի լեզուէն :

§ 68. Ալաչական Թագաւոր :

Ալաչական Թագաւոր, որ Պերոզե ժամանակ ուրացել էր հաւատը, և մոզութեան օրէնքն էր տարածել Ազունից աշխարհում, մեծ հողօրի և տիրութեան մէջ էր ընկղմած իւր ուրացութեան պատճառաւ, և երբոր Աղարշ թագաւորեց 483 թ. և քրիստոնէութեան ազատութիւն տուաւ, այն ժամանակ Ալաչական մարքեց աշխարհը կրակապաշտութենէ, հալածեց մն-

զերը, ժողով գումարեց Պարտաւ քաղաքում, և հաստատեց քան կանոններ եկեղեցականաց և աշխարհականաց բարեկարգութեան համար : Նա վերայրեց մատնահատութեան ազանդը, որ էր սատանայական և զազանական գործ ըստ հին հեթանոսական սովորութեան՝ զոհելով դեւերուն աղայք, զոր ջնջեց միանգամայն, և նոցա որդիքը դրաւ ուսումնարանների մէջ՝ սովորել քրիստոնէական ուսումն, բարեպաշտութիւն և մարդավարութիւն :

§ 69. Կաթողիկոսունք Ադուանից :

Լէրեմիա Կաթողիկոսէն յետոյ չին յիշվում նորա յաջորդներն 130 տարի միջոցում, և ապա 552 թ. նստաւ տէր Աբաս, որ հալածեց Նեստորականները և Քաղկեդոնականները : Սորան յաջորդեցին վեց անձինք, և յետոյ տէր Ներսէս՝ կոչեցեալն Բակուր՝ 690 թ. որ ընդունելով Քաղկեդոնի ժողովը և նորա հետ Աղուանից տիկինն՝ աշխատումին տարածել . բայց Լեղիա Կաթողիկոս ամենայն շայտ ազդարարութեամբ կպիսկոպոսաց և ոմանց իշխանաց երեք անգամ թուղթ դրեց Ներսէսին հեռանալ այնպիսի գործէ, բայց ոչինչ չահեցաւ . ուստի իմաց արաւ Ամիրապետին՝ թէ նա Յունաց կողմն է, և նա բռնել տուաւ զՆերսէսն և տիկինը . բայց Ներսէս մեռաւ կօթն օրէն յետոյ կապանքի մէջ : Նորան յաջորդեցին քսան և չորս անձինք մինչև Մովսէս, կամ 994 թ. :

Մովսէսէն յետոյ նստեցան կօթն Կաթողիկոսք, ապա Բըժդէն, որ թողաւ կարգը և ամուսնացաւ . յետոյ Ներսէս Բ. սորան յաջորդեցին Ստեփանոս Գ., որ դաաւ շումկլայի ժողովում . ապա Յովհաննէս Զ., և յետոյ Ներսէս Գ. 1235 թ. սորա ժամանակ աւարտեց շասան Զարալ Գանձասարի վանքի շինութիւնը 1240ին : Ներսէսին յաջորդեցին տասնուվեց անձինք, ապա Սարգիս Ե. Գլաղեցի . սա զնեց զիւղորայք Գանձասարի վանքի համար . յետոյ Գրիգոր Գ. 1515 թ. որ ուրացաւ հաւատը, և նստաւ Ղաւթի թ. Արջաձորեցի, զոր

Խաչենեցիք կախեցին Վանձասարի զանգակատանէն, և նստաւ Փիլիպպոս Պուսեցի 1563 թ., որին յաջորդումն տասնուհինգ Վաթողիկոսք մինչև 1810 թ. և վերջին ընումէ Սարգիս Բ Վանձասարցի շասան — Ջալալեանց ազգէն, որ օգնականութեամբ Վանձակու Ջալաատ — Խանին և Ջրաբերդի տիրող իշխան Մէլիք Մէջլումին Մէլիք շախիջանեան՝ օծաւ Վաթողիկոս ի Վեանջա 1794 թ. Արմէօն Ե Ամարասի Վաթողիկոսի կենդանութեան ժամանակ: Սարգիս Վաթողիկոս վարեց իշխանութիւնը մինչև 1815 թ. և նոյն թուին Լջմիածնի Եթոռըն օգնականութեամբ Ռուսաց տէրութեան բոլորովին վերացրեց Եղուանից Վաթողիկոսութիւնը՝ տալով նորան միտրապօլտութեան պատիւ, այնուհետև ստորադրումը Երթեպիսկոպոս, և վախճանեցաւ 1828 թ.: Եւ այսպէս Եղուանից վիճակն միացաւ Լջմիածնի վիճակի հետ և եղաւ մի հօտ մի շովուապետի կառավարութեան ներքոյ :

Եղուանից Վաթողիկոսաց անունները աւելորդ համարեցինք յիշատակել մի առ մի. ըստ որում՝ ոչ արժանի յիշատակութեան դորձեր ունին, և ոչ օրինաւոր ժամանակագրական թիւ կայ, և վիճակն ևս է մի Երթեպիսկոպոսի թիւ. բայց ցանկացողն կարէ գտանել Շահխաթունեանց եպիսկոպոսի Սոբրաբրանին Լջմիածնի երկրորդ հատորի մէջ, և մեր Եկեղեցական երեք հատոր Պատմութեան մէջ. իսկ թշուառութիւնքը և հալածանքը կրեցին զողջես թէ շայաստանի հետ :

Վ Ե Ր Ջ

ՅԱՆԿ ՅՕԴՈՒԱՄՈՑ ԳՐՈՅԱԿ

Յօ7.

Նուէր

1. Հիմնարկութիւն քրիստոնէական եկեղեցւոյ
2. Քրիստոնէութեան տարածումն Երուսաղէմում
3. Եկեղեցին բաղկացած Հրէաներէն Պաղեստինայի և Սիրիայի մէջ
4. Պօղոսի դարձն
5. Ատուածային յայտնութիւնն Հեթանոսները կոչելու համար
6. Եկեղեցին բաղկացած Հեթանոսներէն Վեսարիայում
7. Եկեղեցին Հեթանոսներէն Անտիոքում
8. Պօղոս Առաքելայի հաստատած եկեղեցիքն
9. Միւս Առաքելոց հիմնած եկեղեցիքն
10. Երուսաղէմի վերջին կործանումն, Հրէից անկումն
11. Քրիստոնէական եկեղեցւոյ հայածումն Հրէաներէն
12. Հեթանոսաց հայածումնրի պատճառներն
13. Հայածումն Հեթանոսներէն
14. Խոռոմիւթիւն եկեղեցւոյ աղանդաւորներէն
15. Բաշանայապետութիւն եկեղեցւոյ
16. Սրբազան խորհուրդներ.—եկեղեցական ծէսեր
17. Հաւատոյ ուսումն
18. Առաջին քրիստոնէից վարքն
19. Անապատական կեանք

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՅ

20. Հայաստանի առաջին լուսաւորութիւնն և անկումն
21. Թշուառութիւն եկեղեցւոյ Հայոց
22. Անապատական կեանք
23. Ատուածաբանութեան տեղեր
24. Եպիսկոպոսաց յաջորդութիւն
25. Հայաստանի երկրորդ լուսաւորութիւնն, Եկեղեցւոյ աճիլն և ծաղկիլն
26. Սուրբ Գրիգորի ձեռնադրութիւնն, Տրդատի և Հայաստանի մկրտութիւնն, Եկեղեցւոյ բարեկարգութիւնն
27. Սուրբ Լուսաւորչի յաջորդներն
28. Եկեղեցական մատենադիրք
29. Վիճակ եկեղեցւոյ Հայոց
30. Ներքին հանգամանք եկեղեցւոյ.—Ազգային ժողովներ
31. Եկեղեցւոյ պաշտպաններ և նորա թշուառութիւնը 5րդ դարում
32. Թշուառութիւն եկեղեցւոյ 6րդ դարում
33. Թշուառութիւն և նուազումն եկեղեցւոյ 7րդ դարում

34. Թշուառութիւն Եկեղեցւոյ 8 դ դարում :
 35. Թշուառութիւն Եկեղեցւոյ 9 դ դարում :
 36. Արժանաշիշատակ անձինք 5 դարէն—8 դարը :
 37. Եկեղեցական մատենագիրք 5 դ դարէն—9 դարը :
 38. Վարդապետութիւն Հաւատոյ :
 39. Հերձուած :
 40. Ժողով Վաղարշապատու Ե :
 41. Ժողով Աշտիշատու Բ :
 42. Ժողով Աշտիշատու Գ :
 43. Ժողով Շահապիլանու Ա :
 44. Ժողով Վաղարշապատու Զ :
 45. Ժողով Դրւնայ Բ :
 46. Ժողով Դրւնայ Ե :
 47. Ժողով Դրւնայ Է :
 48. Ժողով Պարտաւի Բ :
 49. Յայտնութիւն Գաստառակին Քրիստոսի :
 50. Յայտնութիւն Վարապայ սուրբ Նշանին :
 51. Վաթողիկոսուք Հայոց 5 դ դարէն—9 դ դարը :
 52. Վիճակ Եկեղեցւոյ Հայոց :—Բաղրատունեաց ժամանակ :
 53. Ռուբինեանց ժամանակ :—Ունիթոռներ :
 54. Արժանաշիշատակ անձինք 9 դ դարէն—12 դ դարը :
 55. Պատմութիւն միարանական ինդրոյ Յունաց և Հայոց մէջ :
 56. Եկեղեցական մատենագիրք 10 դարէն—14 դարը :
 57. Վաթողիկոսուք Հայոց 10 դարէն—14 դարը :
 58. Թոնդրակեցւոց աղանդ :
 59. Ժողով Սոյ Բ :
 60. Ժողով Սոյ Գ :
 61. Վաթողիկոսք և վիճակ Եկեղեցւոյ Հայոց 15 դար :
 62. 16 և 17 դար :
 63. 18 դար :
 64. 19 դար :
 65. Եկեղեցական մատենագիրք 15 դարէն—19 դարը :

ԱԶՈՒԱՆՒՅ ԵՎԵՂԵՑԻ.

66. Հիմնադիր Քրիստոնէութեան :
 67. Տարածումն Քրիստոնէութեան :
 68. Վաչակն Քաղաք :
 69. Վաթողիկոսուք Աղուանից :

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԵՐ. ՏՂ. ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
1 10 բանն . . .	Բանն
2 9 Յեթանոսաց . . .	Հեթանոսաց.
— 18 Սիրայի . . .	Սիրիայի.
— 24 Եկեղեցի. . .	Եկեղեցի.
6 28 Ի քրիստոս . . .	Ի Քրիստոս
7 2 տիրոջ . . .	Տիրոջ
9 3 Գնաստիկեանց . . .	Գնոստիկեանց
— 26 քահանայու թիւնն . . .	քահանայակետու թիւնն.
11 1 սորանէն . . .	սորամէն
13 9 պատուէրով . . .	պատուէրով
— 26 յայտնելու . . .	յարգելու
16 16 Գաղենթս . . .	Գաղինոս
22 6 357 թ. . .	257 թ.
— 13 Խր նորա Հայրն . . .	Խր Հայրն
25 14 Լուսաւորչին . . .	Լուսաւորչի
26 14 չգնաց . . .	չգնաց
27 15 մէջ Լուսաւորչաց . . .	մէջ կնքած Լուսաւորչաց
29 12 1359 . . .	1349
— 13 2Գ . . .	2Գ
39 24 Կալմ . . .	Կալմ
45 23 354 . . .	454
47 17 որիմէն . . .	որիմէն
50 25 Յովհաննէս Օձնեցի . . .	Յովհաննէս Օձնեցի
52 20 ուսանում և քահանայք . . .	ուսանում, քահանայք
58 7 դասընկերքը . . .	դասընկերքը
54 26 Յետուայ. . .	Յետուայ և
56 2 Խր . . .	մեր
57 8 արեամբ . . .	երկուքն արեամբ
61 10 Խրստում . . .	Խոսում

65	6	և մոյնել զործածութեան մէջ .
66	7	զրեց խնդրանօք զրեց .
—	14	Մորափորցի Չորափորցի
69	22	Թէղդորոսի Տարսօնեցւոյ
71	28	Սուրբ Աստուածածնի Սուրբ Աստուածի
74	5	Մաղկոցն Մաղկոան
75	21	Մորափորցի 667 Թ. քսան
79	31)	Չորափորցի 677 Թ. տասն
	32)	ԳԳ՝աճընկէց Գաղիկ
		32) թագաւորէն Գաճընկէց Գաղիկ թագաւորին
—	32	ազգը ազգը դարձնել,
83	3	Բշրաֆ Աշրաֆ
87	32	Բննեկտիկտոս Բննեղիկտոս
88	2	գերաբսի գերաբրիստոսի
89	17	905 908
91	2	7000 4000
—	14	ներկանումեր ներկայանումեր
97	22	Պատրիարքին Պատրիարքն
104	25	1337 1387
108	19	Էլլածի Էլլանի
111	6	խնդրեց թագաւորէն խնդրեց Աւոն թագաւորէն
114	12	1362 1462
121	14	Օսմանեան Հայոց ամենայն Հայոց
124	9	1776 Թ. 1771 Թ. և զործարան թղթաշինու-
		թեան 1776 Թ.
—	15	10 19

3953

[Handwritten scribble]

« Ազգային գրադարան



NL0030948

